9147.925)
Ut-87

JEAN

ՏԿՀ-արխ-144-2-1-1

ԳՐԱԴԱՐԱՆ ԱՐՄԵՆԱԿԱՆ ...
ԻՍՏԱՆԲՈՒԼ
ISTANBUL

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն Ա Խ Ն Ե Ա Յ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ

1922

P. BALENTZ
LIBRAIRE
233, Faubg St-Martin, PARIS

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ


Ա Ր Ի Ս Տ Ա Կ Ե Ս Ի Ց

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻՈՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

9355
LAS
1901
Ormanian



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

ՅԱՄԻ 1901 Ռ.Ց.

5614-2011

ՋԵԿՈՒՑՈՒՄՆ

Ա ՏԵՆԱԳԻՐՍ պղծերպակեկաց պատմիչ յընդ-
միջել մեսսանեերորդ դարուն, ծնեալ ի Լատա-
վերտ ասանկ առ երի Արծնոյ։ Սկսանկ զպատ-
մութիւնն ի թուականէն Քրիստոսի 989, յորում
թագաւորէր ի Հայս Գագիկ Բագրատունի մակ-
անուանեալն Շահնշահ, և զոյ հասանէ մինչև յամն
1071։ Գլխաւոր նպատակ պատմագրիս է ստորա-
գրել զաղէտալի և զարհուրելի աւերումն մարդա-
շատ Անի մայրաքաղաքին որ ի սահմանս Շիրա-
կայ, զոր արար Ալփասլան երկրորդ թագաւոր
Պարսից յամին 1064։

Ոճ մատենագրիս է քաջ հայկաբան. սակայն են
ի նմա զարձուածք ինչ չարամանութեան թերի
յուղղագաւութենէ. թէպէտ այդ մարթ է պատա-
հել բազում մասամբք յանհմտութենէ օրինակա-
գրաց։ Քանզի ի բազդաւորութեան օրինակացն էին
ի ձեռս մեր օրինակք չորք անթուականք նօտրա-
գիրք, զորձք՝ որպէս յայտնի ցուցանի յեղանա-
կէ զարձուածոյ գրչացն, ի վերջ ուղիւատանեերորդ
դարուն գրեալք, և կամ ի սկիզբն առաջիկայ ին-
նեատանեերորդիս։ Եւ յաւուրս տպագրութեան ե-
հաս ի ձեռս մեր միւս այլ ձեռագիր գրեալ ի
թուին 1825, յոյժ նուազ զանազանեալ յայլոցն
մանկամբք և սխալք լեալ։

ի վարդապետութենեն յայտնէ զանձն մատե-
նագիրս դոլ այր ներկուս խնաստից աստուածա-
շունչ գրոց՝ յաճախ վերծանութեամբ ի մխիթա-
րութեն դառնացեալ մտացն յայնպիսի տառապա-
պին Յոբեանակս։ Որոյ և այնչափ են քաղցրացեալ
միտք յիմաստս սուրբ գրոց, զի առ ի զամենայն
պատահարս աշխարհի առ Աստուած վերաբե-
րել, որպէս և է իսկ ճշմարտիւ, վառեալ ե-
ռանդ նորա անցանէ ըստ չափ. և զամենայն զբան
իւր ի կամեն հաստատել բանիւք աստուածաշունչ
սուրբ գրոց՝ է զի կորուսանէ և զկարգ վիպասանու-
թեանն։ Սակայն և այնպէս խոստովանելի է յոյժ
նպաստաւոր դոլ մատենիս որոց կամիցեն աստ-
ղագոյն ինչ պատմագրել յաղագս անցելոցն ան-
ցելոց զայնու ժամանակաւ ի Հայս յերեսաց ան-
ընդհատ արշաւանաց Պարսից, Հագարացւոց
և արևելեան կայսերաց. զորոց պատմեալքն ի
մատենիս թերևս նոր ինն լոյս տային և օտար-
ազգի պատմագրաց ժամանակիս առ հին անցելոցն
ճշգրտագոյն համաւթիւն։

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ժամանեցին մեզ աւուրք չարչարանաց, և պահն զմեզ նեղութիւնք անհնարինք քանզի լցեալ ղեղաւ[1] չափ մեզաց մերոց, և ել ազազակ մեր առ Աստուծոյ. ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր, և երկիր լցաւ յանօրէնութենէ. արդարութիւնն նուազեաց, և անառակութիւնն յաճախեաց, ժողովուրդ և քահանայ սուեաց Աստուծոյ: Որոյ ազազաւ ազդք օտարածնաց օտարոյսին զմեզ և բնակութենէս մերմէ: Եւ դարձան վաթ մեր յապականութիւն, չունչ ի մեզ ոչ ինաց, և կորեաք ի հասման յուսոյ մերոյ. զոքացաւ մահ և եկաւ, և դժուխք չատ ասել ոչ կամեցան. ամենեցուն յարձակեցան ի մեզ ձեռք, և յանպման[2] յաւուրս մեր ժամանակ ոչ ձանեաւ զինաւորդս պատուհասին վճարմամբ անցելոց: Յաղորդք ի յաղորդաց փոխանակեցին, և նուազեաց արդիւն արծարծիչ հնչոյ կենդանութեան. հասաստանք յաշխարհի և պանդխտութեան իւրեանց պանդխտեցան երկրորդ անգամ, և եղեն վաճառանդիք ի ձեռանէ պանդխտաց ապստամբաց: Ի սրբելեաց քակտեալք՝ զորս ոչ աւր աստակեաց,

1. Յօրինակի յիսուս Լցաւ զեղաւ և յայլսւս զեղոս:

2. Ամենայն օրինակ յանպման ասեն. Ոչ ինչ յանկարծական:

ցրուեցան զօրէն աստեղաց մերկական կոչեցեալոց։ Յոր յաւուրս մեր զարթեան պատերազմունք ի չորից կողմանց· յարևելից աւր, յարևմտից սպանուածն, ի հիւսիսոյ հուր և ի հարաւոյ մահ. բարձան ուրախութիւնք յերկրէ, լռեցին ձայնք քնարաց, լռեցին բոմբիւնք թմբկաց, բարձրացան աղաղակք լալեաց։ Եւ այսոքիկ այսքան. բայց ժամ է[1] մեզ ի գլուխ պատմութեանն ընթանալ, և առաւ ակիզբն առնել որպէս զի գիւրացան լիցի մեզ բանս։

1. Մի օրին. ժամ եղև։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԻՍՏԱԿԵՍԱՅ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻՈՑ

ՎԱՄՆ ԱՆՑԻՑՆ ԱՆՑԵԼՈՑ Ի ՅԱՅԼԱՍԵՒՆ ԱԶԳԱՅ
ՈՐՔ ՇՈՒՐՋ ԶՄԵՕՔ ԵՆ

ԳԼՈՒԽ Ա.

Ացք ընդ աշխարհս Հայոց։

Եւ եղև յետ մահուան Դաւթի կիւրապաղատի, որ էր այր հզօր և աշխարհաշէն, մեծապարգև և աղքատասէր, որ էր արդարև սահմանն խաղաղութեան. քանզի յաւուրս նորա հանդչէր աստուածային մարդ, ըստ մարգարէութեանն, ընդ որթով իւրով և ընդ թզենեաւ. իսկ զկնի մահուան նորա խաղայ ինքնակալ թագաւորն Հոռոմոց վասիլն՝ ի քան և հինգերորդ ամի թագաւորութեան իւրոյ ձանր գինու. և դէմ եղեալ գայ հասանէ յԵկեղեաց գաւառ, զանց արարեալ զբազում օթևանօք։ Եւ ընդառաջ ընթանան նմա ազատագունդ զօրքն Տայոց, և առաստաւր պարգեւօք [1] մեծարեալ ի նմանէ իւրաքանչիւր ոք ըստ արժանեաց՝ յիշխանութիւն, ի պատիւ, ի գահ ժամանեալ՝ ցնծացեալ բերկրեցան յոյժ։ Բայց կատարեցաւ առ նոսա մարգարէութիւն հոգեբոզին Դաւթի, թէ « ընդ առաւօտս սրսէս զա-

1. Մի օրինակ պարգևեալ։

լարի բուսցին, ընդ առաւօտս որպէս գալարի զուարճացին և ծաղկեսցին. ընդ երեկոյս թառչամեսցին և անկցին»։ Քանզի թագաւորն անցեալ յաշխարհն Ազօրի՝ մերձ յամուրն որ Հաւճլէն կոչի, երեկօթս առնէ։ Եւ ոչ գիտեմ յորպիսի պատճառանաց ընդ միմեանս անկեալ արևմտեան զօրն, որ կոչի Ըռուզք, և ազատագունդն, և ի նմին տեղւոջ մեռան յազատացն երեսուն այր և յոյժ պատուաւորացն։ Եւ այս ոչ եթէ առաւիր և ի զուր անց ընդ նոսա, այլ քանզի նոքա յաւուր մեծի հինգշաբաթին զեղ մահու խառնեալ ի խորհուրդ պատարագին արբուցին նմա, և հեղձամահ արարեալ զերանելի անձն՝ բարձին ի կենացս, ձանձրացեալ կենօք նորա, վասն առակիկայ խոստմանցն՝ որ ի թագաւորէն ակն ունէին. վասն այնորիկ Աստուծոյ արդարատաւ իրաւունքն՝ ըստ գործոց նոցա հատոյց նոցա։ Եւ յայնմ օրէ և այր ոչ յամրոզեցաւ երբէք ազատ ի տանէ Տայոց ելանել, եթէ յերկարեաց զկեանս իւր, այլ վաղվաղուպ մահու վճարեցան և բարձան ի կենաց։ Կըզտամբեալ յանդիմանէ զնոսա բարձրն Եսայիաս՝ յորս ասէ. «Փոխանակ զի ոչ ախորժեաց ժողովուրդդ այդ զլուրն Սելովմայ որ զնայր խաղաղ, այլ կամեցան առնել իւրեանց թագաւոր զՀռոամիմ և զորդին Տաբեելայ, վասն այնորիկ այսպէս ասէ տէր. Ես ածեմ ի վերայ ձեր զլուր գետոյն զհզօրն և զյորդն, զարքային ասորեստանեայց և զփառս նորա»։ Եւ այսքիկ այսքան։

Եւ ի նմին տեղւոջ գայ հանդիպի թագաւորն Ափխազաց Բագարատ, և հայր նորա Գուրգեն, և մեծապէս փառաւորէ զնոսա ինքնակալ թագաւորն։ Եւ տայ Բագարատայ զպատիւ կիւրապաղատութեան, և հօր նորա զՄագխարոսութեան, և արձակէ զնոսա խաղաղութեամբ. և ինքն երթեալ անցանէ ընդ Հարբ և ընդ Մանազկերտ. և վազաւեալ[1] գառնայ ի վերայ Բագրեւանդայ և գայ ի

1 Երկու օրին. վազ առեալ։ Եւ յայլսում գետոյ առեալ։

քաղաքն Ուխտեաց, և սիրէ բազում գաւառաց և բերդից և քաղաքից: Եւ կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և գաւառս և վերակացուս. և ինքն դառնայ զճանապարհս իւր խաղաղութեամբ, և հասանէ ի թագաւորական քաղաքն իւր ի Կաճանդնուպոլիս: Այս եղև ի չորեքհարիւր յիսուն թուականին և դադարեալ երկիրն հանգեաւ ամս չորեքտասան:

Եւ ինքն թագաւորն երթեալ վճարէ զհոգս աբևմտական կողմանն. քանզի սիրէ Բուլղարաց աշխարհին, գաւառաց և քաղաքաց նոցա, զոր ի բազում ժամանակաց հետէ ի սկզբան թագաւորութեան իւրոյ՝ անհանգիստ պատերազմօք ոչ կարաց ընդ ձեռամբ առնել. իսկ այժմ պատերազմեցաւ նմա ի դէպ ելանէին: Քանզի որ առնէր զաշխարհն՝ յաղթողն ի պատերազմունս, վախճանեցաւ իւրային մահուամբ, իսկ որդիք նորա՝ քանզի ոչ հնազանդեցան միմեանց, անձնատուր եղեալ ելին առ թագաւորն. քանզի «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ ոչ կարէ կեալ»: Այս է Բուլղարաց երկրի առնլոյն օրինակ: Իսկ թագաւորն զորդիս Բուլղարաց բռնակալին հանեալ ի ժառանգութենէ իւրեանց զարմօք և ապգաւ, և տայ նոցա տեղիս յաշխարհն Հռոմոց. իսկ զմօրն աշխարհին՝ յաղթողն ի պատերազմունս, վախճանեցաւ իւրային մահուամբ, իսկ որդիք նորա՝ քանզի ոչ հնազանդեցան միմեանց, անձնատուր եղեալ ելին առ թագաւորն. քանզի «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ ոչ կարէ կեալ»: Այս է Բուլղարաց երկրի առնլոյն օրինակ: Իսկ թագաւորն զորդիս Բուլղարաց բռնակալին հանել

Ափխազաց Բագարատ, և թագաւորէ Գէորգ որդի Նորա[1]. *առ որ գրէ ինքնակալ թագաւորն վասիլ հրովարտակ, որ ունի օրինակ զայս. և-թէ Ջոր ի կիւրապաղատին բաժնէ եաու*[2] *հօր քումմ ի պարգև՝ թո՛ղ, և քո հայրենեացն մինչև ըր իշխան: Իսկ նա ո՛չ առնու յանձն. այլ ի մանկական տիան հպարտացեալ՝ զընդդէմն առնէ պատասխանի, թէ Ջոր իմ հայրն կալեալ է իշխանութեամբ, յայնմանէ և տուն մի չտամ ումեք: Իսկ ինքնակալին լսեալ զայս, զօր առաքէ բռնութեամբ տիրել աշխարհին: Որոյ ընդդէմ եկեալ քաջացն Տայոց՝ մօտ ի մեծ ատան Ոլխաեաց, ի վախուստ դարձուցին զզօրս Հոռոմոց. բայց քաղաքին և այլ չինանիւտ տեղեացն՝ չմեղան ինչ: Այս եղև սկիզբն կործանման տանն Տայոց:*

ԳԼՈՒԽ Բ.

Ծաղագս բազաւորութեան Հայոց:

ՅԱյնմ *ժամանակի էր և Հայոց աշխարհին թագաւոր Գագիկ որդի Աշոտոյ, եղբայր Սմբատայ և Գուրգենայ, ի ցեղէն Բագրատունւոյ, այր հզօր և յաղթօղ ի պատերազմի. սա ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց: Ի սորա ժամանակս պայծառացան կարգք եկեղեցւոյ, և լուսաւորեցան մանկունք ուխտի սրբութեան. ի սորա աւուրս «Լցաւ երկիր գիտութեամբ տեառն՝ իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծովս» ըստ մարգարէին կանխաձայնութեան: Քանզի ունէր զաթոռ հայրապետութեան տէր Սարգիս, անեալ սրբութեամբ ի ծոց եկեղեցւոյ, և վարժեալ կրօնաւորական ճգնութեամբ ի կրօնաստանն՝ որ կո-*

1. Ալ օրին. յաւելու զկնի նորա: 2. Ալ օրին. ի տոհմէ:

չի Սևանայ կղզի. զոր չնորհեն Աստուծոյ կոչեն ըստ արժանաւորութեան, և նստուցանեն յաթոռ մերոյ Լուսաւորչին. որ նորին կարգօքն քաղաքավարեալ ի մարմին, բարի հանդիսիւք աւարտեաց. զկեանս իւր:

Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք՝ Սարգիս և Տիրան անուն և Յեննովք, որ կաթուղիկոսարանին էին վարդապետք. և Սամուէլ, որ կամբրջացն Ձորոց վանացն առաջնորդութեամբ հովուէր. և Յովսէփ որ Հնձուց էր նախապահ. և Ստեփաննոս Տարոնացին որ զաշխարհապատում գիրսն շարադրեաց պքանչելի յօրինուածովք, սկսեալ ի մարդն առաջին և պայ բովանդակէ պատմութիւնս իւր ի վախճանն Գագկայ, վան որոյ պատմութիւնս է. և Յովհաննէս ի նոյն գաւառէ, զոր վերագրեալ անուամբ կոզեռն կոչէին, որ զհաւատոյ գիրսն գրեաց. և Գրիգոր յոյժ իմաստունն բանիւք. և այլք բազումք, յորոց աւուրս բարձրացայր յոյժ եղջիւր եկեղեցւոյ ուղղափառ խոստովանութեամբ: Իսկ որք խէթ աչօք հայէին ի մեզ, ի սոցա վարդապետական հանդիսիցն կորակնեալք իբրև զմկունս ի ծակս որմոյ սողոսկեալ մնանէին: Եւ այսքիկ այսքան:

Իսկ թագաւորն Գագիկ յերկար ժամանակաւ վարեալ[1] զթագաւորութիւնն, և բարի յիշատակաց արժանի լեալ, ի խորին ծերութեան լուծանէ զկեանս իւր. և պայազատեն զիշխանութիւնն որդիք նորա Սմբատ՝ զոր Յովհաննէս կոչէին, և Աշոտ նորին հարազատն: Եւ էր Սմբատ մարմնով հարստի և յոյժ թանձր. բայց իմաստութեամբ սակս առաւել զոլ քան զյոդունս. իսկ Աշոտ բարեկարգ ունելով զիւրս մարմնոյ, քաջասիրտ և պատերազմասէր զոլով: Սոքա ընդ միմեանս անկեալք հակառակութեամբ վան բաժնիցն երկրին՝ կարօտացան իրաւանց և դատաստանի: Որոյ ե-

1. Երկար օրին. զկեանս և. գրագաւորութիւնն:

կեալ թագաւորն Ափխազաց Գէորգ՝ ի խաղաղութիւն համոզեաց զնոսա. և տայ բաժին երկանուանն Սմբատայ՝ զամուրն Անի և որ շուրջ զնովաւ գաւառք, վասն անդրանկութեան. իսկ Աշոտայ զնեղլին կոմն աշխարհին՝ որ հայի ի վերայ Պարսից և վրաց: Եւ հաւանեալ Սմբատ դարձաւ ի քաղաքն իւր. և ի ճանապարհին իջևանս արարեալ վասն ձանրութեան մարմնոյն, յանհոգս ննջէր. իսկ մի ոմն յիշխանացն ի կողմանէն Աշոտոյ՝ ի դատ կացեալ առաջի Գէորգի. ասէ՝ թէ Շատիկ իմ բնական տեղի է, զոր անիրաւաբար տարաւ յինէն Սմբատ: Զոր լուեալ Գէորգի, մեծաստատ յամմամբ ի բարկութիւն բրդեալ՝ զօրս ածէ ի վերայ նորա, և նա վասն ձանրութեան մարմնոյն ոչ կարաց նստել յերիվարն. իսկ իշխանքն որ ընդ նորա, քաջապէս ի փախուստ դարձեալ՝ բազում կոյտս դիականց ընդ մեծերոցն ի ճանապարհին կացուցանէին մինչև ի դուռն Անւոյ: Եւ անտի դարձեալ, զեկեղեցիս կաթուղիկոսարանին ի զարդուց կապուտ կողոպուտ արարին. և զբևեռս խաչին[1] հանեալ՝ նախատանօք ասէին, թէ Տանիմք և ձիոցն լուսին առնեմք. զոր ի դիպող ժամու հասոյց նոցա, արդարատուն Աստուած ի ձեռն Հոռոմոց զոր յիւրում տեղւոջն ասացուք: Իսկ զՍմբատ կալեալ տարան առ Գէորգին. զոր հրամայեաց ունել ի պահեստի. և ապա առեալ երիս բերդս՝ արձակեաց զնա:

Իսկ Աշոտ՝ վասն զի որ շուրջ զսահմանաւ նորա մեծամեծք էին, զբազումս ի տեղեաց նորա տարեալ էին անիրաւաբար, առ որս ոչ կարաց համբերել. վասն որոյ թողեալ զաշխարհն՝ երթեալ հասանէ ի դուռն[2] Հոռոմոց. և հաճոյ եղեալ նմա՝ լինդրէր զօրս յօգնականութիւն, և առեալ զայ

1. Երեքքին ևս այսպէս ունէին: 2. Երկաւ օրին. թագաւորին Հոռոմոց:

անցանէ յաշխարհն իւր։ Եւ յայնժամ յԱստուածոյ, սիրէ բազում զաւառաց և բերդից. և զօրանայ քան զամենեսեան և որ յառաջ քան զնա էին. մինչ զի բազումք ի մեծամեծացն՝ զհայրենի. տեղիս իւրեանց լինա թողեալ, նմա զանձինս կալմամբ ի հնազանդութիւն եառնն։ Մինչև ցայս վայր պատմութիւնս մեզ հեշտալի է։

Իսկ ի չորեքհարիւր վաթսուն և եօթն ամի թուականիս մերոյ՝ առաքէ ինքնակալ թագաւորն[1] պնևկոմիտացի իշխան ոմն, որ եկեալ մարզահարկ արկանէ յերկրիս, և ժողովեալ բազմութիւն մարզկան՝ սկիզբն առնէ վերատին շինելոյ[2] զթէոդուպօլիս։

Եւ ի չորեքհարիւր վաթսուն և ութ թուականին՝ ձեռնադրի տէր Պետրոս ի կաթողիկոսութիւն աո կենօքն տէր Սարգսի։ Եւ ի չորեքհարիւր եօթանասուն թուականին դարձեալ խաղայ ինքնակալ թագաւորն ծանր զօրու, և գայ յարեւելս. և եկեալ իշնան առնէ յընդարձակ դաշտն կարնոյ. և առաքէ դեսպանս աո գէորգի վրաց իշխեցողն, գալ ինքեան ի հնազանդութիւն։ Քանզի եպիսկոպոս ոմն վրացի ազգաւ՝ որ նստէր ի քաղաքն վաղարշակերտ, երթեալ թագաւորին ընդառաջ, վատահութիւն տայր բանից, թէ ցորժամ յեկեղեցւոյ կամ ի կարին ելանես, զեկ ընդառաջ գայ։ Եւ նա նորին բանիցն հաւատայեալ, և յայն ապաստան՝ ծայր նորա գալստեանն օթևանն էր յօթևանս փոխելով։ Այլ նա ոչ առնոյր յանձն գալ ի կոչ թագաւորին. քանզի բազումք ի նոցայոցն ահ արկանէին նմա, թէ ի տեսանել զքեզ՝ կամ մեռանիս, կամ արգելական առնէ, և ոչ ժամանես ի քո պատիւն։ Իսկ թագաւորն անցեալ ի Բասեան, երկուս և երիս պատգամս առաքէ, քանզի յոյժ կամէր խաղաղութեամբ վճարել զիւր ճանապարհորդութիւնն, և աշխարհն ծնալ ի շինութեան։ Ապա ի սպառել[3]

1. Այլ օրին. զկոմիտիսիտացի, և յիւս զկոմիտիսիտացի։
2. Ի օրին. Թէոդոսուպօլիս։
3. Ի օրին. պատգամաւորացն։

պատրաստացն, ի բարկութիւն շարժեալ թագաւորն՝ հրաման տայր հրով և սրով և գերութեամբ ապականել զմեծ աւանն՝ որ կոչի Օկոմի, և որ շուրջ զնովաւ գիւղք և ագարակք որ ի բաժնին էին. զորոյ զգերիան առեալ, հրաման տայ խաղացուցանել ի գաւառան Թաղտեաց, և ինքն դէմ եղեալ անցանէ ընդ Բասեանն, և հասանէ ի վանանդ[1] կամ ի փորակ: Իսկ Գէորգի դիպող ժամ դառնալ՝ հասանէ ի վերայ քաղաքին Ուխթեաց, և հրամայէ զօրացն հրով կիզուլ զգեղեցիկ դաստակերտս նորա, և յաւարի վարել զինչս նորա, բայց մարդոյ մի՛ ինչ մեղանչել: Իբրև լուաւ զայս թագաւորն, ևս քան զևս ի բարկութիւն բորդեալ՝ դառնայ ի վերայ նորա. և պատահեալ զօրքն միմեանց մերձ ի ծովակն որ կոչի Պաղակացիա, ահագին դղրդմամբ զմիմեանս հարկանէին: Ոսաի ի չորել սուսերացն և ի փայլուն սաղաւարտացն՝ հրոյ փայլատակունք զլերամբն անկանէին, և ի կոփիւն սուսերացն կայծակունք հրոյ հառեալ՝ յերկիր անկանէին: Ընդ որ և ինքն իսկ թագաւորն նայեցեալ՝ զարմանայր ընդ քաջութիւն պատերազմողացն, զի իբրև զյորձանս ծովուց ընդ վէմ հարեալ, այսպէս զօրքն Հոռոմոց ընդ նոսա հարեալ՝ ընդ կրունկն դառնային: Յորում տեղւոջ մեռաւ մեծ իշխանն Ըռատ, մօրեց պատահեալ երիվարին՝ ոչ կարաց անցանել. յորոյ վերայ սուր եղեալ սպանին զպովելի անձնն, որ սուգ մեծ հասոյց տանն Տայոց: Իսկ Գէորգի զօրօք իւրովք երթեալ ամրանայ յամուրն Ակխալացոյ. և թագաւորն ընդ կոլմանս աշխարհին զօրս առաքէ, ասպատակ արձակէ, պատուէր տայ[2] մեծաստաստ հրամանաւ մի՛ սպրդիլ ձերոյն և մի՛ երևտասարդին, մի՛ սպային և մի՛ հասակաւ կատարելոյն, մի՛ առն և մի՛ կնոջ, և մի՛ ամենևին ամենայն հասակի. և այսու ձեռնարկութեամբ

1. Երկու օրին. ի գաւառն կարմիր փորակ:
2. Մի օրին. դիմաքսեան պատուէր տայ մի՛ սպրդիլ, և այլն:

քանզեալ ապականէ զաւուրս երկրաւոյն՝ ցորս էր տեսանել տեսուիւն պղծմելի և բազում արատաւոր արժանի. քանզի բարձրաձեղուն ապարանք ակնարկէին տաճարացդ՝ որք մեծամեծ ձախիք և հնարագիտութեամբ ճարտարացդ՝ ի պատճառս տեսողացդ և ի վայելս ուրախութեան բնակողացդ էին, հրայրեցաք անկեալ կործանեցան, և որք նոյին տեսլեն առ նմին սրակոտորք։ Ասէ պատմութեանն, ասէ չար արարուածին. վիրդ կարծեցեալ ես աղքատս գիտութեամբ և տխմարս քան զամենեսեան ընդ դրով արկանել զայն ժամս ըզեալն, և կամ ոչքալ ըստ արժանոյն զմեր թշուառութիւնս. այսպիսիկ երեմիայի հոգւոյն են, որ „գիտէ զոչքան ըստ թշուառութեան յօրինել։ Բայց մեք խոն բանիւք զերկայնս զայսոսիկ արձանացուցանեմք զպատմութիւնս ի լուր լսելեացն ապղի՝ որ զարուցն է. որպէս զի որդիք որ ծնանիցին՝ յարիցեն և պատմեացեն զայս որդւոց իւրեանց». որպէս զի մի՛ մոռասցին զգործս Աստուծոյ, որ արդարակ[1] կշռով հատուցանէ ամենեցուն՝ որք խոտորին յիրաւանց նորա. ըստ Յոբայ բանիցն «Հատուցէ, ասէ, յանդիման տեսլեացն իւրոց, և ոչ յամեցուցէ»։

Արդ եկ համարեա ինձ զօրինակն զայն ժամուն արարուածին[2] և զգաստական և զհարկեւոր ալև ձերոցն ընդ արիւն և ընդ ապաժուժ թաթաւել, զերիտասարդան սրակոտորս, զանթիւ և զանհամար զաչացուան զորոց զլուսարանս խաւարեցուցին։ Կարծեմ թէ այսպիսի ի դէպ անց ընդ նոսա, վասնզի զի զարքունապէրչի նշանին բեւեռան հանեալ ի գուռն կամուղիկէին, նախատինս տալ ասէին՝ լսելն առնել երիվարացն. այս իրաւամբք անց ընդ նոսա, և որ առ սմօք գառնաւելմիւնն։ Ապա կանայք ի հրապարակս ելեալ,

1. Մի օրին. արդար։
Ա. Լաստիվերտցի

2. Մի օրին. արարուածոցն։

5614-2011

և զբօրն ի զլխոցն ի բաց առեալ. անպատկառելդ-
դէմ արևու ի խայտառականս անկեալ՝ և որք հե-
ռի ոտիւք ի տես հիւանդաց կամ յոտիսի տեղիս
հապիւ երթային, այժմ մերկ զլխով և ոտամբ[1]
առաջի գերչացն գնան, մերկ ի զարդուց, ան-
կեալ ի պատուոյ, մատնեալ ընդ բիւր անարգա-
նաց, իսկ զկաթնատուն տղայն, զկէտն ի գրկաց
մարցն առեալ զբարի հարկանէին. և զայլս ի
գիրկս մարցն աչեփուք խոցեալ՝ ընդ կաթն մարցն
զարիւն մանկանցն խառնէին. և զկէտն ի կից ճա-
նապարհացն ընկեցեալ ի սմբակս երիվարացն՝ առ
հասարակ սատակէին։ Ո՛վ Աստուած քո յայնժամ
ներողութեանն, ով թագաւորին անողորմ հրամա-
նատուութեանն։ Սակայն այսու ամենայնիւ ոչ չի-
չա բարկութիւն նորա. այլ տակաւին ձեռն իւր
բարձրացեալ է այլս ի վերայ տրին յաւելուլ
չարիս։ Եւ այսու գործով զբարեչէն երկիրն ան-
մուրճ արարեալ՝ յաւեր յամայի կացուցանէր
մինչև ի գալ ձմերայնոյն։

Բայց ոչ գիտեմ որպիսի՛ օրինակաւանց ընդ նոսա
այս ամենայն. եթէ ըստ կարգի խրատու, եթէ վան
առաւելեալ ամբարշտութեան բնակչաց երկրին,
եթէ վան գժնաբարուց արևմտական զօրացն ի
խուժադուժ ազգաց ժողովելոցն, իսկ թագաւորն
դառնայ ի ձմերոցն ի մարմանդս Պոնդոսի, և լինել
ի գաւառն Թաղտեաց՝ երեկօթա առնէ։ Որում գնեա
եկեալ հայրապետին Պետրոսի՝ հանդիպի նմա յա-
ւուրս Աստուածայայտնութեան մեծի տօնին, և
մեծարեալ պատուի ի նմանէ։

Իսկ ի լուսաւորութեան աւուրն, յորում օրէն
է զբնաւոնէից թագաւորաց և իշխանաց ի բա-
րեպաշտութեան կացելոց՝ զի ընդ առաջնորդս և-
կեղեցւոյ հաւատարեն զանձինս, և հետ ոտիւք ի
ջուրս իջանեն, և անդ կատարեն զխորհուրդ տէ-
րունական մկրտութեան. արդ ի հանդիպման ա-

1. Մի օրէն. առեալք։

տուրն՝ հրամայէ թագաւորն հայրապետին պեա-
րոյ օրհնել զկուրն ըստ մերոյ կանոնիս, և Հա-
ռանց եպիսկոպոսացն, որ անդ գիպեցան՝ ըստ
իւրեանց կանոնին: Եւ ի հեղուլ հայրապետին
գինբուռնական իւղն ի կուրան, ցնցուղս լուոյ ճա-
ոպայթիւ յանկարծակի ձագեաց ի կուրցն.
զոր տեսին առ հասարակ ամենեքեան, և փառա-
տրեցին զԱստուած. և բարձրացաւ եղկիւր հա-
ւասոյ մերոյ: Եւ ևս առաւել պատուով մեծա-
րեալ ի թագաւորէն և ի սպայիցն՝ հայրապետն
պետրոս, գառնայ ի տուն իւր: Բայց անդ եղև
Հայոց կորստեան գիր և նամակ. զանգի Յովհան-
նէս պատուէր տուեալ էր Հայրապետին, եթէ գրէ
գիր և տուր կաթակ թագաւորին, զի յետ լսոյ
վախճանին՝ զիմ քաղաքս և գերկիրս նմա տայ
ի ժառանգութիւն. զանգի իւր ոչ գոյր որդի թա-
գակալ թագաւորութեանն. վասն զի որդին նորա[1]
վախճանեցաւ, և ոչ ժամանեաց ի պատիւ հօրն:
Եւ թագաւորն երթեալ հասանէ ի ձմերոյ յա-
ռաջասացեալ տեղին. և զօրքն զմարզպաւորին
վաճառակուր արարին ի հեռաւոր աշգս:

Ի սոյն ժամանակս վոխի յաշխարհէ տուրբ և արժանաւոր հայրապետն տէր Սարգիս, և է գե-
րեզման նորա ի Հոռոմոսի վանքն:

1. Այլ օրին. որդին նորա երկար վախճանեցաւ. Իւրան՝ որ-
դին նորա վաղ վաղճանեցաւ և չժառանգեաց:

ԳԼՈՒԽ Գ.

Թէ որպէս թագաւորն երկրորդ անգամ դարձ առնէ ի վերայ աշխարհին Տայոց, յորում պարտեցան զօրքն վերոյիշեցոց։

Իսկ ինքնակալն գՀմեռայն ի գլուխ հանեալ ի մարմանդան Պանդոսի, ի հասանել գարնանայրեր ժամանակին, խաղայ գարձեալ նոյնհետայն ի վերայ Տայոց. և անցեալ ընդ բազում օթևանօք՝ գայ բնակի ի գաւառն Բասենոյ։ Իսկ բազում յիշխանացն Հառմից, զորս ընդ ժամանակս ժամանակս յայլևայլ պատճառս ի պատուոյ իշխանութենէ ընկեցեալ էր թագաւորին, որք իբրև ահաւնոյ ի գառագիտս մանչէին, աստ գիպող ժամ գտեալ՝ ի մի վայր ժողովեցան. և խորհուրդ վատ ի մէջ առեալ, խորհուրդ՝ զոր ոչ կարացին հաստատել, խորհեցան միաբանութեամբ ապստամբել ի թագաւորէն. կացուցանել թագաւոր զոր ինքեանք կամիցին։ Եւ իբրև յայս հաստատեցան, ապա բազայուկն գխորհուրդն, յընդարձակ գաշտին բանակ կապեցին. յորում անթիւ բազմութիւն մարդկան ի մի վայր ժողովեցան, և սկան գիմաստնոյ պատին[1] յիրեարս հարկանել։ Եւ ապա միաբանեալ ամենեցուն բազուն հարին զորդւոյն փոկասայ, զոր Ծռաւիկն կոչէին, որ վասն հօրն մեղանայ ի վաղնջուց հետէ յիշխանութեան պատուոյ անկած էր։ Որ ոչ հաւանեալ՝ չառնու յանձն. որք ոչ թուլացան ի խնդրոյն, այլ բռնադատեալ հաւանեցուցին մինչև յանձն էառ։

Զոր իբրև լուաւ ինքնակալն՝ ի մեծի տարակու-

1. Մի օրին. առ յիրեարս։

սանայ մինչ անկեալ կայր, և երթեալ ամրանայ յամուրս բերդի մինչ որ կոչի Մարդատ. քանզի հին սովորութիւն է այս տանն Յունաց. Բայց ոչ գիտեմ եթէ աստուածային իրաւունք են այս, որ չէ պարտ ծառայից ի վերայ տերանց յառնել, և եթէ թագաւորին յայնժամ առանձինն բարեշնորհութիւն էր. զայս հատասեաւ գիտեմ, և աչօք իմովք տեսի, զի որք յարեան ի վերայ նորա՝ ձիթապեղի մահուամբ եղեն ի կենացս. որպէս յառաջինն ի սկզբան թագաւորութեան իւրոյ ապստամբեաց ինանանէ վարդ որ կոչի Սիկլառա, և տարաւ զՀռոմն՝ համարեա թէ բնաւ զամենայն գնեա իւր, մինչ զի թագաւորին խըն-դրել զօր յօգնականութիւն ի վերայ կիւրապաղատէն. որպէս հարեալ զբռնակալն՝ վախճանեան յաշխարհէն. որ երթեալ անկանի ի Բաբելիա իւրապէն Քաղդէացւոց: Եւ ապա գնեան զնոյն ախտ ախտացաւ նորին անուանակիցն փոկաս, և սերեաց ամենայն արևելից ազն եօթն: Որ և չորս հազար մարդով միայն անցեալ գիշեր ի ընդ ծով, ի վերայ անկանի բիւրաւոր զօրացն ապստամբին, և յայնքան բազմութեան ոչ ոք մեռանի, բայց միայն ինքն ապստամբն գլխովին. զոր զգալուն հաւեալ՝ հրամայէ հարկանել զոտ խաղաղութեան. և ի գաղարել պատերազմին՝ իւրաքանչիւր ի զօրացն գանան ի տուն իւրեանց. և ինքն թագաւորն մեծաւ յաղթութեամբ երթեալ մտանէ ի քաղաքն իւր ի Կոստանդնուպոլիս:

Նոյնպէս և աստ ոչ ինչ յերկարեցաւ նոցա մանկական խաղան արարուած, և կամ ի վերայ աւազոյ չինուած, որ ի բախել հեղեղացն վաղվաղակի անկեալ կործանեցաւ: Քանզի Դաւիթ որ[1] Սենեքերիմ կոչիւր, որ նեղեալ ի Պարսից՝ ապ-պհայրենի ժառանգութիւն իւր գտանն վաստա-կաւոր զինուորութեամբ, և ի գաղարել պատերազմին՝ իւրաքանչիւր ի զօրացն գանան ի տուն իւրեանց. և ինքն թագաւորն մեծաւ յաղթութեամբ երթեալ մտանէ ի քաղաքն իւր ի Կոստանդնուպոլիս:

Նոյնպէս և աստ ոչ ինչ յերկարեցաւ նոցա մանկական խաղան արարուած, և կամ ի վերայ աւազոյ չինուած, որ ի բախել հեղեղացն վաղվաղակի անկեալ կործանեցաւ: Քանզի Դաւիթ որ[1] Սենեքերիմ կոչիւր, որ նեղեալ ի Պարսից՝ ապ-պհայրենի ժառանգութիւն իւր գտանն վաստակաւոր զինուորութեամբ, և

1. Երկաս օրին. Սենեքարիմ:

զբաղաքն Մեբատախա և որ շուրջ զնովաւ գաւառք։ Եւ այսպիսկ ոչ հեռի ժամանակաւ, այլ երկու կամ երեք ամօք յառաջ գործեցաւ. և յայնմ հետէ և այսր սկրեցին Հռոմք արհելից։ Սա յայնժամ ի խորհուրդ միաբան ապստամբացն էր, և հաստատիմ առ նոսա. որ յանկարծակի իբրև ի քնոյ զարթուցեալ, կամ իբրև զհզօր այր՝ զի թափէ զդինի, տեսեալ զգործան անպատեհութեան, և զի ոչ գոյր այլ ելք հնար խափան առնել չար միաբանութեանն, ապա ի միում աւուր յեղակարծ ժամու՝ առնուն զոր թագաւորն առնաւանեցին, ելին արտաքս ի բանակէն որպէս թէ ի խորհրդական բանից[1] պատեհութիւն. և յանկարծակի աւուր ի վեր առեալ ապան գնա. և հատեալ զգլուխն և առեալ ցծառայս իւր՝ վտլթապէս հատուցանէ առ թագաւորն։

Իսկ ժողովուրդքն՝ ի լինել այսորիկ այսպէս, այր զարամբ ելանէին փութապէս զանխլաբար ի տունս իւրեանց հասանել. և առժամայն խափանեցան ամենայն խորհուրդք նոցա։

Իսկ թագաւորն տեսեալ զգլուխ բռնակալին, հրամայեաց ի վերայ ձողոյ բարձրացուցանել ի տեսիլ ամենայն բանակին. զանգի էին բազումք ի նոցանէ որ ծանեան զնա. և ինքն ետես հատեալ զգլուխն իւր՝ վտլթապէս հատուցանէ առ թագաւորն։

Իսկ թագաւորն տեսեալ զգլուխ բռնակալին, հրամայեաց ի վերայ ձողոյ բարձրացուցանել ի տեսիլ ամենայն բանակին. զանգի էին բազումք ի նոցանէ որ ծանեան զնա. և ինքն ետես հատեալ զգլուխն իւր՝ վտլթապէս հատուցանէ առ թագաւորն։

Ձեռ այսորիկ լինէր թագաւորն զօրօք յընդարձակ դաշտն Բասենոյ, և առաքէ հեծեալս ի հեթանոսական զօրացն կալանաւորս ապստամբին Փերսի. և ինքն խաղացեալ հասանէ ի սպատասծն Բասենոյ, ի տեղւոջն որ կոչի Սալբորա, և խար

1. Ար օրէն. ի խորհուրդ պատճառական։

վասն պատճէշ արարեալ շուրջ զբանակատն՝ պահել անդ ամենական աւուրբք կամ ևս առաւելագունիւք։

Իսկ առաքեալքն ի Լիպատուրէն կալեալ զՓերս և զԱնդրանիկ զնուրան վեցհարիւր, որ էր համանուն նորին, և ածեալ մինչև յամուրն որ կոչի Խաղոյ առիճ[1] ի սպառազինն կարնոյ, և հաւեալ յապարանսն՝ որ հայի ընդդէմ ամրոցին, ի-ջևանս արարեալ, և յառաջ ածեալ զՓերսն և զԱնդրանիկն՝ հասին զգլուխս նոցա։ Քանզի պայն պատուէր առեալ էր նոցա Լիպատուրին. վասն զի նոքա յապստամբելն իւրեանց պահպանեալ եղեն Ափխազին և խոստացան մինչև յայն տեղի տալ նմա ի բաժին[2]. վասն զի յառաջ ժամանակաւ կալեալ էր պայն Դաւթի կիւրապաղատի, բայց ոչ իբրև զիւր հայրենի ժառանգութիւն, այլ պարգեւք էին այսոքիկ ի Լիպատուրէն վասն նորա վիրաւորութեանն. և զի խոստացեալ էր՝ յետ իւր վախճանին զիւր գաւառն տալ ի Լիպատուրն[3], նոքա պայն չածէին զմուտս, այլ առաւամեամբ ի պարգևս լինէին՝ որ չէր իւրեանց։ Վասն այնորիկ անդ հրամայեաց Լիպատուրն զգլուխս նոցա բառնալ։

1. Երկու օրին. Խաղոյ առիճ։ 3. Մի օրին. բազաւորին։
2. Երեք օրին. ի բաժին։

ԳԼՈՒԽ Դ.

Վասն վերջին պատերազմին որ ի Ճղփայ։

Այն թագաւորն զաւուրն զոր եկաց ի Սալ-
մոյ, զանգի երիս բերդս իւրեանց զաստակեր-
ուքն լանդրէր ի Գէորգէ, զոր Գուրգինայ տարեալ
էր ի բաժնէն Աիւրապատականն անիրաւաբար, ա-
ռաքէր առ նմա դեսպանս, և քաղցրական բա-
նիւք զրէր առ նա, թէ զոր ինչ է հայրենի
ժառանգութիւն՝ թո՛ղ, և կաց խաղաղութեամբ ի
ս բաժնիդ, և մի՛ խափան առներ իմ ճանա-
պարհին որ ի Պարսիկս։ Այլ նա ոչ առնու յան-
ձն. յետոյ առաքէ զՋաքարիա՝ զոր յառաջա-
կաւ մի յիշեցաք, զեպիսկոպոսն Վաղարշակեր-
տոյ. որոյ երթեալ հաւանական բանիւք պատրեալ
զԳէորգէ, որմա[1] յանձն առնու, և զրէ առ
թագաւորն տալ զոր լանդրէրն որոյ առեալ զիւրն
զարձաւ ուրախութեամբ։

Եւ եկեալ օրագնաց մի ճանապարհ[2], յիջա-
ւանան՝ յոր օթևանս առնոյց էր, վաթանակն
հասին զկնի նորա սուրհանդակք ի լանդրէր զրոյն,
զանգի զգաստացաւ անմիտն. և առեալ զարձան ան-
զրէն։ Իսկ նա երթեալ հանդիպի թագաւորին,
և պատմէ զեղեալն. ապա հարցանէ թագաւորն
զան զօրացն, և զան կարգ լինելոյ նոցա ի պա-
տերազմական հանդէսն։ Պատասխանի առեալ
Ջաքարիայն ասէ, թէ Բազում զօրս ունի որպէս
ոչ այլ ոք, և հզօրս զօրութեամբ և պատրաս-
տս ի պատերազմել։ Զոր լսեալ թագաւորին,
ի բարկութիւն շարժեալ ասէ, թէ Եւ զս յապա-

1. Մի օրէն. զոր։
2. Այլ օրինակք զօրագնաց մի ի ձանապարհին իջաւանեալ։

տամբևցն ևս եկեալ, ահ արկանեա ինձ: Եւ հրամայէ խաղաղացուցանել զնա ի կատանդնուպօլիս, ասելով. Երկի գաղարեա անդ, մինչև ևս վախատակն ի քեզ եկից: Եւ հրամայէ տարօղացն հատանել զլեզու նորա: Որոյ երկեալ և ոչ ևս գարձաւ ի տեղի իւր. այլ ճոաց ի նոյն մինչև յօր մահուան իւրոյ:

Յետ այսորիկ լծողեալ Թագաւորին զբանակեաղ ինկանէն Սալբորայ. խաղայ զօրօքն յատակ ի տեղւոջ որ կոչի Շղփայ: Զոր լսեալ Ափխազին, մինչդեռ չև էին բանակեալ և պատնչաւ առ: բացեալ, խարամանկի այսպիսի օրինակաւ: Գլխաւոր զոմն յիւրոց եպիսկոպոսացն զեսպան առաքէ. և ինքն զկնի զեսպանին զօրօքն զհետ ընթանայ՝ որպէս թէ յանպատրաստից ի վերայ հասանել՝ տալ զհետ զեսպանին, մինչդեռ ի հասանել նորա առ Թագաւորն՝ զօրքն ամենայն ի միասին հարկանել: Որք եղեալ սմին ձիով՝ այր զբնկեր յատակէր ոչ պատերազմի օրինակաւ, այլ որպէս թէ առ յապուռ. որպէս ի հնուաց յաւուրսն Յովրամայ՝ Մովաբացիքն ի վերայ Իսրայէլի եկեալ հարան ի տուր գառնութեան, նոյնպէս և սոցա հանդիպեցաւ: Զան զի յանդգնաբար հասեալ ի վերայ երիվարացն, ի զօրութենէ պակասեալ՝ վանդանդութեան և վան երկայնակուռ գինուցն, և վան արագ և յերկար ընթացիկն, որք առ: ժամայն անաշխատ ի մէջ առեալ գնաս զօրացն Հառանց, կատրեցին անթիւ բազմութիւն: Իսկ Թագաւորն Ափխազաց երեանց փախստական եղեալ՝ անկանէին յամուրն[1] Ափխազաց. որոց զհետ երթեալ զօրացն՝ կատրեցին մինչև ի մատաղրիսն: Ապա հրամայէ Թագաւորն զգուշ ապանեցոյն ի մի վայր հաւաքել, և առ մի մի բերդացն տալ մի մի գնդի. որք իսոյզ արկեալ ընդ ամենայն սահմանն՝ զանկեցոյն զգուշ[2] առաջի Թագաւորին բերելով

1. Երկաթ օրէն. անկասկած ի յաւելոջէ:
2. Յերկաթ օրինակս չէք բերելով:

ի մի վայր հնաւաքէին. զոր հրամայէ ի վերայ ճանապարհին կոյս կոյս գնել ի զարմանս և յիշեցուած առաջայն։

Յետ այսորիկ լսելւ եաես գէտրգի գինքն անկեալ յամենայն յուսոյ, ապա ապաչէ զիշատուրն գալ ի խաղաղութիւն։ Զոր լսեալ գիշատչն նա, և[1] գրէ հրովարտակ առ նա օրինակ զայս. Մի կարծեր, ասէ, թէ յաղթեցի քեզ, ասելի ինչ խնդրեմ ի քէն՝ քան զոր յառաջն. այլ տուր գիմ հայրենիքն՝ զոր կիւրապաղատան ինձ տուեալ է, և առ զքո որդիդ ինձ պատանդ. և այլ ընդ իս և ընդ քեզ խաղաղութիւն է։ Որում հաւանեալ յանձն առնու. և թագաւորին իշխան ի վերայ գաւառին կացուցեալ, բաժանեն առն առն և գեօղ առ գեօղ և ագարակ առ ագարակ, որպէս յառաջինն լեալ էր։ Եւ թագաւորին վայել առեալ զպատանդն՝ և խոստանայ գինի եւ ըից առնոյ դարձուցանել. և ինքն խաղացեալ զօրքն պատի գՀայովք, և իջանէ բանակի յընդարձակ դաշտն Հերայ հեծելովք և հրամայէ զօրացն կոտորել զծառաստունկս քարափին։ Իսկ որ քարափին իշխանն էր, ապաչէր հարկօք պաշտել գիշատչին և կալ նմա ի հնազանդութիւն։

Եւ մինչ նա յայս խորհրդի էր, քանզի առնոյն աշխարհն Պարսից առ հասարակ պարհանօք պաշարեալ կային յերկիւղի, և խնդրէին հնարս փրկութեան, յանկարծակի խաւարն առաջի երկինք և յորդութիւնք անձրեւոց յերկիր հեղան. և գինի այնր չնչաց հիւսիսային կծու հողմ, և գարձոյց զանձրեւն ի կարկուտ և ի ձիւն և ի սառն, և թանձրամած լինելոք ծածկեաց զերեսս երկրին. քանզի և ժամանակն իսկ ձեռնտու[2] էր այնմ, գի գալ ի ձմերոց հասեալ էր։ Եւ յերկարեալ յորդութեան ձեռանն, և խաւարին առնամանեաց, չոգ ձիւն և չորեացն ընդարձ-

1. Երկրորդ օրին. հրամանաւ։ 2. Երեք օր. ձեռնտու։

մայեալ ոչ կարացին չարժել։ Իսկ հեառնակքն ի պո-
րայն՝ ի գառնութենէ առնամանեացն ձայրք ատ[ի]ն
և ձայրք ձեռացն իւրեւ ի հրոյ կիպեալք, հաառելք
անկանէին. և վրանացն լարքն և ցիցքն ընդ երկիր
կապեալ ի սաստկութենէ գառնութեան արկա-
ձին՝ անշարժ մնացին։ Եւ այս որպէս լինաչ [ի]մ
հառուցումն նոցա անտարմ որոյն, զոր նպատ ի
վերայ քրիստոնէից ածին. այլ [ի]ԷպԷտ նպատ
վան մեզայն մատնեցան, այլ ոտյա պարտ էր
պղծել, որպէս և ցԲաբելացին ասէր Աստուած.
«Ես մատնեցի զժողովուրդ իմ ի ձեռս քո, և գո-
ոչ արարեր ի վերայ նոցա ողորմութիւն»։ Վասն
այսորիկ գառն առնամանեօք ատնջեցան, ոչ ի
բարձր լերինս, այլ ի խորագոյն գաշտս և ի կարի
ջերմին՝ ի տեսիլ [ի]շնամեացն իւրեանց. որպէս
առ Մովսէսին Եգիպտոս հարաւ կարկտիւն և եղե-
ւմամբ, որ չէր լսաւ բնութեան երկրին. ուստի
բարբարոսքն ձանեան յայտնապէս, եթէ ձեռն
ամենակալին պատերազմի ընդ նոսա։ Եւ ի լի-
նելն այսորիկ այսպէս, որք ուժով և զօրութեամբ
ծնոյին՝ եղեալ յիրիկարս [ի]ատագարան հանդերձ,
իւրք ի [ի]շնամեաց հալածեալք ի առնամանեացն՝
ոչինչ վոյտ առնելով ընչից, անցանէին ի գառան
Արձրանեաց։ Զոր տեսեալ գաղաքին, յանկար-
ձակի պրոհ առեալ ի գուրս ելանէին, և մեծաւ
խնդութեամբ դիմեալ ի վերայ, լցան ատրաւ ի
ձիոց և ի ջորեաց և ի վրանից և յայլ կապմա-
ձէ, զոր նպատ ոչ կարացին պէտ առնել, այլ ի
գրոցն վարանան էին։ Իսկ [ի]ատագարն նախա-
տեալ յաւարառացն՝ ձանեաւ յայտնապէս [ի]Ե
ձեռն տեառն մատնեաց զիւրս ի ձեռս նորա,
որպէս ի գիրս [ի]ատագարութենէն գրեալ է. «Ոչ,
ասէ, իւրով զօրութեամբ զօրանայ հզօրն, այլ
ակ[1] ակարացուցանէ զհակառակորդն»։ Ապա չար-
ժեալ [ի]ատագարն զօրօքն՝ անցանէ բազում օվիա-

1. Երկու օր. տկար առնէ։

նոք, երթեալ հասանէ ի քաղաքն իւր ի կոստան-
դնուպոլիս. և կացեալ ամն երիս, արձակէ բա-
զում պարկեաւք զորդի Ափխազին, և ինքն զմա-
հու ցաւ չերանի.

Բայց զանդի կոստանդին նորին հարեցաւն և թագակիցն և նիկիացւոց պատուին էր[1] որ հրա-
մայէ թագաւորն խնդրակս առաքել, որպէս զի
վաղվաղ առ նա հասցէ: իսկ որք հրամանատարք
էին՝ բանիւք հաւանութիւն տային, բայց թագա-
ցանէին առ ինքեանս զհրամանս թագաւորին.
զանդի ոչ կամէին եթէ կոստանդին թագաւորես-
ցէ: Զոր յետ բազում հրամայական բանին ձա-
նուցեալ ինքնակալին[2] զխորամանկութիւն նոցա,
հրամայէ ապաստւորացն՝ եթէ Զի ածէք ինձ. և
յարուցեալ ի մահճացն նստաւ ի վերայ ձիոյն,
և ելեալ արտաքս ի պալատէն ի տեսիլ քաղաքին.
զոր տեսեալ բազմայ՝ յերկիւղէն ի խաւարչին
տուն երթեալ սուզանէին: Ապա խնդրակք ե-
լեալ զկոստանդին վաղվաղակի անդր հասուցա-
նէին, զոր տեսեալ թագաւորին՝ եղ զվիժ թա-
գաւորութեանն ի գլուխ նորա և հաստատեայ
զնա թագաւոր, և պատուէր եւ նմա՝ որպէս
Դաւիթ Սողոմոնի, զխոտվիչս թագաւորութեանն,
և պայնակ որ ոչ կամէին զվիժագաւորեն նորա
ի վերայ երթեանց, ոչ պահել կենդանի. բայց ոչ
որպէս Դաւիթ, զի պատճառս որսայիւր: Եւ
ինքն առեալ զոտս ի մահիճս իւր՝ պակասեաց, և
զկնի երկու աւուր բարձաւ ի միջոյ. որ թագա-
ւորեաց ամն չետասն: Բայց և ի մահուան նորա
նչան լինի պատանչելեաց ցուցաւ յերկնից. ի ժամու
երեկոյին՝ յորում նա զհոգին փչեաց, վերին ե-
լեն հերձեալ հրոյ փայլակն յանկարծակի ի[3]
աւուրս անկեալ. զոր առհասարակ ամենեցուն
տեսեալ, զմահ թագաւորին, ասեն, գուշակէ:

1. Երեք օր. զոր:
2. Յօր. ծանուցեալ զխորա-
մանկութիւնն ինքնակալին նո-
ցա. յայլ օրինակս, ծանուցեալ
բռնութիւնն:
3. Երեք օր. ի դուրս:

ԳԼՈՒԽ Ե.

Թագաւորութիւն Կոստանդեայ։

ԹԱԳԱՒՈՐԵԱՑ զկնի վասիլն Կոստանդին նորն հարաւոյն՝ ամս չորս. և քանզի այր խաղաղասէր էր և առատ, յառաջին ամին իւրոյ թագաւորութեան եկաց ի լուսիեան. և հանդեաւ երկիր ի մեծամեծ տագնապէ. և զիշխանս որ դաւաճակալք էին, զորս մեծն վասիլ կարգեալ էր, ի նոյն հաստատեաց։ Իսկ կոմիտաս[1] ամն այր քաջ և պատերազմասէր. զոր կացուցեալ էր եղբայր նորին՝ աէր դաւային վասպուրականի, սա մեծամեծ գործս արուեստից ցուցեալ ի դաւն Պարսից, և եղև անուանի յամենայն արևելս. սա ի մահուան թագաւորին խորհուրդ վատ ի մտի[2] եդեալ, զաշնակից լինի Գէորգեայ թագաւորել յարևելս։ Զոր ծանուցեալ կապուտակացի զօրուն, մնաբանեալ յանկարծակի ի վերայ հասին, և զլաս վրանին հատեալ ի վերայ ընկեցին. և կալեալ զնա և զնորին խորհրդակիցան՝ եդին ի բերդի միոջ ի լանաի, և ծանուցին թագաւորին։ Սա եղև յառաջին ամի թագաւորութեան Կոստանդեայ, յորում էր թուականիս մերոյ ամք չորեքհարիւր եօթանասուն և հինգ։

Իսկ թագաւորն երկրի լաւ, առ սեղեան չէած լինչ նմա պատուհաս. այլ ներեաց գամն ոչ ոչին, մինչև քակ ի վերայ եհաս երացն։ Ապա ի գալ երկրորդ ամին, առաքեաց գահիճ, որ եկեալ խաւարեցոյց զլուսաբանն նորա և զոր ընդ նմա։ արանց երկրի ուխտից, որ յոյժ ապաշաւանաց արժանի է. թէ զինչ զառաջ գառաջեալ անկաւ ի մտաց

1. Ամի օրին. Կոմիտաս։ 2. Այլ օրինակ ի մտի արկեալ։

այնպիսի պատուական այր և[1] բարեաց յիշատակ արժանի. զանգի զԱրճէշ իւրով պատուակերաւք նա էած ընդ ձեռամբ Հռոմոյ։

Իսկ ի գալ երկրորդ ամին՝ առաքէ Թագաւորն յարևել վերակացու աշխարհին զնիկիաւոմ Ներքինի, որ եկեալ անցանէ ի գաւառն վրաց, և պատիր բանիւք բազում յաղատաց աշխարհին հանեալ ի հայրենեաց՝ առաքէ ի դուռն Թագաւորին։ Զոր տեսեալ և ուրախացեալ՝ մեծամեծ պարգեւօք և իշխանական պահու պատուէ զնոսա, և տայ նոցա ըստ արժանեաց գեօղս և աւանս պրսով և մատանեաւ ժառանգութիւն յաւիտենից։ Իսկ ի մտանել երրորդ ամին՝ ելանէ յարևելս Սևանիճ Ներքինի բազում զօրօք, որ ունէր զիշխանութիւն կէս Թագաւորութեանն, զոր ըստ յունական լեզուին Պատեկխանոս[2] անուանեն. որ եկեալ անցանէ յաշխարհն վրաց, բայց չժամանեաց գործ ինչ վճարել, զի բօթ մահու Թագաւորին գէտ եկն. զոր իբրև լուաւ՝ առանց յապաղանաց դարձեալ զօրօքն չոգաւ ի Կոստանդնուպօլիս։

ԳԼՈՒԽ Զ.

Թէ որպէս թագաւորեաց Ռոմանոս։

Քանզի վասին, հզօրն ի Թագաւորս և միշտ յաղթօղն ի պատերազմունս, որ զբազում աշխարհս կռնեաց[3] ընդ ոտիւք, յարևելեան գաղջութենէ ոչ պարապեաց առնուլ կին, և յանուցանել որդիս ժառանգ Թագաւորութեանն, որպէս օրէն է ամենայն Թագաւորաց։ Զկնի նո-

1. Երկու օր. տարի։
2. Մի օր. ամսոյ ամսիս։
3. Այլ օրինակք ոտիւք։

րա փոխանորդէ զԼմպատուրաւթիւն յառաջասացեալն Կոստանդիանոս նորին հարպատան։ Եւ սորա ևս քանզի որդի ոչ գոյր, այլ էին դստերք երկու, տայ զՋոյի անդրանիկն ի կնութիւն Որմանոսի, որ էր մի ի զօրաց սպայիցն Հռոմոց, և թագաւորեցուցանէ զնա փոխանակ իւր, և [1]ինքն մահուամբ ճեպի զՆեա ամենայն երկրաձնոց։

Սա յառաջին ամի իւրոյ թագաւորութեանն՝ զօրաժողով լինի, և ճանապարհ առնէ ի կողմանս Աւսոխրացւոց, և կամէր երթալ ի վերայ քաղաքին որ կոչի Հալպ, առնուլ աւերել զնա։ Եւ եկեալ հանդիպի լերին որ կոչի Սեաւ, և տեսանէ անդ բազմութիւն վանորէից և զմենաստանս միայնակեցաց, որք ի մարմնի գոլով զարմանալիացն երկնին զնմանութիւն, որք միով այծէիւ կամ բաճկոնաւ չատանան, զձմերամուտ երեքամսեայ զնմանութիւն. բայց միայն զի նա մարախով և վայրենի քաղցու կերակրեալ լինէր, իսկ սոքա երկաթի երիվ ի ձեռն առեալ՝ խոնջեալ աշխատին [2]ի գարի սերմանեաց պատրաստեալ զօրապահիկն կերակուր. այլ զանազան խորտիկս և զքաղցրահամ կերակուրս հանդերձ ուրախարար գինեաւ՝ զոր մատուսակեն որթք այգեաց, զայսպիսիկ զամենեսեան աշխարհասիրաց թողին. ի լուսաբերն լերինն բարձրացեալ նախամարգարէին կաճառակիւ գոլով՝ միշտ ընդ Աստուծոյ խօսին։

Զսուտ տեսեալ թագաւորին՝ հարցանէր զժանաւորաց իւրոց, Զի՞նչ են այն բազմութիւն հերետիկոսացն։ Եւ նոքա ասեն, Սոքա ամենեքեան երամք աղօխոտաց են, որք աշխարհի խաղաղութեան և կենաց ձերոց առողջութեան միշտ խնդրուածս առնեն։ Պատասխանի տուեալ թագաւորն ասէ. Զէ [3]ինձ պիտոյ աղօթք նոցա. այլ

1. Մի օր. զհետ երկրաժնաց. Այլ օր. զհետ ամենայն երկրաձնաց։
2. Մի օր. ի գար սերմանեաց։
3. Երկու օր. գրեցէք.

*պերճեցէք յամենայն վանորէիցն ազեղնաւորս ի ծառայութիւն իմում թագաւորութեանս: Քանզի յայժ հաւանեալ էր քաղկեդոնական սահմանադրութեանն՝ առնել զոլով ամենայն ուղղափառ հաւատոյ**: *Որ և զԱստուց եպիսկոպոսն առեալ ի Կոստանդնուպոլիս*[1]*, ձայն և ծանուկ արարեալ, հրամայէ խուզել զմօրուսն, և ի վերայ իշոյ եղեալ չրջեցուցանել ընդ հրապարակս և ընդ փողոց, ի քարկոծ առնել զնա զոր յետոյ հրամայեաց ի մեռանել առնել զնա, որ և ի նմին ևս վախճանեցաւ: Այսպէս խակամիտ ումն էր թագաւորն. որ և զառաջին թագաւորան չէած զմտաւ, թէ որպէս խնամակալութիւն ցուցին առ ազգս՝ զորս ընդ ձեռամբ ունէին. այլ ինքնօրէն հրամանաւ կամէր նորաձև առնել յեկեղեցիս Աստուծոյ՝ ոչ յիշելով զտէրունական զանաստա հրամանն, թէ «Ամենայն որ հարցէ ընդ վիմիս ընդ այսմիկ՝ վշրեսցի. և յոյր վերայ անկցի՝ հատեսցէ զնա»: Վասն որոյ ի մօտոյ հասանեն արժանահատ զատաստանքն Աստուծոյ ի վերայ նորա: Որ ի նմին ճանապարհի եղեալ զօր ի տաճկացն՝ ոչ առնլի քան զուրթ հարիւր կամ զհազար այր, և անկեալ ի վերայ բնաւրաւոր բազմութեանցն, անչափ կատրուածս առնէին. և զպանձան թագաւորին և զօրացն առեալ յաւարի՝ զարձան ի քաղաքն իւրեանց:*

Իսկ թագաւորն մեծաւ անարգանօք վախճանական եղեալ՝ ձիւթածի անկանի ի քաղաքն Թագաւորութեան իւրոյ: Ապա յաճախեալ ի տաճիկ ամբարտաւանութենէն, կարաց ածել զմտաւ զբան զաւթական երդոյն որ ասէ, թէ Յարի է յաւասել ի աէր և յաղօթս արդոյ, քան յուսալ ի

* Ծան. Ի վերջ կարծիս ե պատմագիրս զԱուրբ Ծաղկովին Գաղկեդոնի, զորմէ վկայեն և ամենայն ուղղաւես միաբ՝ հրմանաքն ճշմարիտ պատմութեան Ծաղկոցն Սրբոց և սահմանադրութեանց նոցին:

1. Մի օր. Ժաղր և Ժանուկ:

լանա և ի գանձուց առաւելթիւնս. քանզի ոչինչ[1] *օգնեն ինչք յաւուր բարկութեան։ Եւ յայնմ հետէ և առ յապայ ոչ ևս յաւել ելանել ի թագաւորանիստ քաղաքէն մինչև ցօր մահուան իւրոյ։*

ԳԼՈՒԽ Է.

Առումն Ռահա քաղաքին։

*Ո*ր քաղաքին իշխանն էր, զոր ինքեանք Ամիրա կոչէին, որ ի նախնեացն ունէր զժառանգութիւն[2] տեղւոյն, մեռաւ անորդի. իսկ կին նորա զմի ի ծառայից իւրոց՝ որում անունն էր Սալամայ, առ արփական ցանկութեան սիրեաց զնա, և կացոյց զնա տէր քաղաքին և տեղւոյն իւրոյ։

Իսկ նա երկուցեալ ի գլխաւորաց քաղաքին՝ թէ ոչ հնազանդին նմա, առաքէ զմին ի հաւատարիմ ծառայիցն իւրոց առ Մանեակ, որ յայնժամ ունէր զիշխանութիւն յեզերս գաւառին Հաւսմոց, որ նստէր ի քաղաքին որ կոչէր Սամոսատ, զոր ասեն ի հինն չինեալ Սամփսոնի. որպէս զի զգայուսցէ թագաւորին, զի տացէ նմա իշխանութիւն և ժառանգութիւն յաւիտենից, զրով և թագաւորական մատանեաւ յաշխարհն Հաւսմոց. Եւ ես տայ, ասէ, առանց պատերազմի զքաղաքս ի ձեռս նորա։ Զոր լսեալ թագաւորին Ռոմանոսի, զրէ նմա զիր հաւանական. և առնէ զնա[3] Անթիպատոս պարիկ, և զկին նորա պատէ մեծ և երևելի պատուով։

Իսկ քաղաքացիքն իբրև լսան զձայն ազաղակին և զնչուն փողոցն, սրտաթափ լի դողութեամբ՝ ի դուրս ելանէին զարհուրեալք և խռովեալք, իբ-

1. Մի օր. օգտեն։
2. Մի օր. տեղեացն
3. Երկու օր. անթիպատոս պատրոնիկ։

*րև զալխս ձմեռ կուսակեալք զմիմեամբք զեղուին, Եւ իբրև ոչ կարէին զեղս երացն խմանալ, որք մահմետական օրինաքն սովորեալ էին, եկեալ ի գե-
չերի՝ անկանէին ի ծծուռը գաղաքս, պատմելով նոցա զչանկարծահաս չուռչ տագնապն որ եհաս նոցա: Իսկ նոքա իբրև լսան, ձայն առեալ ի մի վայր ժողովեցան բազմութիւնք զօրաց. և եկեալ ի վերայ գաղաքին՝ խրամատեցին զպատ-
բիսպ նորա, և մտեալ ի ներքս՝ բազում կոտո-
րած առնէին: Ոսաոկ բազումք ի գաղաքէն ի մեծ կամուղիկէն եկեալ ամրանային, և այլք յա-
ռաջ տեղիս կամ յաշտարակս: Իսկ պաշարիչքն զբազում տեղիս հրով[1] այրեցին, մինչև ի նոյն ինքն ի տուրբ կամուղիկէն հուր ընկեցին. և բացեալ զդանձարանս առնն սրբութեան՝ զոր[2] յառաջին թագաւորացն Հայոց ամբարեալ էր ի սպաս պիտոյից տաճարին տեառն, և հանեալ զանձինս մեծաւ չուապով՝ գնացին ի տեղիս իւրեանց: Եւ յայնմ օրէ և այսր նուաճեցաւ գաղաքն ի ձեռն Հոռոմոց:*

ԳԼՈՒԽ Ը.

Մահ Ռուսաւուսի:

Իսկ թագաւորն ոչինչ բարի յիշատակաց արժան լեալ, յառաջ մեծի հինդշաբաթուն եկեալ ի պալատանն՝ հրապարակախօս լինել ընդ զօրս իւր, մինչև ի հասարակ աւուրն տալ բան իշխանութեան[3] զարքունատուր պարգևան. և տպա պարապեալ ի գործոյն՝ հրամայեաց տալ տակի լականաւ ջուր պատրաստել առ ի[4] լուանալ

1. Այլ օրինակք ապականեցին:
2. Մի օր. յառաջ:
3. Մի օր. արքունական:
4. Երեք օր. Լոգանալ:

նման: Եւ իբրև նմուտ յոտի ձովակն լցեալ ջերմ ջրով, սպասաւորքն բուռն հարեալ զգետոյ գլխոյ նորա ձագկեցին ընդ ջրովն, մինչև վճարեցաւ ի կենաց՝ թագուհոյն կամակից լինելոյ նեղեցեալ, որ կալաւ զիշատարութիւնն ամենեսեան:

ԳԼՈՒԽ Թ.

Թագաւորութիւն Միխայելին:

Դանիէլ յիւրում մարգարէութեանն՝ զոր եւ տես, որոյ գլուխ ոսկի էր, և թիկունքն և ձեռքն արծաթի, իսկ մէջքն և կողքն պղնձի, սրա անցեալ են. իսկ սրունքն և ոտքն երկաթի խառնեալ ընդ խեցի, որ է Հռոմոց թագաւորութիւնն. զի ոչ ըստ ազգի վարի, որպէս և այլ ազգաց թագաւորն և որդի թագաւորի: Որ ի հարց և ի հաւուց ունի զիշխանութիւնն՝ այն երկաթին է. իսկ եկամուտն՝ որ ոչ է ի թագաւորական տոհմէ՝ այն խեցին է: Եւ այս յոլովակի լինի առ նոսա, որպէս և այժմ իսկ տեսանեմք առաջի կացեալ թագաւորս: Սա ոչ ի թագաւորական տոհմէ, և ոչ որդի թագաւորի, և ոչ իշխանութեամբ յերևելի ազգին. այլ այր մի աննշան ի պալատին պաշտօնէից, յոր արկեալ թագուհոյն պատնականն մելեզին ախտին, ի պատճառս նորա ջրահեղձոյց արար զայրն իւր, որ և ի սպանողացն մի զա առեալ լինել: Իսկ զինն տատանական դրծոյն ի գլուխ[1] ելանելոյ, հրամայէ թագուհին զգլխաւորս քաղաքին կոչել առ ինքն. և գուցանէ զթագաւորն վախճանեալ՝ յանկարծամահ պնա համբաւելով. և ապա հուպ ընդ հուպ զմի-

1. Մի օր. գլխոյ. Այլ օր. հղեցոյ:

խայէլս զայս յառաջ ածեալ թագաւորեցուցանէ՝ այր իւր առնելով, որոյ գործն յայտնի եղև ամենեցուն։ Սա քանզի բազում ազգականս ունէր և եղբարս, զգևլատարապոյն իշխանութիւնն առ ի ձեռս նոցա։ Զմի յեղբարցն առնէ Մագիատրոս, և տայ զԹէսաղոնիկն ի ձեռս նորա, և հաւատայ ի նա զհոգս Բուլղարացն և արևմտական կողմանցն. և զմինն անուանէ Դեմետրիկոս, և առաքէ ի մեծն Անտիոք, զաճկատանի և զհարաւային կողման զհոգան յանձն առնելով նմա։ Իսկ զերկրորդն յեղբարցն՝ որ էր այր նենգքինի և աբեղայ, որումն անուն կոչէր Օռթանոռս, կացուցանէ զնա ի թագաւորական քաղաքն ի Կոստանդնուպոլիս՝ առնելով զնա Սինկլիտոս, զամենայն հոգս և զերաւունս պալատին տալով ի ձեռս նորա։

Եւ ինքն քանզի չարապէս հարաւ ի դիւէն, մինչև յեկեղեցիս և ի հանդիստ արբոյն ընթացաւ. բայց ոչ գիտեմ եթէ վրէժխնդրութիւն էր այս Ռոմանոսին մահուն՝ որ անիրաւապէս մեռաւ, եթէ[1] ի բնէ ունէր զդիւահարութիւնն։ Բայց այսն և այլ պատճառս, եթէ վասն զի չէր անգ նմա թագաւորութիւնն, վասն որոյ երթեալ ի քաղաքն Թեսաղոնիկեցւոց առ կին մի կախարդ, որպէս ի հինան առ Բարպիւ՝ երևոյթարդին պատմին գործք ի ձեռն կախարդին, տուեալ զինքն ի ծառայութիւն հօրն ամենայն չարեաց. որ ի ձեռն պոռնկական դիւին ջեռեալ թագուհւոյն՝ առ զնա և կայոյց զնա թագաւոր ի վերայ[2] աշխարհաց։ Իսկ յետ գործոյն ի գլուխ ելանելոյ, ըստ օրինի թագաւորաց յեկեղեցիս ի հարկէ երթեալ ի տօնս տէրունականս, ոչ կարացեալ համբերել չար դիւին, յիւրմէ ապստամբ զնա կարծելով։ Եւ զայս այնու հաւաստեմայուցանեն՝

1. Ի միում օր. ի բնէ առնի։ 2. Միկու օր. ի վերայ առնելոյն աշխարհաց։

որ ասեն, զի յառաջ թագաւորն ի թէսպոնիկն կայր, զոր կարծէին առ կախարդին լինել։ Այլ թէպէտ այսպէս, թէպէտ այնպէս, սակայն մինչ ի վախճանն ոչ հեռացաւ ի նմանէ այն[1] որ լըլկէր գնա։

Ի սորա թագաւորութեան եղև մեծ կոտորած զօրացն Հոռոց՝ ի բերդապատէն որ կոչի Բերկրի, որ է ի վիճակի Արծրունեաց աշխարհին, զոր վաղնջուց յափշտակեալ էր Պարսից՝ հանդերձ իւրովք գաւառակերօքն, և ունէին ընդ ձեռամբ։ Յորոց վերայ եկեալ Կաւատիկայ որդի՝ որ Վասպուրականի գաւառապետն էր՝ բազում զօրու, առ զքաղաքն և կացոյց գունդս հեծելոց պահապան քաղաքին։ Յայնժամ այլ որդի վոխանորդեաց զիշխանութիւն նորա։ և առեալ զզօրն երթեալ գաղարեաց հեռագոյն ի տեղւոջ ուրեք որ կոչի Արծակ, վասն առատութեան դարմանին և այլ պիտոյից հեծելոց։ Իսկ մէր քաղաքին, որում անուն կոչեր Խարիկ, ի բերդին արգելական եղեալ՝ ազդ առնէ առ գլխաւորս Պարսից աշխարհին։ Որք յանկարծակի ձայն առեալ միմեանց՝ ի մի վայր ժողովեցան, և հասեալ ի վերայ քաղաքին պաշարեցին զնա պատնիշաւ։ Իսկ զօրքն Հոռոմոց յանառակ գործոց և ի գինւոյ լծմըրեալ, ոչ կարացին զգուշանալ անձանց։ Այլ և պահապանն Խրայելի զերծ ի նոցանէ զօդնականութիւն իւր։ Յորոց վերայ սուր եղեալ կոտորեցին զոմն իբրև քսան և չորս հազար։ Եւ այս եղև ոչ վասն արդարութեանն Պարսից, այլ վասն անօրէնութեան մերոց զօրացն, որք հարան ի սուր դառնութեան ըստ առաւն բանի, եթէ «Չչարան չարաւ կորուսցէ»։ Իսկ զօրքն որ յԱրծակ՝ ոչ ժամանեցին նոցա յօդնականութիւն։ Եւ առեալ զօրացն Պարսից զկապուտ և զաւար ապանեցին՝ չոգան յաշխարհն իւրեանց։ Բայց ի ճանապար-

1. Երկրորդ օր. այսպէս չար։

հին, զանգի ունէին բազում կալանաւորս, հրամայէ Թարխին յիջևանին զսա անձին փորել զերկիր, և զկապեալսն գենուլ ի վերայ փորուածոյն՝ մինչև լի իսկ լինել, և մեռա լուացաւ արեամբ ոտանեցոյն առ ի հանդուցանել զայրուց սրտին։

Իսկ ի գալ երկրորդ ամին, դարձեալ այլ զօրք առաքեցան ի Թագաւորէն, որք եկեալ մեքենայս և մանդիսիս եդեալ, սկսան փլուզանել զպարիսպ ամրոցին։ Եւ տեսեալ որք ի բերդին էին՝ թէ ոչ գոյ նոցա հնար ապրանաց, զանգի և բազումք իսկ մեռան ի նոցանէ, ապաչեցին զզօրապետէն՝ զի արձակեացեն զնոսա առանց վնասու յաշխարհն իւրեանց. և ինքեանք կալցեն զամուրս և զպատանեկսն նորա։ Որք երբև լսան՝ արարին սրպէս և ասացն, և յայնմ օրէ և առ յառաջ բարձաւ սէրսելթիսն Պարսից ի տեղւոջէ անտի։

Ի սոցա ի սկզբան Թագաւորութեանն՝ խաւարեցաւ[1] արեգակն յաւուրսն Աբգայ, յաւուրն սրբալթու ի գառնալ աւուրն, էր և Թուականիս մերոյ չորեք հարիւր ութսուն և երկու ամ։ Զոր տեսեալ բազումք ի գիտունց, կարծեցին զոլ զձնունդ Նեռին զօրն գայն, կամ մեծամեծ չարեաց գուշակ։ Որ եղև իսկ յաւուրս մեր, յորս պատմութիւն բանիս առաջնորդեալ տանի զմեզ, զոր տեսաք աչօք մերովք զառաւածատատ հարուածան, և զնորանշան պատուհասն որ եհաս ի վերայ տանս Հայոց վասն մեղաց մերոց։ Նաև յառաջ ժամանակաւ այլ ինչ մեծ նշան երևեցաւ, որ յոյժ հիացուցին բերէր տեսողացն. որ էր նման նշանացն վերջին աւերածին Երուսաղեմի, զորմէ սպառնալով փրկիչն ասէր, թէ «Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց՝ որպիսիք ոչ եղեն ի ներքոյ ի սկզբանէ արարածոց, և մի՛ այլ լիցի»։ վասնորոկ զի ի սէրն և յարարչին իւրեանց կատեցան ժամբք կարծելով զնա։ Այլ մի Աստ-

1. Երկու օր։ արեգակն յառնելոյն արեւուց։

նեաս անուն ի մէջ քաղաքին Երուսաղեմի կա-
ցեալ՝ քարձրաձայն ազազակաւ ողբս առեալ, ա-
սէր. վայ Երուսաղէմ, վայ քաղաք արեան. Հասին
աւուրք վրէժխնդրութեան քո, և որ այլ եւ. զոր
մեծն Եսայի յեկեղեցական պատմութիւնս նշա-
նակէ: Նոյնպէս և ասա ի մերում ժամանակիս,
նմին նման այր մի անձանօթ ամենեցունց, անդր,
անաւրէն, յարևելից կողմանէ գալով, ընդ Ապա-
հունեաց և ընդ Չարքայ դաւառն անցեալ, ի
Մանանտալ իջեալ և յեկեղեցւոյ անդաստանալի գնա-
ցիւք, զայսոսիկ ի բերան առեալ ասէր անդադար
ի տուէ և ի գիշերի. եղո՛ւկ գիս, եղո՛ւկ գիս,
բարձր բարբառով, և այլ աւելի չասէր ինչ: Եւ
եթէ ոք հարցանէր թէ Ուստի՞ կամ յորմէ՞ գա-
լուէ ես, կամ ուստի էր ասեան գայդ, չտայր ինչ
պատասխանի. այլ հանապազ զնոյն ասէր և յա-
նելոյն ոչ դադարէր: Զոր տեսեալ անմիտ մար-
դիկ՝ իմացան անկեալ ի մոտացն. բայց իմաստունքն
ասէին. Այդ եղուկդ ամենայն երկրի լինելոյ է:
Արդ այս առաջնոր գիտեմ ասել բան. այլ մեք
ի կարգ պատմութեանս դարձցուք յառաջ առա-
ջեալ թագաւորս:

Սա զբեռորդին իւր կեսար անուանէ. և կե-
ցեալ ի թագաւորութեան ամս եօթն և ամիսս
ութ, հիւանդացեալ զբուն մահու չերանի: Իսկ
թագուհոյն զկեսարն՝ իւր յորդեկիր արարեալ,
թագաւորեցուցանէ ի տեղի առն իւրոյ. այլ նա
փոխանակ չնորհ առնելոյ նմա վասն բարեացն՝
զոր արար նմա թագուհին, խորհեցաւ ազգակա-
նօք իւրովք ի հեռաբնակ կողմս յաքսորս առաքել
զթագուհին, որպէս զի սեփհական իւրեանց լի-
ցի իշխանութիւնն, զոր և արարին իսկ: Իսկ քոյր
թագուհոյն՝ որում անուն ճանաչիւր Թէոմու-
րա, կոչէ զդստերս քաղաքին և ձանուցանէ նա-
ցա զնեղեալն: Որք իբրև լսան, ձայն առեալ ա-
բանական զօրուն՝ առ ինքեանս հաւաքեցին.
և բանութեամբ ի վերայ հասեալ, խնդրէին թէ

ցոյց մեզ զմեր ծիրանեփառ թագուհին, որ ի հատուց և ի հարց ունի զժառանգութիւն թագաւորութեանդ. քանզի բազմաց կարծիւր թէ մեռեալ իակէ։ Իսկ նա իբրև եառնս զբռնութիւն նոցա, յերկիւղի լեալ վտարեալ զարձուցանել հրամայեաց յաքսորանացն զթագուհին։ Զոր իբրև եառնս Թէոթուրա զբոյրն իւր, իակոյն հրամանատայ ունել զթագաւորն իւրեանց ազգականօքն և որք նոցա մտերիմք էին, իսկ թագաւորն փախըստական եղեալ՝ կամէր յաւազ եկեղեցին մտանել, և ընդ սեղանովն թագչել և այնու ապրիլ։ Բայց ոչ կարաց ժամանել. քանզի հետամուտքն վտիթով հասեալ և կալեալ զարձուցին, և յանտուրբ տեղւոյ յերկիր ընկեցեալ խաւարեցուցին զլուսաբանս նորա, և որ Դիմեալիկան կոչիւր և զայրց բազմաց. և հրամայէ զտունս նոցա յաւար, յաւեր և յապականութիւն զարձուցանել։ Զոր չարժեալ քաղաքն առ հասարակ, բակում ատրաւութիւնս արարին. և զմեծամեծ և զպեղեցիկ ապարանս մինչև ի հիմունս քակեալ՝ յապականութիւն զարձուցին, Եւ այնպէս[1] ծանրացաւ խռովական ամբոխն յաւարառութիւնս խանձեալ, մինչ զի զպարիսպն պալատին խրամատեալ՝ բազում դանձս ի թագաւորական գանձուցն արտաքս պեղեցին. զոր հաղիւ կարացին դադարեցուցանել զամբոխն՝ զլխատուրքն բաղաքին, արեգական օգնական լինելովնոցա՝ զծայրս արևուն առ ինքն ժողովելով։

Իսկ թագաւորն որ երէկ յոսկի աթոռ նստեալ՝ հրամանս տայր սիրելեացդ, այսօր խաւարեալ ի լուսոյ՝ նստի յաթոռ նանրութեան և նախատանաց. և որ կարծէին ծովու և ցամաքի տիրել յաւխտենից, ի միում վայրկենի և զանձանց և կրուանին զիրկութիւն։ Եւ եղեն արդարև բան մարգարէին, որպէս խոտ տանեաց, որ մինչչև ի բուռն եկեալ էր՝ չորացաւ. յորմէ ոչ լցաւ բուռն

1. Երկու օր. այնքան։

հնձողին և ոչ լցան գերկք բարձողաց զորայն. նաև բարեբանութիւն անցաւորացն ոչ կարծեաց ի լսելիս։ Այսոքիկ են առօրեայ պատմութիւնք կեսարուն, որ թագաւորեաց ամիս վեց։

ԳԼՈՒԽ Ժ.

Թագաւորութիւն Կոստանդեայ որդւոյ Թէոդոսի, որ կոչի Մոնոմախ։

Եւ սա լսեալ մարգարէին տեսողութեան՝ ի լեցի մտանէ. քանզի հայր սորա ի պալատին[1] զգայեսութեան ունէր զպատիւ, յորմէ ամենայն գաւառք աշխարհին առաքին։ Յետ անկաւոր թագաւորութեան կեսարու՝ մնչեալ մատակ աւուն ի վերայ ընկերին ի խշտիս իւր, քանզի ոչ սակաւ տարակոյսք ընա պաշարեալ պահէին, զի զոք յիւրայնոց չունէր արժանաւոր թագաւորութեան. և զոր առ յորդեգիրս, և սրտի տէր և թագաւոր աշխարհաց, նա փոխարէնս զայն հատոյց նմա, զոր խան մի յառաջ նշանակեցաք։ Եւ ապա զինչ առնէ. ելանէ արտաքոյ կանոնական կարգաց, և կոչէ զայրս զայս յառաջ և առնէ այր իւր, և նաւուցանէ զնա յաթոռ թագաւորութեան։ Զոր բազումք կարծեցին սեղեխ զոլ նմա, բայց ես ոչ գիտեմ, եթէ այսպէս է և եթէ այնպէս. որպէս ինքն յիւրում հրովարտակին գրեալ էր յերախտիս աշխարհի, եթէ վասն աշխարհի խաղաղութեան ոչ խնայեցի յիս, և վասն այսորիկ յանարժան գործ համարձակեցայ։

Ի սորա առաջին ամին ապստամբեաց որդին Մանեակ, որ ունէր զարևմտեայ կողմն, այր քաջ և անուանի, և զբազում միաբանեաց ընդ իւր։

1. Ալ. օր. զգայիսուրբեան.

Եւ եկեալ բազում ժողով մինչև ի դուռն թագաւորական քաղաքին, այնքան բանայաւ ի վերայ լսոյ ուժոյ քաջութեան, մինչ զի բազումք ականջս կամօք եառն զանձինս նմա ի հնազանդութիւն. քանզի կարծեցին զնա գոլ թագաւոր վասն բազում պատերազմութեանցն որ ելանէին նմա։ Քանզի երկիցս և երիցս ելին զօրք թագաւորին և ճակատեցան ընդ նմա և պարտեալ[1] ի նմանէ, դարձան առ թագաւորն մեծաւ անարգանօք։ Իսկ ի գալ վերջին պատերազմին, յորում ուշ եգեալ էր ամենեցուն, զի զկնի այնր յաղթութեանցն՝ ամէնն նմա հնազանդեացին և արասցեն զնա թագաւոր. բայց քանզի չկարհեցաւ Աստուծով թագաւորել, այլ ի զօրութիւն ուժոյն իւրոյ ապաստան եղև, զԱբիսողոմայն ի հեռուստ ախտացեալ, արբեալ ամբարտաւանութեամբ, վասն որոյ զնորայն հատոյց զդատաստան։ Ի մէջ ճակատուն գտին զնա անկեալ, հզօր հրեշտակի ասանդեալ զոգի նորա, առանց ուրուք նմա ի դիմի հարեալ։ Զայս արարեալ և առնէ ամենիմաստապէս ամենեցուն աէրն և արարիչն, որ կարօղն է քակել զոգիս իշխանաց, ահաւոր դողով քան զամենայն թագաւորս երկրի. զի մի՛ պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր, և մի՛ մեծն ի մեծութիւն իւր, և կամ իմաստունն յիմաստութիւն իւր, որպէս ի գրոց լուաք. այլ սերամբ պարծեսցի որ պարծին և առասցէ իրաւունս և գործեսցէ զարդարութիւն ի վերայ երեսաց երկրի։ Որ է արդարև յոյժ պարծանաց և գովութեանց արժանի, և յիշատակ նորա կայ միայ յաւիտեան, և եղջիւր նորա բարձր եղիցի փառօք, որպէս ի սաղմոսարանի անդ գրեալ է։ Այսպիսի էր և մեծն Դաւիթ. որ թէպէտ ի տեսանողէն օձաւ թագաւոր, և ընդ օձութեանն ընկալաւ ոգի զօրութեան և մարգարէութեան, որ զգաստանան ի բուռն հարեալ իբրև զուլս այ-

1. Երկու օր. պարտաւորեալ։

ձեց ճեղքեր. յոր վատահացեալ, անպարտելի ակայանեն ընդդէմ ճակատեալ, զեեւլատատակ նորա պարտաքարիւ ջարդեալ յերկիր ընկենոյր, բառնալով զնախատինս յիսրայէլ. բայց սակայն բազում անգամ հալածեալ ի Սաուղայ, ներէր և անսայր կոչողին հրամանի. ոչ միայն չինդրէր բանուԹեամբ սիրել ԹագաւորուԹեանն, այլ և երկեայր ի ձեռն անկեալ հալածիչն, խնայեաց ի նա իբրև ի բարեզործ. և որ ապանանէն կամէր, սատեալ նմա ասէր. «Մի՛ մխեր զձեռն քո ի դմա, զի օծեալ տեառն է»: վասն որոյ հաճեալ Սաուղ ընդ կամն նորա ասէր. «Գոհ այր ըստ սրտի իմոյ, որ արասցէ զհաճոյս իմ»: իսկ սա ոչ ած այսպիսի զմտաւ ինչ, և ոչ անսաց Սաուղայ հրամանին. այլ կամեցաւ անձամբ առանց Սաուղայ հրամանին Թագաւորել, մոռացեալ զասացեալն հրամանն՝ որ ի ձեռն մարգարէին զԹագաւորան իսրայելի Թշնամանեալով ասէր. «Վա՛յ է նոցա զի կամեցան Թագաւորել և ոչ ինև», և որ այն ևս:

Արդ՝ ոչ եթէ Թագաւոր այս զովուԹեանց ինչ արժանի է, և վասն այսորիկ արգահատեաց ի նա Սաուաձ, այլ զաՀՌն պատէ, և զամբարտաւանուԹեան աղբիւրն խնու. որպէս առ Հրեայն փրկիչն վարդապետելով ասէր. «ՅաՀՌն Մովսեսի նստան դպիրքն և փարիսեցիքն». որ Թէպէտ ինքեանք կեղծաւորեալք էին, այլ վասն աԹոռոյն՝ հրամայէ հնազանդ լինել: Ուստի և մեծն Պօղոս խրատեալ երանելի Տիմոթէոս այնուիկ գրէ առ Հռոմայեցիսն. «Ամենայն անձն, ասէ, որ ընդ իշխանուԹեամբ իցէ, ի հնազանդուԹեան կացցէ. զի ոչ ուստեք է իշխանուԹիւն, եթէ ոչ յԱստուծոյ». չասէ զիշխանսն, այլ զիշխանուԹենէն, այսինքն զաԹոռոյն. քանզի ոչ եթէ զամենայն իշխան Սաուաձ յարուցանէ: Եւ ի վերոյ էած, Թէ «Որ հակառակ կայ իշխանուԹեանն, Սաուաձոյ հրամանին հակառակ կայ. և որք հակառակք կան, անձանց դատաստան ընդունին».

որպէս և ամա իսկ եղև։ Զի ոչ լիէ ի մարդկա-
նէ ումեքէ դառնալ, այլ յերատացի Աստուծոյ
դառաստանացն, որ զամենայն ինչ կշռով դատի
և իրաւամբք. զի ակն է նա արթուն, և ձա-
ծուկք մեր յայտնի են առաջի ամենատես զի-
տութեան նորա։ Որպէս երանելին Դաւիթ առ-
մտեալ խոստովան լինի Աստուծոյ. «Դու ծանեար
զյետին իմ և զառաջին իմ»։ Սմին նման և ա-
ռաքեալն գրէ առ Եբրայեցիան, եթէ «Զկը ինչ
արարած աներեւոյթ յերեսաց նորա»։ Զոր և
մանկունքն ի հնոցին[1] գովելով ասէին. «Որ նըս-
տիս ի քերովբէս և հայիս յանդունդս, գովեալ
ես և առաւել բարձրացեալ յաւիտեան». զի ի
բարձրութենէ տեղեացն՝ զտոյզ գիտութիւնն յայտ
արարին ըստ սաղմոսի երգոյն, եթէ «Տէր յերկ-
նից յերկիր հայեցաւ»։ Այս կերպ և բարձրն
Եսայիաս. «Աչք տեառն բարձունք են, և մարդ
տառապեալ. և խոնարհեացի բարձրութիւն մա-
րարտաւանից, և բարձրացի տէր միայն իրա-
ւամբ և արդարութեամբք, և տուրբն փառաւորեա-
ցի»։ Այսոքիկ եղեն ի սկզբան թագաւորութեան
կռատանդեայ, յորում էր թուականիս մերոյ ամք
չորեքհարիւր ինեսուն։

Իսկ զկնի երից ամաց եհաս կատարած կենաց
տանս Հայոց. քանզի ի միում ամի գրաւեալ յա-
տեաց՝ բարձան ի կենաց երկրին հարազատ
եղբարքն Աշոտ և Յովհաննէս, որ ունէին զիթագա-
ւորութիւն մերոյ աշխարհիս։ Յորում չարժեցաւ
աթոռ հաստատութեան նոցա, և այլ ոչ էառ զգ-
կայուն. յորում եղին իշխանքն ի հայրենի ժա-
ռանգութենէ իւրեանց, և եղեն պանդուխտ յօ-
տար երկիր. յորում աւերեցան գաւառք և գնա-
յին յատար տանն Յունաց։ Եղեն չինանիստ ա-
ւանք՝ բնակութիւն գազանաց, և անդաստանք նո-
ցա յարտ ոգեղով։

1. Մի օր. գոչեցով։

զունք և մեծամեծք՝ եղեն բնակութիւնք համբարուաց և ուշկապարկաց, զոր ոչխան սուրբ Մարգարէքն զամայեանսն Իսրայելի. «Անդ հան ոչնի ձագս և անոյց առանց երկիւղի պրպեա իւր»: Եղեն հանդիսաւոր տեղիք վանորէից՝ այլք աւազակաց. և եկեղեցիք որ ի նոսա՝ որ զերկնից բերէին զնըմանութիւն վան պայծառ շինուածոցն, և վան զեղեցկաշուք զարդարանացն, և վան անշէջ լապտերացն և ջահիցն վառման, որոց լուսոյն[1] առատութիւն ընդ օդոյն տարածեալ՝ այսր անդր ճոճելով՝ զաչաց ծուռ բերէր զնմանութիւն, որ ի հանդարտ ժամանակս ի քաղցրաշունչ օդոյն սղոխք աչացն վէտս վէտս ի վերայ միմեանց շրջապատին. և անուշաբուրակ խնկոցն գոլորշիք, որ ըստ առատութեան նուիրաբերացն հրոյններգործեալ զպարանանաբեր ժամանակին բալից ցուցանեն զօրինակ, որ ի ծայրս լերանց նաեալ՝ արգելուն ըզճառագայթս արեգականն: Իսկ զբնակոցսն ի նոսա որ բան բաւական էցէ առ ի պատմել զօրինակն. զքաղցրաձայնութիւն երգոցն և զանդադար սաղմոսերգութիւնն, զաստուածային գըրոցն ընթերցմունս, զհրեշտական ոճոյն զհանդէս և զվկայից զպատիս, և զմիաբարձ խորհրդացն զկան և զառ ի յաստուածայինսն նկրտումն, և այլն ևս:

Արդ այսպէս և այսքան էին յառաջ ժամանակս. այժմ է տեսանել յամենայնէ թափուր և արտ, յամենայն բարեփառութենէ մերկ և կողոպուտ զնոսա: փոխանակ քաղցրաձայնութեան երգոցն՝ այժմ[2] բուէճք և[3] ագռաւունք դասապրութք են, և փոխանակ սաղմոսական նուագացն, աստրակ և ագռաւիք երգեն ի նմա, ըստ մարգարէին՝ «քաղցրաձայնութեամբ կարդալ զձագս իւրեանց»: Ջահքն չհնչեալք, և բուրուճն անուշահոտ խնկոցն սպառեալ. և սեղան սուրբ խորհրդոյն՝ որ երբեմն

1. Մի օր. որոյ լուսոյն ա-ռոյգութիւնք:
2. Մի օր. բուրկաք:
3. Երկու օր. դասապետութիւնք:

ժամանակաւ իբրև [1] զնորահարան առագաստի չըքնաղապէս զարդու զարդարեալ էր՝ պակ վառաց ունելով ի դէմս իւր, այժմ է տեսանել տեառն թ՛ն ողջմելի և բազում արտասուաց արժանի, մերկացեալ ի զարդուց, լցեալ վշով, լեալ հանդրտանք ազատուց։ Ամենեքեան երկայնի [2] պիտոյ բանի պատմուխեան, նաև վերին չնորհին օգնականութեան, որպէս զի կարճեմք ի [3] նպատակ բանիս ուղղել։ Այդ ի վերջ [4] յառաջան տանելի է մեզ զպատմութիւնս։

Յորժամ մեծն Կոստանդին հիւանդացաւ հիւանդութիւն՝ որով և մեռաւ իսկ, հրամայ տայ որը մերձն կային եթէ ելեալ խնդրեցէք զայր ոք ի Հայոց գ՛ր և գտանիցէք, և ածէք այր։ Եւ եղեալ հրամանքն գոն ի մահիճս վախճանեցաւ։ Իսկ նորա առեալ զնաամանքն պահեաց առ իւր մինչև ի ժամանակս Միխայելի թագաւորութեանն, և վաճառեալ նմա՝ առ գանձ բազում։ Ո՛վ գառն վաճառոյն այնորիկ. քանի՛ արեանց զանձն պարտական կացոյց. քանի՛ եկեղեցիք ի ձեռն վաճառոյն այնորիկ աւերեցան. քանի՛ գաւառք անմարդ, ամայի գարձան. քանի՛ մեծամեծ աւանք մարդամեծ ի բնակչաց եղեն։ Այլ զբովանդակն յիւրում տեղւոջն ասացուք. և մեք զկարգ պատմութեանս սկսաք՝ յառաջ վարեացուք։

1. Այլք. զևոր հարսն։
2. Այլ օր. երկայնի պիտոյի պատմոչքիւն. Միւսն, երկայնի պիտոյքանի պատմոչքեան։
3. Այլք. վիպատակ կամ վէպատակ։
4. Մի օր. յառաջիևան։
5. Այլք յաւելուն. և տեսեալ զևս թագաւորին։

Արդ ի հասանել համբաւոյ մահու թագաւորացն ի լսելիս ինքնակալին Հոռոմոց, և պտեալ զկիր նամակին Հայոց, իբրև իւրեան սեփհական ժառանգութիւն՝ հոգ տարաւ առնուլ զքաղաքն Անի և զաշխարհն: Իսկ մի ոմն ի գլխաւոր ազատացն Հայոց Սարգիս անուն՝ եղ չուք անձինն թագաւորել ի վերայ տանն Շիրակայ և որք շուրջ զնովաւ գաւառք. զի զամենայն գանձս գտեալ ի տան թագաւորին Յովհաննիսի՝ յինքն ժողովեաց. վասն զի ի մահուան նորա նա էր հոգաբարձու նմա: Իսկ վահրամ այր հզօր և անուանի, և բարեպաշտութեամբ յոյժ վեհ, որպէս թէ ոչ որ հաւասար նմա Պալհաւ[1] հանդերձ իւրովք ազգակցօք որդւովք և եղբօրորդւովք իբրև եբեսան[2] ազատք, ոչ միաբանեցան ընդ նմա, այլ կոչեալ առ ինքեանս զԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց, և խնամութեամբ և հնարիւք մուծին ի քաղաքն:

Իսկ Սարգիս իբրև եաես զեղեալսն, զգանձս թագաւորութեանն առեալ՝ ի ներքին ամուրսն մտանէ յանառն Անի: Այլ Գագիկ այրական քաջասրտութեամբ միայն ինչեալ առնա, և ողբական բանիւք հաւանեցուցանէ զնա. և նա ելեալ յամրոցէն երթայ ի բերդաքաղաքն որ կոչի Սուսմա-ռի. այլ զամուրն ոչ տայ ի Գագիկ, և ոչ զայլ ամուրսն զորս ընդ ձեռամբ ունէր. և երթեալ անդ՝ դարձեալ խորհի զխորհուրդ նանրութեան, տալ զոր ունէր՝ ընդ ձեռամբ Հոռոմոց, և ելանել առ նոսա: Իսկ Գագիկ սակաւ արամբք երթեալ մտանէ ի մէջ բանակին՝ ի խորանն ուր էր Սարգիսն, և ձերբակալ արարեալ զնա, մտանէ ի քաղաք թագաւորութեան իւրոյ: Եւ զոր պարտ էր պատասխանն բառնալ ի կենաց, նա զՍաւուղայն խորհեցաւ, զերկերդ Ագապ խնայեալ՝ ընդ իւր ի կառն նստուցանէր. վասն որոյ զՍաւուղայն

1. Երկու օր. ազգաւ պալհաւ: 2. Մի օր. ազատոք:

ընկալաւ զհատուցումն, կեանք որ քան զմահ գառնագոյն է։

Յայսմիկ[1] աւուրս հետամուտ եղեալ զօրքն Հռոմոց, չորս անգամ զկնի միմեանց մտին յաշխարհն Հայոց, մինչև մարզպետի արարին զերկիր ամենայն սրով և հրով և գերութեամբ։ Զոր զինչ անկանակ չարեացն[2] յորժամ զմուտս ածեմ՝ յիմարի անձն իմ և ափշին միտք իմ, և յահապին զարհուրանացն զդող առեալ ձեռինս՝ զոճ տողիս ոչ կարեմ յառաջ խաղացուցանել. զի գառն է պատմութիւնս, և բազում ողբոց արժանի։

Աշխարհ՝ որ երբեմն ժամանակաւ իւրև ընդ դրախտ անկախիտ առակի իւր, կանաչագեղ, տեղւոյն, պտղաբեր, զեղեցկաշուք և երկանիկ անուանեցան զուցանիւր. քանզի իշխանք նահէին յիշխանական գահու զուարթահայեաց դիմօք, և զպարնանաբեր ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն՝ վառ ի վառ գունովք առակի կացեալք, ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէպ. ուր և ձայնք փողոցն և ձնծղայից և այլ երգեցողական արուեստիցն զլսողացն անձինս լինէին առնէին ուրախական բերկրանօք։ Այդպանօր և ձերք նահէին ի հրապարակս հարկևոր և պատուական ալեօք բարգաւաճեալ. այլ և մարք զմանկունս ի գիրկս ընկալեալ, և մայրենի գթովքն աղէխարշեալ, վանն առատ ուրախութեանցն մոռանային զտխրական ժամանակս երկանց, զօրէն աղաւնեաց զնորափետուր ձագօքն միշտ թռթռելով։ Զի՞նչ ասացից և զհարատացն ի անեկի, և զինեայսին յառագաստի զհրահարուստ ըղձից զբորբոքումն և զանժոյժ բնութեանն զհակամտութիւնս։ Այլ և վեր տանելի է մեզ բանս, առ հայրապետական զիտոն և ի առ թագաւորական պատիւն. զի մինն զօրէն առնու խաղացեալ ի պարզևացն հոգւոյն՝ ի ձեռն վարդապետական շնոր-

1. Մի օր. յետ այսորիկ յաւուրս։
2. Մի օր. յաւելու, վերոյ աշխարհին։

հին, յօղէր զյօղ կենացն. որով պարարտացեալ պաղատեցեր եկեղեցւոյն դըրախտ, արժան պահատանս ի վերայ պարապաց նորա կարգելով զառ ի յինքենէ ձեռանատրեալն։ Իսկ Թագաւորն յառաւօտինն յորժամ ի քաղաքէն ելանէր, զոր էն վեհայն որ ելանէ յառապատէ իւրմէ, կամ որպէս առնչինային արուսեակն որ ի գլխոյն արարածոց բարձրանալովջն զամենայն տեսանելիս յինքն ձգէ, այսպէս և նա պաղպաջէր փայլուն հանդերձիւք և մարդարտահուռն Թագին, և զամենայն մարդ ի տեսութիւն և ի զարմանս յուսյանէր. որ և սպասակամատ նժոյգ՝ ոսկեզօծ զարդիւք առաջի ընթանալով, և ճառագայթից արեգականն որ գնամաւ հարկանէր՝ շլացուցանէր ըզտեսողսն տեսանելիս։ Իսկ զօրացն բազմութիւնն խառն առաջի ընթանալով՝ զօրէն ձայնային աբեր[1] զմիմեամբ կուտակելով։ Նաև[2] անապատական վայրքն լցեալ և խճողեալ էին կրօնաւորական դասուք, մինչ զի և զպարակս զգեօղս առ բարձնաձանձ քահեալ՝ առնէին բնակութիւն կրօնաւորաց։ Զայս և որ տոչինանէ, առաւել ունէր աչխարհս մեր։ Եւ զայս զի դրեցի, զի յորժամ զտցին հակառակն պատմեցից, ամենեցունց չարժեցից զարտասուան։

Արդ այժմ Թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրև զգերի կալանաւոր նստի ի հեռաբնակ տեղիս. այսպէս և հայրապետական ամբոն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր զիմօք իբրև զկին նորահարսն՝ ծնօդեալ յայրիութեան։ Հեձելազօրն անաէրունչ չրջեալ ոմն ի Պարս և ոմն ի Յոյն, և ոմն ի վիրս։ Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի ճոխութենէ, մնչեն ուր և են իբրև զկորիւն առիւծուցն ի կչտիս իւրեանց։ Ազգունական ազարանքն առեալ և անմարդի։ Մարդաբնակ աչխարհն Թա-

1. Մի օր. զմիմեանս։ 2. Երկու օր. անապատոգոյն։

վտր ի բնակչացն։ Ոչ լսի ձայն ուրախութեան
ի կուիմս այդեաց, և ոչ բարեբանութիւն առ կո-
ղոտս հնձանի։ Ոչ խաղան մանկունք առաջի ձնո-
ղացն, և ոչ նուագին ալթառով ձեռք ի հրապարակս։
Ոչ լսի ձայն հարսանեաց, և ոչ զարդարին առա-
գաստք[1] հարսնարանին։ Պակասեաց այս ամենայն
և կորեաւ և ոչ ևս յաւելուցու յառնել ըստ[2] սաղ-
մոսին ձայնին։ Այժմ յորդս փոխեցաւ մեզ ա-
մենայն, և ուրախութեան պատմուճանն այն յարջ-
նազգեաւ խորդ փոխեցաւ։ Ո՛ր լսելիք տանկցին
գիշուտուութեանս մերոյ գպատմութիւն։ Ո՛ր սիրտ
քարեղէն, որ ոչ լքանի հառաչմամբ և բեկանի
հեծեծալով։ Ժամ է ինձ յերեմիայի ողբոյն խառ-
նել ընդ մեր հառաչանս. «Ձանապարհք սիոնի,
ասէ, սգան, գի ոչ գք է որ մտանէ»։ Այսքիկ
ասացան յայնժամ յաւերն երուսաղէմի, բայց
կատարեցաւ այժմ։

Արդ այս ամենայն ի վաճառէն յայնմ հանդի-
պեցաւ Հայոց՝ զոր յառաջ ասակաւ մի յիշեցաք.
այս վաճառ անմարդապոյն գոլ թուի ինձ քան
զՅուդային. քանզի անդ թէպէտ վաճառօղն ընդ
պարսաւանօք, այլ վաճառն եղև գինք փրկութեան
ամենայն աշխարհի։ Որպէս մեծն Պետրոս յընդ-
հանրական թուղթն գրէ. «Ոչ ասէ ոսկեղինօք
և արծաթեղինօք գնեալ ազատեցայք ի ձեր[3] հայ-
րենաւոր անօթի պաշտամանցն, այլ արեամբ որդ-
ւոյն Աստուծոյ»։ Իսկ սոյն վաճառօղն յայժ ապա-
ռումն և ամարդի, գի այսքան չարեաց գանձն
պարտական կացոյց. գի այդի զոր անկեաց տէր,
և մշակեաց Լուսաւորչն մեր իւրով հնգետասա-
նամեայ քրանալիր աշխատութեամբն, նա քա-
կեաց գցանկ նորա և կործանեաց զաշտարակ
նորա, և արար զնա կոխան անցաւորաց. մինչև
ապականեաց զնա խոզ անտառի, և կինճ վայրի

1. Մի օր. հարսանից, յայլ. լիւմ, առագաստի։
լիւմ, հարսանեաց։ 3. Մի օր. հայրենական։
2. Մի օր. Սողոմոնի, յայլ.

ճարակեցաւ ի նմա, ըստ պաւթական[1] երգոցն։ Այլ այսոցիկ ամենեցուն լուր առ սէր հասցէ, և իրաւունք նմա ի տեառնէ եղիցի. և մեք ի մերն դարձուացուք զոճ բանիս։

Այլ ի չորահարիւր յինեանն և չորս թուականին առաւ Աքի, ոչ պատերազմի օրինիւ, այլ պատիր բանիւ. քանզի երգմամբ և խաչիւ հաւանեցոյցին զԳագիկ՝ հրամանաւ թագաւորին, թէ Միայն ի տեսանելն զքեզ, դարձուցից ի քեզ զթագաւորութիւնդ քո, և գրեցից զքեզ ժառանգ յաւիտենից աչխարհիդ և քաղաքիդ քոյ. քանզի իմաստունն երգնու և անմիտն հաւատայ, որպէս[2] իմաստնոցն բերին բանք. և դարձեալ, թէ «Բանք ստոց պարարտ են իբրև զլոր, և անմիտք կլանեն զնա». հաւատայ վասն երգմանցն և խաչին, եթէ վասն խաղաղութեան մտացն եթէ վասն երկիւղածութեան վարուցն՝[3] ոչ գիտաց. տուեալ ըզբանալի քաղաքին ի Պետրոս, որ յայնժամ ուներ զաթոռ հայրապետութեան Լուսաւորչին մերոյ, և յանձնեաց ի նա զամենայն հոգս աչխարհին մեծաւ գաչամբ և ուխտիւ. եւ ոչ եկաց ի պատուէր վահրամայ և այլ ազատացն որ թագաւորեցուցին զնա, այլ նենգաւորին Սարգսի սպրդելոյն լուեալ՝ եկ ի քաղաքէն, և չոգաւ ի Յոյն զանդարձ ուղևորութիւն. իբրև զձուկն ի կարթէ ըմբռնեալ կամ իբրև զհաւ ի ծուղակաց։ Զոր տեսեալ թագաւորին՝ ոչ յիշեաց զերգմանն, և ոչ զխաչի զմիջնորդութիւնն. այլ առ իբր արգել, և խնդրէր թէ Տուր զԱնի, և ես տայց քեզ փոխանակաւ զՄելիտինէ և զգաւառան որ շուրջ զնովաւ։ Այլ նա ոչ առնու յանձն։

Եւ յերկարել խնդրոյ այսորիկ, Գրիգոր որդի քաջին վահակայ, եկեալ և նա գնաց առաջի թագաւորին. քանզի այր իմաստուն էր և խելամուտ յոյժ աստուածային գրոց, որպէս թէ ոչ այլ ոք։

1. Երեք օր. ողբոցն։ բանիք։
2. Մի օր. իմաստնոյն բերին 3. Յերկ. օր. պահասէ ոչ գիտեմն։

Իբրև եառնս եթէ ոչ են թողլոց զԳադիկ ի տեղի
նը, յառաջ կացեալ տայ զբանալին ՅԿնոյ ցԹա-
գաւորն, և զամենայն զիւր պհայրենի ժառանգու-
թիւնն. և մեծարեալ ի նմանէ՝ առնու զպատիւ
մագիստրոսութեան, և զտեղին բնակութեան ի
սահմանս Միջագետաց զեօղս և զքաղաքս, զրով և
ոակի մատանեաւ յազգէ յազգ մինչև յաւիտեան:
Իսկ քաղաքացի զվաւերքն որ նաեէին ՅՍնի,
իբրև տեսին թէ արդեալ Գադիկ ի Յոյն, խոր-
հեցան երթեալ ի Դաւիթ տալ զքաղաքն[1] ի Դա-
նացին, քանզի քոյր Դաւթի կին էր նորա.
երթեալ ի Բագարատ թագաւորն Սփխազաց:
Իբրև եառնս հայրապետն Պետրոս զայնպիսի խոր-
հուրդս, թէ ում և իցէ՝ ի գնալ է քաղաքս, ա-
ռաքէ առ այն որ ունէր զիշխանութիւնն արևելից
կողմանն, որ նաեէր ի քաղաքին Սամոսատ, զոր
ասէն ի հինան չինեալ Սամփսոնի և գրէ, թէ
Ծանո՛ր թագաւորին թէ մեզ զինչ հատուցանէ
փոխարէնս, և ես տայց զքաղաքս և զայլ ամուրս
որ յաշխարհիս են: Իսկ նա իբրև լուաւ զպա-
պէս ձանոյց թագաւորին. և լուեալ թագաւորին,
դանձիւք և իշխանութեամբ հաճեալ զկամս նորա,
և այնու տերեցին Ընդ և ամենայն աշխարհին:
Իսկ Գադիկ աներակատ մնաց առ թագաւորն,
յորում առ մարդասիրութեան տեսեալ նմա տե-
ղիս, զոր ինքն կամեցաւ, որ յոյժ պակասէր ըս-
արժէին Ընդ և այլ աշխարհին, զնորհակալին
և զարիս տուրան կամուղիկոսին հատուցին, յոր-
մէ զքաղաքն առին: Եւ Գադիկ հրամանաւ թա-
գաւորին առնու իւր կին զդուստր Դաւթի որդ-
ւոյ Սենեքերիմայ, և տերէ նորին բաժնին. քան-
զի Դաւիթ վաղճանեցաւ չունելով այլ զաւակ ժա-
ռանգաւոր:
Իսկ իշխան ոմն Ախտ անուն, որ յառաջ կա-
լեալ էր զտէրութիւնն արևելից, և գնա առաքէ

1. Երկ. օր. երթեալն ի դռնացին:

թագաւորն տեղակալ քաղաքին Անոյ՝ Որոյ եւ կեալ՝ անչափ պատուով մեծարէ զՀայրապետին պետրոս, եւ նուաճէ զաշխարհն ընդ ձեռամբ. եւ ինքըն բազում զօրօք խաղայ ի վերայ քաղաքին Դաւնայ՝ իսկ Ապուսաւր առ քաղաքին պատեբազմ տեւեալ ընդ նմա, անչափ կոտորած առնէ ի դուռն քաղաքին, յորում տեղւոջ մեռաւ մեծ իշխանն Հայոց Վրահամ հանդերձ որդւովն որ մեծ տուգ հասոյց Հայոց: եւ կեցեալ Աբխան ի տէրութեանն Հայոց, փոխանակէ զիշխանութիւն նորա կամենաս ոմն, ի չորս հարիւր ինեաւն և երեք թուականիս մերոյ. և եկեալ ոչ բաս առաջին պատուոյն մեծարէ զՀայրապետին, եւ ականի զրով ամբաստան լինել զնմանէ առ թագաւորն, և խաբանօք հանէ զնա ի քաղաքէն ասելով. Եկէ հրամայեալ է քեզ թագաւորն առ քո բնակութեան ի Պարին գաւառ յԱրծէն ա-ւանի: եւ եկեալ հայրապետին գալ մեծանիա և ի չահաւան քաղաքս մեր, և մեծաւ ուրախութեամբ լցոյց զանձինս տէտղայն, որ յանկային նմա: եւ էր ժամանակն մերձենալ ի տօն սրբոյ Աստուածայայտնութեանն. իսկ ի գալ մեծի տոնին իջեալ[1] այնչափ բազմութեամբ ի յորդանան գետ ջուրն՝ որ լինի ի լերանցն որ ի հիւսիսոյ կողման գաչեին են. և կատարեալ զխորհրդածութիւն աւուրն վաւաւորապէս, որպէս և վայել էր. իսկ ի ժամ հեղոյ զաէրունական ւղն ի ջուրն, այր մի[2] սահիկ յատակ եկեալ ի բազմութենէն՝ կանդրէ մկրտել ի ջուրն: իսկ նորա հարցեալ պատճառն վասն որոյ զայն կանդրէր, տեղեկացեալ ի նմանէ յանկալ նմա լինել քրիստոնեայ. և հրամայէ նմա իջանել ի ջուրն: իսկ մեռանալիրն մերձ կալով նմա, առեալ զչին ի ձեռն և հարեալ[3] զձեռամբն, եբեկ զչին՝ առատապէս

1. Ա.յլ օր. եղեալ այնչափ բազմութիւն . . . հիւսիսոյ կողմն:

2. Մի օր. այր մի այլազգի տղայ:

3. Ա.յլք. ձեռնարկի:

հեղլով զնա ի վերայ նորակնքին և ջրոյն. և յապակւոյն բեկոր ինչ հարեալ կարճվէր խոցեաց զձեռն նորա, յորմէ թիւն արեան յերկիր հեղլով. զոր տեսեալ բազմայ ընդ խարանօք արկեալ զեղեալն, ասելով՝ թէ Զէ բարւոյ ինչ նշան. որ և ի նոյն աւուրս կատարեցաւ իսկ։ Քանզի մինչդեռ ճաշաժամուն ի սեղանն էին, հասին կալանաւորք և առին զնա, տարան եդին ի բերդն՝ որ կոչի Խաղտոյ Աւիճ։ Եւ ապա ածեալ ի Հայոց զբեռնորդի նորին զԽաչիկ անուն, և եդեալ ի բերդին որ կոչի Սեաւ քար. և ճնացին անդ մինչև մերձ ի զատիկն։ Եւ ապա հանեալ զնոսա անոի, տարան ի կոտանդնուպոլիս առաջի թագաւորին. զանգի և զԱնանիա զերէց եղբայրն Խաչկայ յառաջ տարաւ ընդ իւր նեղբինի ոմն, որ ունէր զպատիւ կէս թագաւորութեան։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս կոտորածին որ եղեւ ի գաւառն Բասենոյ և ի լեառն որ կոչի Սմբատայ։

Ի սոյն ամս բացաւ դուռն բարկութեան յերկնից ի վերայ աշխարհիս մերոյ. և չարժեալ զօրք բազումք ի թուրքաստանէ, որոց երիվարք արագունք իբրև զարծուխս, և ամբակք նոցա իբրև զվէմս հատատուն. աղեղունք լարեալք, և սլաքեալ նետք նոցա, գօտևորեալք քաջապէս և անլուծանելի ունելով զկրացս կօշկաց։ Եւ ելեալ ի գաւառն վասպուրականի, յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլք քաղցեալք անյագեալք ի կերակրոյ. և եկեալ մինչև ի գաւառն Բասենոյ, և մինչև ի դաստակերտն մեծ՝ որ կոչի Վաղարշապատ, քանզեալ ապականեցին գաւառս քան և չորս սրով և հրով և գերութեամբ։ Ողոր-

մագին և բազում ողբոց և արտասուաց արժանի է պատմութիւնս։ Որք երբեմն պահուծս ընթացան, և երբեմն կորնչեն առհասարակ անողորմաբար արկին զիւրեանս բազմաց պէշ գապանաց և թռչնոց երկնից. և կամէին այնու ձեռնարկութեամբ գալ ի քաղաքն կարնոյ։ Բայց որ ծովու եղ սահման՝ ասելով, «Ցայդ վայր եկեսցես, և այլ մի՛ ևս յաւելցուս, այլ այդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո»։ Նա արկ զևսաւոր թանձրամած առաջի նոցա, և արգել զնոսա յընթացից իւրեանց։ Զայս առնէ ըստ իւրոյ անճառ իմաստութեանն, որպէս զի ահիւ նոցա մեք խրատիցիմք, և նոքա ուսանիցին թէ ոչ իւրեանց զօրութեամբ ինչ արարին. այլ ձեռն որ արգել զնոսա հզօրապէս, նոյն արար ճանապարհ գնալոյ նոցա։

Արդ հեղ զբարկութիւնն իւր ի վերայ մեր ի ձեռն ազգի օտարի, վասն զի մեղաք նմա. և դարձեալ զղջացաւ ի չարեաց[1] իւրոց ածել ի վերայ մեր, զի ողորմած է. վասն որոյ ոչ ի սպառ բարկանայ և ոչ յաւիտեան պահէ ոխս։ Մինչև ի մէնջ բռնագաւաի՝ զիրաւացն դատաստան ի մէջ բերելով, զի դատաւոր արդար է. և մինչև կանխէ յողորմութիւն, վասն զի հայր գթութեանց է. և մինչև զղջանայ ի վերայ չարեաց մերոց, քանզի Աստուած ողորմութեանց է։ Որպէս և առաքեալն իսկ երկոսեան՝ եղոյց առ մեզ, ըստ արժանահաս վրէժուցն ձանրացոյց զձեռն իւր ի վերայ մեր. և գարձաւ փութապէս անցոյց զբարկութիւն իւր, զի մի՛ ի սպառ սատակեսցէ զմեզ։ Այլ մեք զփառաւորն ի խոտացաք զձանրաձրութիւն, և զյոյժ յիմարին յիւրոց[2] ախտակցաց, որ երբեմն անկեալ՝ խոստովան լինի ասելով «Մեան Աստուծոյ է այս». և յանցանել բարկութեան պատուհասին՝ արբեալ ամբարտաւանութեամբ ասէ. «Ո՛չ գիտեմ

1 Մի օր. վերոց։
2. Այլ օր. ախտակրաց, և այլ. ախտաւորաց։

*պահը, և պիտոյէլ ոչ արձակեմ»։ Մինչև ուղեր-
ձեաց լինքն վերջին պատուհասն՝[1] բնակից լինելով
անդնդային խորոցն։ Բայց բարւոք առէր վաստ-
չուէրն, թէ մնան Աստուծոյ է այս. զի ձեռն
տան մատամբք ունի առ գործն զկատարելու-
թիւն. որպէս և անդ զմիոյէ ակաեալ՝ ի տան
աւարտեաց հարուածոց զիրաս, և ապա արձա-
կեաց պիտոյէլ։*

*Արդ ի հասանել բարկութեանն և ի բորբոքել
հրատին և ի չարժել եղեռնաւոր չարեացն, ահիւ
ահաբեկ եղեալ՝ յոյժ զդողլ հարեալ զարհուրե-
ցաք. բայց ողորմեցաւ Աստուած, և խաւարտ
վակեաց զճանապարհս նոցա, և խափանեաց զըն-
թացս արշաւանաց անօրինացն։ Կարծական եղև
մեզ բարին, և չմարդոյ գոյք առ չնարհակալին.
զի զոր պարտ էր ի ձեռն խրատու եղբարց մե-
ռոց ողջախոհանալ մեզ, և փութալ կանխել առ
մարգարէն, և ուսանիլ ի նմանէ զկեցուցանօղն
խրատն, «Դադարեցէք, ասէ, ի չարեաց ձերոց,
և ուսարուք զբարիս գործել», և որ գհետ սոցին
գան բանք. և յանձանց ուղղութենէ հաչեցու-
ցանել զԱստուած, և չիկուցանել զդիհենաբորբոք
պատուհասն, և զբարձրացեալ ձեռն խնարհե-
ցուցանել ի բարկութենէ ի ներումն. նա ի մե-
ռացնա եղև մեզ այս, և ոչ ծագեաց անգամ ի
սերս մեր գիտութիւն նորա. այլ որ անօրինելոցն
էր, անօրինէր, և որ անիրաւելոցն էր, անիրա-
ւէր. մինչև լսա օրինակի վարագայն՝ ի վերայ
սրոյն մտեցաք գանձինս, զբովանդակն ի մեզ բե-
րելով։ Թուէր մեզ թէ նոքա մեղաւոր գոլով՝ կը-
րեցին զպատուհասն, և մեք լսա արդարութեան
մերոյ ապրեցաք. և ոչ գոյր ի յիշեաակ մեզ ա-
րուեսական պատուէրն և իմաստնացուցիչ խրատն.
«Գալիլեացիքն, ասէ, զորոց արիւնն Պիղատոս
խառնեաց ընդ զոհս նոցա, համարիք թէ նոքա*

1. Մի օր. բնակակից։

մեղաւո՛րք էին քան զամենայն մարդիկ, ո՛չ. այլ թէ ոչ ապաշխարէիցէք, նոյնպէս ամենեքեան կորընչիցէք»: Իսկ մեք ըստ ամենայնի բանիցն, որովք նախատէր պիտոյել, որք զպարզեալ գինին ըմպէին, և անոյշ խղովք փափկանային, և ի գահոյս փղոսկրեայս հանգչէին, և որ այլն ևս, և ոչ յաւէրս նոցա վասն բեկմանն Յովսեփա: Քանզի լնդրէ Աստուած՝ զի յորժամ զամենս տանջանաց մատնիցէ, մերձաւորքն ընդ նոսա վշտակից լինիցին. ըստ այնմ, «Լալ ընդ լայողան»: Այլ նորա զինորին հակառակն առնէին. ի միջէ յարեանէ էին, և ընդ գերութիւն ցեղի Յովսեփա չցաւէր նոցա. վասն այսորիկ յերդ արկեալ մարգարէն՝ ամբաստան լինել զնոցանէ: Այսպէս և ի մերում հանդիպեցաւ:

Քանզի յամի չորեքհարիւրերորդի իննսներորդի եօթներորդի թուականիս մերոյ՝ որ էր երկրորդ ամ գերութեանն մերոյ, չարժեալ միւսանգամ մրուր գառնութեան ի բարկութեամբ ի տանէն Պարսից՝ ահագին ձփանօք, և եկեալ հեղաւ յընդարձակ դաշտն Բաաենոյ և Կարնոյ. և ցայտուկս հեղեղատին կալաւ զչորս անկիւնս երկրին. յարեւմուտս՝ մինչև ի խաղտեաց գաւառն. իսկ ի հիւսիսի՝ մինչև ի Սպեր և մինչև յամուրս Տայոց և Աշխարհանեաց. իսկ ի հարաւ մինչև ի Տարօն և մինչև ի գաւառն Հաշտենից մինչև յանտառն Խորձենոյ: Եւ[1] զեղջ առեալ գաղարեաց աւուրս չորեքտասան, և ձովացեալ ձածկեաց զլերինս և զմայտս վայրս, և կալաւ բնաւ զաշխարհս. որ ինձ Թուի յանապակ գինեայն յայնմանէ զոլ նմա որ մանուկն Երեմիա ի տեսողութեան իւրում ոսկի բաժակաւ մատուսակեալ արբոյց Թագաւորաց, ազգաց, քաղաքաց, իշխանաց և զօրաց նոցա. և յեղոյ արբոյց ամեն Սիսակայ. ահա յայնի կատարումն մարգարէութեանն գնացուածն:

Քանզի արբ աւուն Հայոց յանապակէն յայնմանէ

1. Մի օր. գտեղի:

և արբեցաւ յարբուճն չար. արբ և թմրեալ յիմարեցաւ. արբ մինչև զբովանդակն յինքն ընկալաւ. և այժմ անկեալ կայ ի կէտս ամենայն ճանապարհացն մերկ և խայտառակեալ, և կոխեն զնա ճանապարհորդք անցաւորք ճանապարհաց: Եւ լեալ ի տանէ, օտարացեալ ի ձանօթից. հեռացեալ յընտանեաց և ի բարեկամաց և յազգակացս գերի և կալանաւոր ամենայն ազգաց:

Ժամ է ինձ զմարգարէական զայն բարբառել բանս, եթէ «Զճնացորդս թրթրոյն եկեր մարախն, և զճնացորդս մարախին եկեր ջրեակն, և զճնացորդս ջրեկին եկեր զրուխճն»: Թմ են և այտքիկ, քանզի ի մեզ կատարեցան ամենայն կանխասացիկ բանք մարգարէիցն. արդ թրթուրն և մարախն այն անցեալ են. իսկ ջրեակն և զրուխճն տակաւին են վասն որոյ ճառս մեր արկեալ է: Քանզի յառաջին անգամայն՝ յորժամ եկին Պարսիկք և այլ խուժադուժ ազգք հեթանոսաց, և մարզակատար սատակմամբ ապականեցին զգաւառս բազումս, և առ և գերի բազում առեալ էջին յաշխարհն իւրեանց, աւետաւորք եղեն ազգաց և թագաւորութեանց. և հրաւէր առեալ նոցա՝ սանեն ըստ մարգարէին, թէ «Գազանք անապատի եկայք կերէք զայս որ յանտառիս է»: Եւ ի գալ միւսում ամին ժողովեցան իբրև արծուիք ի վերայ կերակրոյ անհամար բազմութիւնք զօրաց աղեղնաւորաց և[1] սուսերամարտից. և մեծաւ խրախուսանօք ճեպ ի ճեպոյ եկին յաշխարհս մեր յամենեսեան սեպհեմբերի, ի ծնի սրբոյ Խաչին յաւուր չորեքշաբաթի:

Ասացաւ մեզ պատմութիւնս ազգաց և աշխարհաց է. և[2] զամենեսեան հանդէպ պատմութեանս ի կոծ հրաւիրէ: Զի թէ նինուէացիքն ի վերայ սպառնալեաց մարգարէին, և այն զի մի

1. Մի օր. առանց արտաբերելոյ: սատակաց. մեռան, զանձնասպանեցան
2. Այլ օր. զանձնայն հանդիպ. հանդիսացաւ պատմողիս:

անձն եմուտ ի քաղաքն, օտարաշխարհիկ և անծանօթ յամենեցունց և առանց նշանաց, այնքան ահիւ ահաբեկ եղեալ՝ մինչ պի ի թագաւորէն ականել մինչև յայն որ՝ յաղօրիան նաեր, մինչեւ եղև ամենեցուն կոծ, ամենեքեան խորտազդացք, ամենեքեան արկնագղեաւք, ամենեքեան հառեալք ի կերակրոց, և զբնութիւնն բռնադատէին առանալ ողբով, նաև զեղերանայր կանայս ձայնակից ընթանց կոչէին. «Թերևս, ասէ, զղջասցի Աստուած, և դարձցի սրտմտութիւնն նորա ի մէնջ: Մեր քանիծն առաւել ողբոց արժանի է, որ ոչ ապառնալիք միայն, այլ պատուհաս բարկութեան հասեալ և ի գլուխ եղեալ, և մեք չարագանեալք և կործանեալք և տեառնէն աշխարհի եղեալ. զոր Աստեղն ի վերայ սրբոցն առնու զբանս, և չար պատմութիւն թողեալ զկնի մեր ազգայ յազգս: Քանզի քաղաքք մեր աւերեալք և տունք սրբեցեալք, ապարանք հնոցացեալք, և արքունաչէն սրահք[1] աճիւնացեալք: Սրք ի հրապարակս կոտրեալք, և կանայք ի տանց գերի եղեալք, և կաթնասուն տղայք զբարի հարեալք, և գեղեցիկ դէմք պատանեկաց թառամեալք: Կոյսք ի հրապարակս և խայտառականս անկեալք, և երիտասարդք առաջի ձերոց սրախողխող եղեալք. պատուական ալիք ձերոց ընդ սրին և ընդ սպաժոյժ եկեալք, և դիակունք նոցա թաւալգլոր խաղացեալք: Սուրբ թշնամեացն չլացեալք, և ձեռք նոցա ի գործուածն պակասեալք. ազեղանց նոցա լարք հատեալք, և նետք ի կապարճից նոցա սպառեալք. անձինք նոցա ձանձրացեալք, և սիրտք նոցա յողորմութիւն ոչ եկեալք:

Ո՛վ ողորմութեան գո Աստուած, որ այնքան ներեցեր անօրինացն խրոխտալ ի վերայ խաչին արօսի գո: Յիշեա՛ վաղվաղուդ գո զոր ատացար ի սկզբանէ գատաստան միածնի գո, և վրկեցեր

1. Ա՛ր օր. ապնդանոցեալ:

արեամբ օծելոյդ։ Ընդէր մերժեցեր Աստուած ի սպառ, բարկացար սրտմտութեամբ քո ի մատնեցեր զմեզ ի ձեռս արանց անօրինաց, խաւսայ և ապստամբաց։ Մի՛ յիշեր զմեղս մեր, և մի՛ վաստն մեղաց մերոց պարձուցաներ զերեսս քո ի մէնջ. այլ յիշեա՛ զձեռն քո հզօր զբազուկ քո բարձր, որով ազրէիր մեզ, և անուն քո կոչեցեալ էր ի վերայ մեր։ Եւ արդ ահա դու բարկացար, և մեք մեղաք. վասն այնորիկ մերկեցար զերեսաթեամբ ի բազում ազգս, և եղաք իբրև զպիղծս ամենեքեան։ Հոգմք մերժեցին զմեզ, և ոչ ոք կայ որ կարդայցէ զանուն քո, և որ յիշեսցէ ապաստան առնել զքեզ. զի դարձուցեր զերեսս քո ի մէնջ և մատնեցեր զմեզ վասն մեղաց մերոց։ Մի՛ յաւիտեան բարկանար մեզ, և ի ժամանակի մի՛ յիշեր զմեղս մեր։

Մհ և աւաղ աւուրն այնորիկ լսանելոյ. զի լոյն որ յաւուրն առաջնումն անմարմին սեաւակաւ ի բանէն Աստուծոյ գոյացաւ, և ի չորրորդում աւուրն ընդ մարմնոյն պարուրեալ՝ ի լուսաւորս բաժանեցաւ, լուսան տունկեան և գիշերի լինելով, և աշխարհի ճանապարհորդք յաւիտենից. մինն զմարդ ի գործ յարուցանելով, և միւսն գապաստան հանգստութեան տալով։ Այսօր միջօրեայ աւուրն այնորիկ՝ մեզ ի խաւար վհատութիւն գերացաւ[1], գաղանաբար ազգն հեթանոսաց որք ի վաղընջուց ի[2] լուսոյ իւրեանց մնէին, քան մարգարէին ձայնի, և յԱստուծոյ հօտէն կընդրէին կերակուր իւրեանց, և գիշերանալ մեզ աւուրն այնորիկ՝ ելին և տարածեցան ընդ երեսս երկրի, և զոր բազում և յաղեցան կերակրովք, և նշխարեցին տղայոց իւրեանց յամն բազումս։ Արդ թէպէտ և յամենայն տեղիս որս բաւականապէս պատրաստեցաւ նոցա, քանզի իւ-

1. Մի օր. գազանութեամբ։
2. Երկու օր. ի խորհուրդս, և այլ օր. ի խաւսս։

ըև զդրախտ վախճուԹեան լի պտղով գաւառ երկիր առաջի նոցա. բայց առաւել ի գաւառն Մանանալոյն ի լեառն՝ որ կոչի Սմբատայ բերդ. քանզի անդ ժողովեալ էին բազմուԹիւն անԹիւ վախատէյին, և[1] անասուն որ ոչ գոյր Թիւ։ Յոյց վերայ հասեալ անօրինացն ապականեցին զամուրս նորա, և մտեալ ի ներքս՝ սուր ի վերայ եղեալ կոտորեցին զամենեսեան։

Մնդ էր տեսանել տեառնԹիւն ողորմելի և բազում ողոց արժանի. զի զոմանս ի նոցանէ որ ի բուռն անկանէին՝ սրամա՛հ[2] ապանանէին. և որք յառապար տեղիս անկանէին և ամրանային, նեաւԹիւք խոցոտեալ սատակէին. և զբազումս յանձաւն վերայ եղեալք մեծամեծ վիմօք զլափարդ առնէին, որոց դիակունքն գլաԹաւալ ի վերայ միմեանց չեղջեալ իբրև զկոյտս փայտահարաց՝ զաոլիկայ զձորն ընուին։ Վա՛յ և աւաղ չատ գառն լուոյ աւուրն այնորիկ. զի քա՛լ արքն վառեալ զինու և սրամուԹեամբ եռացեալք, և վատքն Թալկանային, կանացիք յիմարէին և երիտասարդք խիզախէին, այլ եւս իրացն ոչ կարէին իմանալ։ Քանզի յամենայն կողմանց պատնէշ Թըշնամեացն պաշարեալ էր զնոսա. ոչ գոյր անդ սէր սիրելեաց և ոչ աւաղ բարեկամաց. մոռացաւ հայր զգուլթ որդւոց, և մայր զսէր նորածին մանկանց։ Ոչ կարէր յիշել անդ կին նորահարսն զսէրն փեսայի, և ոչ զմուտ ածէր այր զդեզ յանկալի մանկան իւրոյ. պակասեցան երդք պաշտօնէից, և հատան ձայնք սաղմոսաց ի շրԹանց սաղմոսողաց. կա՛ռ առ հասարակ զամենեսեան դողումն և երկիւղ։ Եւ ի սաստիկ տագնապէն, բազում կանայք յոմն գոլով՝ վիժէին զմանկունս. և այսպիսւոքէն գործով՝ իբր վարմաւ որսորդաց Թա՛կարդեալ էին զնոսան ամենայն մինչև լքան և հատան ի գործոյԹենէ։

1. Մի օր. անասունքն։ 2. Երկա՛ր օր. առնէին։

Իսկ ի գալ երեկոյին, առեալ զառ զգերն և ըզկապուտ սպանելոցն, չոգան ի տեղւոյն։ Իսկ ըզկընի ելանելոյն նոցա, անդ էր տեսանել տեսուիլ ոգորմելի, և քան զառաջինն ողորմագոյն և բազում ողբոյ արժանի։ Քանզի բազմագիւմ էին օրհասք մահուն. զի ոմանք յանկելոյն դեռ յոգիս կէին, և լեզուք նոցա ի ձարւոյ ցամաքեալք, նեղ և նուրբ ձայնիւ հայցէին հալածանս ձառայութեան զանել, և ոչ ոք էր որ տայր. իսկ կէսք չարապէս վիրաւորեալք, և ի ձայնէ պակասեալք, ուժգնակի չնչէին. և այլք ընդ փողոյն զենեալք՝ կիսամեռ գոլով, դժուարաւ խռնչէին. իսկ ոմանք ի դժուարին խոցուածոյն մարմանջեալք՝ աքաղէին սաիւք, և եղնգամբ ձեռացն զերկիր դափր հատանէին։ Բայց առ նոսա և այլ ահագին էր տեսիլ տեսանել, որ և զքարինս անգամ և զայլ անշունչ արարածս չարժէին ի յողբս և ի հառաչանս. քանզի անօրէնքն յորժամ զգերեան հանին ի լեռնէն, զտղայս առեալ ի գրկաց ձնողացն՝ յերկիր ընկեցին, որովք ի բազմութենէ նոցա եւայր առհասարակ տեղի բանակի նոցա։ Ոմանք յանկելոցն զքարի հարեալ սատակէին, և կիսոց կուշքն պատառեալ, և փորոտիքն յերկիր հեղեալ. իսկ զկենդանեացն զկատաչ որ լսելիք սանել կարէին. քանզի որ հեռիտիւք ընթանալ կարէին, այսր անդր յածելով զմարս իւրեանց խնդրէին, յորոց ի բարձրաձայնութենէ լսելեացն՝ արձագանք լերինն զհետ հնչէին. իսկ որք այլք չև ևս էին հատատեալք յոտս, ի գուճս տղալով կառչէին. իսկ որք զան զնոսա ի տխեղծ հատակին, սատւք զերկիր հարկանէին. և ի տղալոյն պակասելք ի ձայնս, ոչ կարէին արտաքս բերել զհատակն. և այսպիսի ողորմագին ձայնիւք և անհաս աղաղակաւ՝ զդատաւոր բերէին զնմանս, որ զեռագեա ի մարդն բաժանեալ ի հորձիցն եւևեա առնէին վասն անժոյժ գոլոյ բնութեանն. և անդադար զօդանջիւք վիրաւորէին զօդն, և ձանձրացուցանէին զլսելիս լսողացն։

Այսոքիկ են չարաչար պատմութիւնք քո, ով լեառն. լեառն ամուր Մբատայ՝ ոչ ընդ որ հաճեցաւ Աստուած բնակել ի նմա, այլ լեառն արեան, կոխման և կոբատեան։ Ո՛չ է մարթ անուանել զքեզ լեառն, այլ խորխորատ ոգմոց ի կորուստ ամենայն բնակչաց երկրի. քանզի ի քեզ դպանք օթատայանան, և ցինք և անգիզք արարին իւրեանց բնակութիւն. ի քեզ աղուեսունք երամակեալք, խայտացեալք, լցեալք ի կերոյ։ Ո՛վ լեառն, ոչ ըստ Հերմանի ի ցօղոյ երկնից պարարտացար ի քեզ կաթելոց, այլ ի ճարպոց և յարենէ դիականց ի քեզ կոտորելոց։ Ո՛վ լեառն, ոչ ընդ սինեհականին Մովսեսի առ Աստուած խօսից եղեր մինչնորդ, այլ զբազում քահանայս լռեցուցեր ի սաղմոսական երգոց, որք ազօթիւք միշտ խօսակից Աստուծոյ լինէին։ Եղիա երկուցեալ ի մահուանէ, Յեզաբելայ փախստական՝ ի Քորեբ անկեալ ապրեցաւ. և սոքա ի քեզ ապաստան եղեալ՝ մանեցան ի ձեռն սրոյ, և բաժինք աղուեսուց եղեն։ Ո՛վ լեառն, համաձայն տեսանեմ զքեզ լերինն Գեղբուայ, յորոյ վերայ անկան[1] ազգաքն Իսրայելի։ Վասն որոյ ժամ է ինձ զառ ի Դաւթայն զառ ի նա զաստացեալսն՝ ի քեզ երկրորդել։ Լերինք Մբատայ, մի՛ անկցի ի վերայ ձեր անձրև, և մի՛ ցօղ. քանզի արբէք դուք յարենէ հաւատացելոց արանց և կանանց ի ձեզ անկելոց։ Այլ որ վասն լերինն այնորիկ չար համբաւ պատմութիւն էր՝ զկայ առեալ, թէպէտ ի բազմաց սակաւ ինչ ասացի։ Աստանօր ի մերս զարձուցից զոճ բանի պատմութեանս. և կամիմ ըստ ուժոյ իմոյ յամել ի բանս, որպէս զի ամենեցունց չարժեցից զարտասուս։ Կոչեմ և զձայնարկու կանայս ընդ երեմիայ, զի ընդ իս զոլբս յարդարեսցեն. քանզի ոչ հմէ լերանց և անձաւայ և անապատ տեղեաց առնեմ զպատմութիւնս, յոր սինկերոբք փախստէին երթեալ բնակեցան։

1. Յամենայն օր. ազգութիք։

ԳԼՈՒԽ ԺԲ.

վասն Արժինց աւուրսն կոտորածին։

Այլ քաղաքին, և քաղաքն այսպիսւոյ, որ հոյակապ և ականաւոր էր ամենայն աշխարհաց, իբրև զքաղաք որ ի վերայ լերինն կայցէ. և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զպօրուվթիւն իւր. որպէս բարձրն Եսայիա վասն Երուսաղեմի մարգարէանայր։ Այլ սա յառաջինն մինչդեռ բարեացն առատուվթեամբ պատկեալ էր, ամենայն ինչ ըստ մտի էր տրա. և նման ինն էր նորահարսն կնոջ, որ զեղջն վայելչուվթեամբ և զարդուցն պայծառուվթեամբ՝ ցանկալի զոլ ամենեցուն։ Քանզի իշխանք տրա էին մարդաւէրք, և դատաւորքն արդարատաք և կաշառուցն ներողք։ Վաճառականք՝ եկեղեցւոյ չինողք և զարդարիչք, կրօնաւորաց օթևանք և հանգուցիչք, և առ աղքատս ողորմածք և զարմանիչք։ Ոչ գոյր խաբէուվթիւն ի վաճառան, և ոչ նենգուվթիւն ի տուրևառիկ վոխանանն։ Ընդ բամբասանօք էր վաշխից և տոկոսեացն չահքն, և խոտեալ և անարգեալ էր ի նուէրս ընծայից պատարագ նոցա։ Ամենեցուն մի նախանձ էր բարեպաշտուվթեան. զհանապազ նոցա սրբակաց և աղօթասէրք, և եկեղեցական ապաւհլուք և հըպատակք։ Վասն որոյ և վաճառականք տրա փառաւորք, և օգնողք թագաւորք ազգաց։ Եւ իբրև ակն մի պատուական լուսազեղ պայծառուվթեամբ վայլէր քաղաս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեւեն գեղեցիկ, բոլորովին զարդարեալ։

Բայց յորմէ հետէ մտին յեկեղեցիս մեր Սե-

քարայիք և Պիհռոնացիք,[1] և արդարութեան օ-
րէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարգի եղև
արծաթասիրութիւն քան[2] գաստուածասիրութիւն,
և մամոնայն քան զԲրիստոս. յայնժամ ամենայն
համեստութիւն կարգաց զառածեալ՝ յանկարգու-
թիւն դարձաւ: Իշխանք սորա գողակից եղեն
գողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք. դա-
տաւորք սորա կաշառառուք և վանն կաշառաց գո-
դանային զիրաւունս. և գաւառսան որբոց ոչ առ-
նէին, և յիրաւունս այրեաց ոչ խոնարհէին: Վաշ-
խից և տոկոսաց օրէնք եդան, և ցորենոյ բազ-
մապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու
զարգանդ առ ի տալոյ զպտուղ ի ժամու իւրում
առ ի կերակուր մարդկան: Որ խաբէր զընկերն՝
պարծէր խնաստուն գոլ, և որ յափշտակէր՝ ասէր,
Ես հզօր եմ: Զառնս տնակից[3] աղքատացն, և
զահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մե-
ծատունքն, և չկարէր ի լսելիս նոցա աստուա-
ծապատուէր անէծքն գրեալք ի ձեռն Մովսեսի
ծառայի տեառն. «Անիծեալ է, ասէ, որ յափըշ-
տակէ զարտս ընկերին»: Կամ զոր բարձրն Ե-
սայիաս բողոք բարձեալ ասասէ այնպիսեացն.
«Վայ, ասէ, այնոցիկ, որ յարեն զտուն ի տուն և
անդաստան առ անդաստան մերձեցուցանեն, զի
զընկերին հանիցեն: Նա աւանիկ ազգ եղև յա-
կանջս տեառն զօրութեանց այդ ամենայն», և որ
ի կարգին է, լռեմ խնայելով ի ձեզ: Զգոյր ի
յիշատակ նոցա այգին Նաբովթեայ, և ցեզաբել՝
որ յափշտակեաց զայն, թէ զինչ կրեաց, որ մին-
չև ցայսօր փող հնչէ յամենեցունց լսելիս: Բար-
ձաւ և ի քահանայից երկիւղ և ընտրութիւն
արբութեան. նեղին և մղին մերձենալ ի սեղանն
և սպասաւորեն անճառ խորհրդոյն որ հրեշտա-
կաց է զարհուրելի, թուղ թէ մարդկան, և զայն

1. Մի օր. մոխիր յեկեղեցիին մեր Սիքարացիք և Պիհռոնա-
ցիք:

2. Երկու օր. զաստուածա-
պաշտութիւնն:

3. Երկու օր. տնանկաց:

ի ձեռն արծաթոյ և ոչ Աստուծոյ և ի մուտս յօնս եղև սպրմոսական երգն՝ որ ասէ. «Խոտեալ յին այնպիսիկ որ ընտրեալ են արծաթով»։

Զինչ ասացից և որ առ կանոյս ամբաստանեմ թիւն է բաւական են առ ի յԵսայեայ ասացեալք, չկարօտանան մերում բանից։ Քանզի նա պերասպէմի կանոյն վան զարդասէր լինելոյն այսպէս յանդիմանէ. «Փոխանակ, ասէ դի հպարտացան դստերք Սիովնի, և գնացին ի բարձր պարանոց»։ Նախ զարմասոյն ամենայն չարեաց բուռն հարկանէ, զամբարտաւանութենէն ասեմ. դի նա է մայր և սկիզբն ամենայն չարեաց, դի ի մորդկանէ դևս դործէ, և նոցին տանջանացն վիճակակից առնէ։ Արդ ամենեցուն չարէ ախտս այս, բայց կարեւոր կանանց ազդի. վասն այսորիկ նախ զնոսա դատէ, և ապա ի կարդ արկեալ յիշէ զատուրենան ընդ երկիր զբարշէն, և զդինդան և զմատանիսն, զապարանջան, զթաշտան և զմահիսանդան և զայլ ամենայն։ Տեա լով, և զհատուցումն նոցին. «Փոխանակ, ասէ, ականի զարդուցն, գլխոյն կնաւթիւն»։ Զի ի զարդուցն մերկացուցեալ զգլուխն, զերան հատանէին ձաղր առնելով զնոսա։ «Փոխանակ ականի համարոյն չուան պօսի. և փոխանակ պատուականն հանդերձիցն քրձազգեաց, ասէ, լինել». դի ի գերութիւն հանդերձեցան, զերիչքն զոյն չնորհեցին նոցա։

Ոչ վայրապար եղև ինձ անցանել ընդ այս ամենայն. այլ դի ցուցից, թէ որպէս ըստ կարգի նոցա յանցանքն մեր, նոյնպէս ըստ նոցա պարտէր և իրաւ ընդունել մեզ, և առաւել ևս. դի թէ նոքա առանց օրինակի զոյն կրեցին, մերս քանիւն առաւել պատժոյ արժանի չեցեն՝ յետ զնոսա մեզ օրինակ ունելոյ, և Քրիստոսի իրաւունն՝ որ ապստակէ և ասէ. «Թէ ոչ առաւելու ցու արդարութիւն ձեր առելի քան զդպրացն և զփարիսեցւոցն, ոչ մտանէք յարքայութիւնն երկնից»։ Եւ մեք ոչ յարդարութիւնն նեղմ, այլ և ի

մեզան առաւել պատնիկը, և զմր ներել թոյլ-
թեան ունկնկիը։

Այլ աւա զդեւսրակչեա և զդէպ հաստուցմանն։
Ելին Պարսիկք ի վերայ Երուսաղէմ, ելին և ի
վերայ մեր. աւերեցաւ Երուսաղէմ, և աւերեցան
քաղաքք մեր։ Մանն հնթանոք ի տաճարն տուրբ,
և յատարկ տարան զդարբդարանս նորա, և զըդ-
ձեցին զտաճարն տուրբ. մանն և յեկեղեցիս մեր,
և համարձակեցան յանմտանելիսն, և զդծեցին
պիղծ գարշապարօք զարբուխթիւնս նորա. և կա-
պատ կոզոպատ արարին զդարդս նորա։ Հրայ-
բեաց եղև տաճարն տուրբ. այրեցան և ի մեզ
փոխանակ մկոյ ոան՝ բազում եկեղեցիք. և ա-
ռանց հաստարկ անկան քահանայք նոցա ի տուր.
և զմերոյս ոչ բերէ զհամար։ Ժամ է ինձ ի գա-
թոական բանան ելանել, և նարին ձայնիւ զմեր
յօրինել զդաւս։ Ընդէր տէր կայեր ի հեռաստանէ
և անտես արարեր զմեզ ինեղութեան մերում, յան-
րինել անէրաւեն ի արբուխթիւնս քո, և ի պար-
ծիլ աւեցուցան զքեզ ի մէջ ոճնէց քոց. զի ա-
հա մեզն հնթանոք ի ժառանգութիւն քո, և
պղծեցին զտաճար տուրբ քո. այրեցին և հուր
զարբուխթիւնս քո, և յերկիր խոնարհեցուցին
զփառս եկեղեցւոյ քո. հեղին զարիւնս ծառոյից
քոց որպէս ջուր, ոչ որպէս յայնժամ՝ չուրջ զե-
րուսաղեմա մերոյ, այլ՝ թէ ամենայն երկիր
լցաւ արեամբ սպանելոցն, իսկ զթաղելոց նոցա
պհաչիւ և ի մերս անգամ ո՞ բերէր։

Բայց զքաղաքիս մերոյ զերուսաղէմի և զանդ-
նարին չարիս ընդ զրով ո՞վ կարէցէ արկանել.
զի որպէս գրեալ է վասն սպասնեցուցն, թէ
«Արեգական ծագեաց յերկիր, և ամր տեղաց ի
Սողոմ հուր և ծծումբ, և այրեաց զնա». նոյն-
պանդակ և աստ ի ծագել արեւուն յերկիր՝ հասին
ի վերայ անօրինացն ժողովք երբև չունք քաղ-
ցեալք, և չկշտասեցուցին զքաղաքն. և մեզն երբև
հնձողք ոճոյ ագարակի, և սուր առն ի վերայ և-

պետ հնձեցին մինչև անջատեցաւ ի կենդանւոյ քաղաքս: Իսկ պիտոյացեալն ի առնս կամ յեկեղեցի՝ տուր հարեալ այրեցին անողորմաբար, բարեպարծութիւն վերան կարծելով, որպէս կանխաւ փրկիչն ասէր. «Եկեսցէ ժամանակ, զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ». և զպատճառն ինքն յայտառնէ. «Եւ զայն արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ ծանեան զիս»:

Նաև օգոյ ձեռնտուութիւն եղև կրծանական աւուրն. զի հոգմ ուժգնակի չնչեցեալ՝ բորբոք արկանէր հրաւին, մինչև ծուխն ծառացեալ յերկինս հասանէր. և ցնծութիւք լսոյ հրաւին՝ յաղթէր ճառապայթից արեգականն: Անգանօր էր տեսանել տեսիլ ողբմագին և զարհուրական յոյժ. զի ամենայն քաղաքն լի էր դիակամբք անկելոցն վաճառականօք և նրբավաղօք և ընդարձակ սրահք: Իսկ պայթեցելոցն ոմն կարէիցէ բերել պհամար. քանզի որք ի սրոյ չողալոյ վախատակեղեալ՝ ի տուն ուրեք ի թաղատէ եղեն, ամենեքեան նոքա հրայրեցաք եղեն: Իսկ զքահանայն, զոր յեկեղեցիս ըմբռնեցին՝ հրով ծախեցին. և զոր արտաքոյ՝ զոմանս սպանեալ, և զմեծամեծ խոզեանն եղեալ ի գերկան առ ի նախատինս մեզ, և այլն կատականաց տեսլացն. իսկ զքահանայսին, որք ի տուր և ի հուր վախճանեցան՝ զատ աւելի քան զհարիւր յիսուն, որք վճռակի տեարք էին և եկեղեցւոյ. բայց զեկամըսեսին, և որք յամենայն աշխարհաց անդր հանդիպեցան, զնոցա ոմն կարէ բերել զհամար:

Ա.յսուքիկ են չարաչար պատմութիւնք զո, ոմն քաղաք երջանիկ և երանելի, յղփացեալ, ականատեր ի մէջ աշխարհաց. այժմ ամբարձ զաչս զո, և տես զորդիս զո վարատեալս ի գերութիւն, զաղաչս զո անողորմաբար հարեալս զքաջսն, զերեւելիսն զո այրեցեալս ի հրոյ. մեծահարկն և վաստակաւոր ծերք անկեալք ի հրապարակին: Հովա-

սուն և բարեկեցիկ կոյսք և կանայք՝ անկեալք ի խայտառականս, և հետէ սուրբ վարեալք ի գերութիւն, առ մեզ կատարեցան գաւթական ոգբոյն երգք. «Մատնեաց, ասէն, ի գերութիւն զզօրութիւնս նոցա. և զգեղս նոցա ի ձեռս թշնամեաց նոցա» և որ ի կարգին է. բայց Քրիստոս յամէ զզարթնուլն, և ոչ որպէս յայնժամ:

Այլ որ վասն Արծիւն սիրական պատուհիւնս աստանօր զկայ առյէ. զի մեք զամենայն անցս չարեացն ոչ կարացաք ընդ դրամ արկանել, այլ զթողեան ի մէնջ՝ յաւերակացն ուսանիլ խնդրօղն: Այսպիսի երկուց էր սեղեաց՝ լերինն և քարայքն, ողբալի պատմութիւնս, զոր աչօք մերովք տեսաք և ընդ փորձ չարեացն անցաք, զայն միայն գրեցաք. իսկ զայլ գաւառացն և զքաղաքաց զանց առեալ, այլ միայն բաւեն[1] պիտոյ և ժամանակի. մեք զմերն ըստ կարի մերում հաւատոմեցաք:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս մեծի պատերազմին որ եղև ի մեծ դաշտին Բասենոյ, յորում պարտեցաւ Հոռոմք:

Արգաբէն Եսայեա՝ յորժամ[2] զեպիտպատացան աւերանաց մարգարէանայր, զայսոսիկ ասէր, թէ «Յիմարեցան իշխանք Տայանու, որ էին իմաստուն խորհրդականք թագաւորին». որ և այս մեզ հանդիպեցաւ: Քանզի հեծելազօրք Հոռոմոց ոչ սակաւք էին յորևէս պահապանք աշխարհին, որ մինչև ցվաթսուն հազար առեալ եթէ էր թիւ բանակին. որոց գլխաւորքն էին կամե-

1. Երկուս օրին. պիտանեւանայ:
2. Մի օրին. զեզիպտական աշխրագն:

նաս որ թարգմանի կրակ, որ ունէր գլխիանու-
թիւն տանն Հայոց. և Ահարոն՝ որպէս Բուղարին
որ ունէր գիտութիւն վաստուրականի, և Գրիգոր՝
Հայոց եպիսկոպոս, որ ունէր զպատիս մատիտա-
սութեան: Եւ քանզի գիրք տանն էթէ՝ բազմիւ-
նանութիւն ամբոխեալ է և անյարմարական և
մերձ ի լուծումն. որ և ոտքս հանդիպեցաւ: Զոր
պարտ է միահազոյն միաբանութեամբ գլուխքդն
ի գտառերագրի գտեր Աստուած կարդալ յօգնա-
կանութիւն, որպէս օրէնն էր առաջին յաղթո-
ղացն. «Քանզի ոչ եթէ իւրով զօրութեամբ զո-
րանայ հզօրն», այլ ակր քակէ զզօրութիւն հա-
կառակամարտին: Իսկ նորա ոչ այնպէս խորհե-
ցան. այլ որ անօրինելոց էր ի նոսա՝ անօրինէր.
և կարծէին մարդկօրէն հնարագիտութեամբ զբոր-
բոք ահագին հրատն չիկուցանել: Վասն որոյ ի
ծուխս անկեալ, միոյ միոյ բանիկ ոչ հատանէին.
քանզի երկար Աստուած զկամաւորութիւն ի խորհր-
դոյ նոցա վասն չհանդրեալ նոցա գնաց, և այս ի
գործոցն յայտնի է, զի զվկայարիսն հայհոյեին գալ
յօգնականութիւն, զԱստուգին ակտաացեալ առ
վհուկն ընթացեալք. կամ որպէս Հրեայքն, որ
բարձեալ ուղտուց զգանձս իւրեանց՝ տանէին առ
ազգ մի, որ ոչ գոյր ի նոսա յոյս օգնականին: Եւ
զայն[1] ոչ ածին ի չիշատակ զԴաւթայն որ առ
մանեղէն բլուրն, որ մեծաւ երդնաւանօք նախա-
տէր զհատցէլ. որոյ պարտաքար մի միայն բա-
ւական եղև առ ի զինեալսատակ ուղղոյ նորա
ջարդել. կամ զԵզեկիայն՝ որ ապօթիւք միայն
զհարիւր ութսան հազարան Ասորւոց ի ձեռն
հրեշտակին՝ աներեւոյթ սրոճն յերկիր յորտայ-
սեաց:

Այդ՝ եկն Հայաբերան բազում ապաչանօք և
գանձուց առատաւոր պարգևօք, և ոչինչ վճա-
րեցաւ այնու. քանզի և ինքեանք իսկ չէին մխա-

1. Երկու օր. ոչ գիտեին չիշատակ զԴաւթայն:

բանք առ վիմեանս: Ոչ ոք ոչ ի նմանէ պատեբաղեալն, որպէս Բուղտարին ետ յանդիման ի թիկունս դարձեալ՝ համարձակութիւն տայր թշնամեացն. որք մեծաձայն ազաղակաւ զվիմեանս յորդորէին, և ի մէջ վտակեալ զէսպարեան ետուին քաջ առ բամբք, զոմանս սպանանէին, և զերիվարի նորա զձիան հատեալ սուսերաւ՝ զինքն ձերբակալ առնէին: Զոր տեսեալ այլ զօրացն՝ ի վախուստ դառնային. որոց զհետ մտեալ թշնամեացն, անչափ կոտորած առնէին, զոմանս սրով, և զբազումս՝ ոչ ոք ի զէնս ելանել ժամն, ի գահէն և ի քարանձաւաց գահավէժ առնէին. և ճոպեալքն մերկ կողոպտուս հետխոսիք ու կարէին՝ ապրեցան: Իսկ թշնամիքն լցեալ ուրախութեամբ դառնալ զառ և զդեերն՝ մոխն յաշխարհն իբեռանց, և անչափ աւարառն լցին զերկիրն ամենայն. իսկ զիշխանն վրաց տարեալ եռուն ցխալիսին իբրև զմեծ լինչ և քան զամենայն զերին հաճելի նմա. զոր առեալ և ընկալեալ ի չնորհակալիս, և մեծաւ պարգեւօք արձակեաց խաղաղութեամբ յաշխարհն իւր: Այս սուտ վինչև ցայս վայր:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Թէ ուրչափ եղև հայրապետին Պետրոսի վնաս ի կոստանդնուպոլիս, կամ ուրպէս դարձաւ։

ԹԱԳԱՒՈՐԻՆ տեսեալ զնա՝ բազում պատուով և մեծարանօք ընկալաւ, և առաջի ոճկօք հրամայեաց պաշտել զնա. բայց առ իւր պահեաց զնա ամս երիս, քանզի կասկածէր թողուլ ի Հայս՝ թէ երթեալ ապստամբեցուցանէ զԱնի։ Իսկ Ատամ սրդին Սենեքերիմայ առեալ զնա յերաշխիս, ած ի քաղաքն իւր ի Սեբաստուպոլիս. և տուեալ նմա տեղի բնակութեան զհանդիսաւ սըրբոյ նշանին, զոր իւր չինեալ էր բազմապարգաւ զարդարանօքն և մեծապայծառ վայելչութեամբ, յորում տեղւոջ կեցեալ ամս երկուս, փոխեցաւ ի Քրիստոս։ Եւ կացուցանեն ի տեղի նորա զԹաչիկ զնորին քեռորդի, որ զձեռնադրութիւն հայրապետութեանն վաղնջուց ընկալեալ էր։ Զոր իբրև լուաւ թագաւորն՝ առաքեաց խնդրակս, և տարաւ զնա առ իւր և զդանձ՝ զոր և զամն թէ անդ և թէ ի Հայս. քանզի յոյժ սիրօղ էր դանձուց Պետրոս, որ և բազումք վասն այնր եպերէին զնա։ Իսկ յետ երից ամաց արձակեցաւ առ Թաչիկ ի Թագաւորանիստ քաղաքէն և հասեալ ի սահմանս երկրորդ Հայոց՝ ի գաւառն որ կոչի Տարընոտայ, անդ դադարեաց. քանզի անդ հրամայեցին նմա տեղի բնակութեան։

Իսկ ժամանակ յամելոյ նորա ի կոստանդնուպոլիս՝ այս է պատճառն, ընդ հարկիս կամէին արկանել զնա. իսկ նա ոչ առնու յանձն, թէ զոր միանչև յիմ ժամանակին չէ լեալ և ոչ ես հատանիմ։ Եւ ապա ի հարց և ի փորձ արկեալ, և սպառնալիս ևս յաւելուն թէ ոչ ելանիցես ասեն,

եթէ ոչ պհրամայեալ ի մէնջ յանձն առնուցուս. լաւ երանելի անձն այն և մեծի լուսաւորչին մեր փոխանորդն՝ ոչ լինչ զանգիտեալ ի նոցա բանիցն, այլ ի նոյն և ի նմին եկաց հաստատուն: Յետ այսորիկ արք երկու, մին իշխան և միւսն վանական ի Հոռոմոց, յառաջ կացեալ, եթէ վասն նախանձ սրկանելոյ նմա եթէ ճշմարտիւ, ոչ պիտեմ, խնդրեցին զվերակացուվթիւն եկեղեցւոյ և հաստուցանել զհարկն. որ և երկոքեանն չարաման առաւկեցան: Ապա ի գեղջ եկեալ արձակեաց զնա առանց հարկի, տուեալ նմա գրով և տակի մատանեաւ զոր ի Հայս իւրեանց տեղիք էին, և երկու վանս ի Տարընայ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Թէ ո՛րպէս անհնարին հարաւ քաղաքն յորիացեալ, որ կոչի Կարս:

Քաղաքս այս ի բազում ժամանակաց հետէ չէր գործ չարեաց առեալ. վասն որոյ յանհոգս և յանկասկած կէին, հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ցամաքէ ամբարեալ: Արդ ի գալ մեծի յայտնութեան տեառն մերոյ, ի գիշերին՝ յորում ուրախական ձայնիւ գասք քահանայից հանդերձ բազմամբոխ ժողովրդովքն պպաշտօն աւուրն կատարէին, յանկարծակի ի վերայ հասին զօրք անօրինացն. և քանզի առանց գիշերապահուց էր քաղաքն, մտեալ ի ներքս, աւր ի վերայ առն եղեալ, անողորմ կատարեցին զամենեսեան, որ յոյժ ողբոց արժանի է պատմութիւնս: Քանզի օրէն է քաղաքաց ի տէրունական ան ժամն բազում զարդարանօք վայելչանալ առանց և կանանց, ծերոց և տղայոց բաւ ուժոյ և բաւ կարողութեան, բաւ նմանութեան զարնա-

նաբեր ծաղկանոցայ։ Որ և զտուտ այսպէս գտեալ, յանկարծակի վայրէք և տղրուվք լի եղև քաղաքն։ Զքահանայն և պաշտամանցն լռեցուցին, և զամուսնացն և տղամոսական երգոցն, հատաւ երգ օրհնութեան և բերանոյ դպրոց և տղայոց։ Անդանօր էր տեսանել տեսութիւն տղրմագին որ զքարինա և զանչունչ արարած անգամ չարժէր յորդս հատաչանաց, թէ զղջայուն և զկենդանիս. քանզի մեծահարկն և պատուական վաճառականք չարաչար մահուամբ սպանեալք. երիտասարդք և ըմբշամարտք և փողոցն սրակոտորք. պատուական ալիք ծերոցն արիւնաշաղախ առնեքզք անկեալք. և այսպիսօրէն գործովք տգեաւ քաղաքն յորանց. և թէ որ ժամանեաց յամուրն ելանել որ և վերայ քաղաքին կայ, նա միայն ապրեցաւ։ Եւ ճեպեալ զօրն տղջոյն և տեղւոյն խել արկեալ բրեցին զտունն, և տապա հուր հարեալ այրեցին զքաղաքն, և ինքեանք առեալ զգերի և զկապուտ քաղաքին գնացին յաշխարհն իւրեանց։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Վասն գալոյն Սուլտանայ։

Զկնի այսր պատմելոյ եղև, և գալ տարւոյն էր Թուականիս Հերոյ ամք հինգ հարիւր երեք, և նոյն ամի և ի նոյն քանիս ամսոյն, ուր զտաւղին աշխարհս գերի տարան, զԱրծն այրեցին, և զայլ քաղաքս զտանն. և խաղայ գազանն մահաչունչ աւրինաբերս և մարդախաշնն Սուլտան անհամար զօրօք, վազք և կառօք և երիվարօք, կանամբք և որդւովք, և բազում պատրաստութեամբ։ Զանց արարեալ զԱրճէշաւ և զԲնրկրաւ՝ եկեալ բանակեցաւ շուրջ զքաղաքաւն, որ կոչի Մանազկերտ, ի գաւառն

Ապահանեաց, և կալաւ բովանդակ գընդարձակ վայրս գաշտացս: Եւ արձակեաց ասպատակս յեբեհն կողմանց աշխարհին, ի հետս մինչև յաւուրն Ափխազաց և մինչև [1] ի լեառն որ կոչի Պարխար և մինչև յաւուրն կովկասու և յարեւմուտս՝ մինչև յանուանն Ձանեթից, իսկ ի հարաւ մինչև յՍիւն կոչեցեալ լեառն. և բովանդակ կալեալ գաշխարհս իբրև հնձօղք ոճոյ ագարակի:

Աւրդ գայնմ ժամու զչարիսն՝ որ նոքա աշխարհիս հասուցին, ոմն կարէ ընդ գրով արկանել, կամ այր միտք բաւեն ի համար առնել. զի ամենայն աշխարհս լի էր գիակամբք, չէնք և անշէնք, ճանապարհք և անապատ տեղիք, քարանձաւք և առապարք, անտառախիտ մայրիք, և ափափայ վայրք՝ և յամենայն չինանիւթ տեղիս հուր [2] հաբեալ ապականեցին զառնս և զեկեղեցիս, որոյ բոց հրատին առաւել բարձրանայր քան զհնոցն Բաբելոնի. և այսպիսի ձեռնարկութեամբ ապականեցին գաշխարհս մեր, ոչ միանգամ, այլ երից անգամ մի միոյ վերայ դարձ արարեալ՝ մինչև առ հասարակ հատաւ երկիրս ի բնակչաց, և բարձաւ կառաչ անասնոց:

Զայս արարուած տեսեալ՝ սուգ առ և կործանեցաւ երկիր, վասն զի կործանեցան բնակիչք նորա. բարձաւ ուրախութիւն յերեսաց ամենայն երկրի. յամենայն տեղիս ողբք և հառաչանք. ամենայն ուրեք կոծ և լալականաց հանդէսք. ոչ ուրեք քահանայից երգք. ոչ ուրեք լսի փառաբանութիւն Աստուծոյ: Ոչ ուրեք բանին գիրք առ ի խրատ և ի վարդապետութիւն ժողովոց. վասն զի ընթերցօղքն սրտմտեցան ի հրապարակս, և ինքեանք այրեցեալք և աճիւնացեալք: Ոչ ուրեք լսի ձայն հարսանեաց, և ոչ տեսանք նորածին մանկանց. ոչ նաեին ձերք ամուսով ի հրապարակի, և ոչ լսէին մանկունք առակի նոցա. ոչ երամս

1. Ա՛ր օր. ի դուռն:

2 Ա՛ր օր. հուր արկեալ:

նան անդեայք ի յարօտս, և ոչ խոյատն գառինք ի մարդս: Ո՛չ լնու հնձող արայիւ զգերկս, և ոչ լսէ բարեբանութիւն յանցաւորաց. ոչ լնուն կալք ցորենով, և ոչ զեղուն գինեաւ. ոչ լսին ձայնք ուրախութեան ի կութս այգեաց և ոչ ձանրանան[1] պահաւք ի առմանաց: Բարձաւ այս ամենայն, կարեաւ և ոչ երևի[2]: Ո՛ր երեմիա ողբասցէ զմեր կործանումս, ի ճանապարհաց և ի լերանց յեր-կարելով զողբան. ո՛ր եսայեա անհնազանդէ մեր-թարչացն զի յապեցի ողբով:

Վայ ինձ որ վիպասեմ զայսոսիկ, հիմնացի եւ-րիտասարդին նման զոլով իմ՝ գաժարկու եղէ, ոչ մեռեալ գիւղի կամ մեռեալ քաղաքի, այլ ամե-նայն աշխարհաց, ազգաց յազգս մինչև ի կատա-րած ժամանակաց. քանզի չէք ինչ ժամանակ կամ գործ որ զմեր հնացուցանել կարէ, բայց թէ որ զպղծոյն անապատի զգուշացուցանեն գիրք: Արդ զի՞նչ արարից, թողից ի պատմելոյ զանհըն-նարին չարիսն որ եհաս ի վերայ քրիստոնէից՝ խնայելով ի ձեզ, եթէ չարժեցիք ողբս և հառա-չանս ամենեցուն որք[3] հանդիսակից էք այսմ գժո-խալուր պատմութեանս. բայց գիտեմ որ կամիք լսել. վասն որոյ և ես ի բաց եդեալ զանձին գան-գատանս, գրեցից զգալուստս տեղեաց մի քան մինչ զանհնարին չարիսն:

Զկործանեան և զհանգէլմն յորժամ յիշեմ և որ ինչ ի նոսա գործեցաւ, հառկլիմ արտասուօք, փղձկի սիրտ իմ, և յիմարին միտք իմ. և զգոյն հարկանի ձեռք և ոչ կարեմ զոճ տողիս յառաջ խաղացուցանել[4]: Բազում և անհամար հոգիք ի վերադոյն գառաւացն, վասն տեղեացն ամրու-թեան՝ անդր ժողովեալ էին. յորոց վերայ հա-սեալ անօրինացն արագապէս որպէս թռչունք, անտերմնաբար որպէս գազանք, արտուստեամբ

1. Յոմանս, պակասէ:
2. Յայլ օր. ոչ...ևնոր եսա-յիայ:
5. Երկու օր. հանդիսաւորէր:
4. Երկ. օր. քանզի բազում ...ի վերագոյն յիշեալ:

եւ այնպէս սրտէս վրեժխնդիրը, եւ խիլ արկեալ ի քարանձաւս եւ յանտառախիտ մայրիս՝ անյապաղ կատարեցին զոր ես պատուիրեցի. մինչ դի աւրնան զօրէն պարնանաբեր ժամանակին, յորժամ ի չերմանալ ծանէ օդոյն չուրն ծորեալ եւանէ՝ ի ձեռն առուս առուս վիժելով, գնող երկրին գնի իւր հեղեղաւեվ, այսպէս և յայնժամ լինէր. արեան առուք ի դիականցն անկելոցն եւեալ, ի զառ ի կող տեղիս ի յորդութեան գնացին գնող երկրին հեղեղաւէին։

Այլ դու յայնժամ եղեալն այծ գնուաւ, գկրօնաւորացն գաս և գքահանայիցն՝ որ անդ հանդիպեցան, կամ զերամս ձերոցն, կամ զերիտասարդացն զբազմութիւնս, որոց զեռաբոյս մօրուսացն՝ իբրև գնկար գեղեցկայարմար զայտան զարդարէին, և խոպոպք վարսիցն փաղփեալք ի վերայ ճակատուն զօրէն վարդի վառ ի վառ գունով գդէրս երեսացն պայծառացուցանէին, թէ արպէս յանկարծակի ի սրոյ թշնամեացն իբրև ի կարկտոյ հարեալք՝ յերկիր թաւալ անկեալ գլոր խաղային։ Քեր ի մէջ և զաղայոցն համար, զորս առեալ ի գրկաց մարցն յերկիր ընկենուին, որ մեծակական հառաչմամբ գմարան խնդրէին. իսկ գնծութեան գանալից հարուածովք՝ առ չտապ ի նուացանէ բաժանէին։ Ո՛ր սիրտ քարեղէն, որ զայս լսելով ոչ հեղձնու արտասուօք ընդ բազմադիմի չարեացն յաճախութեամբ։ Կոյսք ի խայտառականս անկեալք, նորահարսունք յարանց բաժանեալք և ի գերութիւն մատնեալք. ի մէուս վայրկենի երկիրն՝ որ իբրև գբաղաք մարդախիտ ասատութեամբ լճացեալ էր, եղև անմարդ ամայի, յերկուս բաժանեալ կամ սրակատոր կամ գերի։ Ո՛վ Քրիստոս գո յայնժամ ներողութեանդ, ո՛վ մերում չարեաց, որքան գառն մահու մատնեալ եղաք։

Իսկ զոր ի Դերջան և յՇկեղեաց և ի միջատահմանս նոցա եղև կատորած, զայն և ընդ

պրով արկանել չէ պ բաւական. բայց դու ասա-
ցեալվքս կշռեա՛ զայն: Իսկ որ ի Տայոն մնին, ա-
ռեալ զերկիրն և հասեալք մինչև ի գետն մեծ՝
որ կոչի Ծորոխ, և զկնի գետոյն գարձեալ իջին
յաշխարհն Խաղտեաց. և առեալ զառ և զգերի գա-
ւառին՝ գարձան, և եկեալ մինչև ի բերդաքաղաքն
որ կոչի Բաբերդ, հանդիպի և անդ գունդ մի ի
զօրացն Հոռոմոց որ կոչին Փռանկք, որք յանգէաս
միմեանց ի դիմի հարեալք ճակատեցան. և յո-
րժամ լինէին Աստուծոյ զօրացան գունդն Հոռո-
մոց, և յաղթեալ թշնամեացն՝ զգլուխ զօրուն
սպանին և զբազումս ընդ նմա, և զայլսն ի փա-
խուստ գարձուցեալ, զառ և զգերի զամենայն
թափեցին, բայց փախստէիցն զհետ ոչ իշխեցին
յերկարել, քանզի երկեան թէ գուցէ ծանր զօ-
րու հանդիպեացին: Իսկ գերիքն որ ազատեցան,
զոհացեալք զԱստուծոյ, չոգան ի տունս իւրեանց:
Իսկ որ ի վերայ Հայոց գնացին, զոր և գտին՝
ի սուր և ի գերութիւն ծախեցին, և լցեալ ա-
ւարաւ՝ գարձան անդրէն. և եկեալ ի սահմանս
վանանդայ, որոց ի դիմի հարեալ քաջազուն իշ-
խանքն Գագկայ որդւոյ Աբասայ, և բազում նախ-
ճիրս ի տեղւոյն գործեալ: Որոց ի վերայ հա-
սեալ զօրք անօրինաց ի մէջ փակեցին. և քան-
զի յերկարել պատերազմին և յահագին կոտորուա-
ծէն ի զօրութենէ պակասեալք էին ինքեանք և
երիվարքն իւրեանց, վասն որոյ ոչ կարացեալ զպատ-
նէշ թշնամեացն պատառել և ելանել, յորոց տուր
ի վերայ եղեալ կոտորեցին յազատացն արս երե-
սուն:

Իսկ զմի ոմն յազատացն կալեալ, որում անուն
էր Թաթուլ, որ էր այր հզօր և պատերազմա-
սէր զոր առեալ տարան առ Սուլտանն: Եւ քան-
զի կարեվէր խոցեալ էր զորդի Աբասեանայ
Պարսից ամիրային, զոր իբրև եհաս Սուլտանն՝
ասէ. Եթէ դա ապրի, գքեզ ազատեմ. ապա թէ
մեռանի, գքեզ դմա մատաղ հրամայեմ առնել:

Որ յեա տակաւ աւուրց մեռաւ: Իսկ նրա պատահանել, թէ իմ է գարկածն, չէ կենաց. թէ այլում է գայն ոչ գիտեմ: Սուլտանն իբրև լուաւ թէ մեռաւ, հրամայեաց սպանանել զնա, և զալ բազուկ նորա հատանել, եւ տանել Աղուանից ի մխիթարութիւն, թէ ի վատ բազկէ չէ մեռեալ քո որդին:

Աղդ ինչ է ինձ ի քո յաս միջէ գանկանգնել կործանուցն գրիստոնէից ընդ գրով սահմանել. որ իբրև ծով ի սաստիկ հողմոց յուզեալ՝ ահագին ձիանօք, և փրփրագեզ կուտակօքն յանկան կողմանց գայ ի ծիանս, այսպէս և մեզ հանդիպեցաւ. աշխարհս ամենայն յանկարծակի եղեւ խռովութեամբ, և ոչ ուրեք գտանիւր տեղի ապաւինի. զի վասն անհնարին չարեացն՝ բարձաւ յոյս կենաց յամենայն մարդկանէ: Զայս և փրկիչն յառաջագոյն գուշակեաց, իբրև ծովու խռովութեանց նմանեցուցանելով զերեսնաւոր չարիս, յորս բազումք ի մարդկանէ թակոյեալք՝ ոչ կարէին պահել զոգիս առ ինքեանս, յերկիւղէ և ի կարծեաց եկելոցն:

Բայց գու լծորեալ զայս, եկ զարմայիր ընդ Սուլտանայ անմտութիւնն և ընդ Աստուծոյ բազմապատիկ իմաստութիւն. ընդ նորա անմտութիւնն, զի ամենակալ համբաւէր զինքն և Աստուծոյ ամիռատակից. և ընդ Աստուծոյ իմաստութիւնն, զի միով տամբ խաղաց ընդ նմա, և լի անարգանօք գարձոյց յաշխարհն իւր: Եւ արդ գու մի գեր ասացելոցս. ի կարգի յառաջին անգամայն յորժամ եկեալ անհամար զօրօքն չրջապատեաց զքաղաքն՝ և նգա յանպատրաստի էին ի մարդոյ և յանասնոյ, և յայնժամ թէ տան օր ի վերայ կացեալ էր, առեալ էր զքաղաքն. բայց Աստուած որ ոչ ի սպառ բարկանայ և ոչ յաւիտեան պահէ սիրտ, և ոչ ըստ մեղաց մերոց առնէ, այլովքն հանդերձ, արկանէր ի միտս նորա խորհուրդ նանրութեան, ձեռ երից աւուրց չար-

ժեալ ամենայն բանակաւն, խաղայ լինանէ ի տա-
ւարածոյ տաի, և անտի լինանէ յընդարձակ դաշտն
Բաաենոյ առ անառ ամրոցաւն որ կոչի Ամիկ,
յորում եառս աշխարհաժողով մարդոյ և անաս-
նոյ, և ոչ ինչ փոյթ արար. քանզի ի հայելոյն
մեայն ձանեաւ թէ անառ է. և անցեալ առ նո-
ա պայ ի գլուխն Բաաենոյ, մերձ ի գեօղն՝ որ
կոչի Դու: Եւ եղեալ անտի սակաւ արամբք յան-
գեաս ի վերոյ գահէն որ հայի ի կարկին, եառս
զքաղաքն վառեալ ամենայն պատրաստութեամբ.
և նայեցեալ յերկար ժամ՝ զարձաւ անդրէն:
Իսկ արքն Մանազկերտոյ անկասկած ի գուրս ե-
լեալ ի քաղաքէն՝ պատրաստեցին առաստապէս
դարմանս մարդոյ և անասնոյ. քանզի ժամանակն
հնձոց էակ էր: Եւ մինչ Սուրմանն զայսու գայնու
եղեալ զարձաւ անդրէն, նոքա յանհոպս եղեալ
էին. և ապա եկեալ նորա վառեալ սրտմտու-
թեամբ, դնէ մարտ պատերազմի ընդ քաղաքին:
Իսկ իշխանն որ ունէր գհոգ վերակացութեան
քաղաքին, քանզի այր բարեպաշտ էր, զամենա-
կալն Աստուած կարզայր յօգնականութիւն՝ պա-
հօք և աղօթիւք հրահանգելով զինքն. և այնու
ապատաղինեալ՝ քաջապէս հաւատով արիա-
նայր. և առ Աստուած սաղմոսելով ասէր. «Ոչ
երկեայց ի չարէ զի դու տէր ընդ ես ես», և
զմիւսն, թէ «Ոչ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց
նոցա, որ շուրջ են զինեա» և որ ի կարգին է: Եւ
առ արս քաղաքին և առ զօրս իւրախոյս առեալ
ասէ. Քաջալարեցարուք ընկերք և եղբարք իմ,
քաջաերեցարուք և մի՛ երկնչիք. գործ մի գիւրին
է Աստուծոյ այս. նոքա գան ի վերայ մեր կառօք
և երիվարօք, մեք զանուն տեառն մերոյ կարգաս-
ցուք, և Աստուծով պարծեսցուք յաւիտեան և
անուան նորա խոստովան եղիցուք, զի նա տայէ
զօրութիւն և հաստատութիւն ժողովրդեան իւրոյ
որ է օրհնեալ յաւիտեան: Զքահանայս յորդորէր
յաղօթս, յերգս սաղմոսաց, որք անհատական ա-

պալակաւ առ Աստուած կարդային և առէ և ի գիշերի, որ խաչիս և ժամհարաւ բարձրանայ նուիրեամբ և վերայ պարսպացն զԱստուած ապաչէին պալ յօդնականութիւն վտանգելոցն։ Յորմէ ձանձրացեալ լսելիք բռնաւորին, հարցանէր թէ զինչ է այն անհաս ազազակն, և ուսանէր և պնասնոցն՝ թէ առ Աստուած ազազակեն։

Արդ ասսականօք աւուրբք եկաց և վերայ քաղաքին, առ միմի օր երկնից անգամ գնէր մարտ պատերազմի ընդ քաղաքին, մի և լուսանալ աւուրն և մի ընդ երեկն։ Բայց դու առ առ տեա զԱստուծոյ իմաստութիւնն թէ ո՛րպէս գիտէ հակառակօքն գհակառակին պատուն չահել։ Արդ մինչդեռ քաղաքն յայս տարակուսի և ի վտանգի կայր, արկանէր խորհուրդս բազուք և սերտ երշխանի մեծ, որ էր յոյժ ի մտերմաց Սուլտանայ, որ զառ և նմանէ խորհեալն ձանուցանէր քաղաքին՝ կամ բանիւ կամ գրով։ Բազում անգամ գրեալ և քարտիղն և սլաք նետին կապէր, և պատերազմի օրինակաւ մերձեալ և պարիսպն՝ ընդնետն և քաղաքն ընկենոյր. և այնու զամենայն կռուոյ օրինական ձանուցանէր նոցա, թէ առ վաղիւն այսպէս և ըստ այսմ ձևոյ է կռուոյն օրինակն. և եթէ յայս նիշ տեղւոջ և գիշերին կամին և ներքս պարսպին գերկիր վտրել և մտանել և ներքս. բայց դուք պինդ և ամուր կացէք, և ի տեղեացն վերայ զդուշացարուք։

Զայս առնէ Աստուած, որ գիտէ և հեռուստ հնին արկանել մեծամեծ իրաց. որ զԲաղաամ առ Բաղակաւ մարգարէ գործեաց՝ և տեսչութիւն ժողովրդեանն, և զանիսօս անասունն մարդկեղէն բանիւ ետ բարբառել. և զեղիա և ձորն Քերիթու ապառաւքն[1] զերիս ամն և տավին կերակրեաց։ Զինչ եթէ և առ և ձեռն հակառակորդացն ըզվրկութիւնն քաղաքին անօրինեաց։

1. Մի օր. ի չերիևն՝ զերիս առն։

Արդ յոր կողմ և նոքա ի պատերազմ կային թէ ի դիշերի և թէ ի տունջեան, սոքա վառեալք և պատրաստք անդր գտանէին։ Ձեռ այսորիկ մեքենայս կանգնեալ, այնու պատերազմէին։ Իսկ երէց ոմն ի մերոցս հնադոյն ունելով զաւուրս, որ յոյժ տեղեակ էր արուեստին, և սա իւր կանգնեալ փիլիկուանն. և լինէր յորժամ նոքա քար եդեալ ի պարսատիկս մեքենային և ձգէին ի քաղաքն, երէցն զիւր քարն դէպ ուղիղ նոցա քարին արձակէր, որպէս զի[1] դիպեալ քար երիցուն ի քար անօրինացն, ի վերայ իւրեանց ընկենոյր։ Զայս արարեալ անօրինացն եօթն անգամ, ոչ ինչ կարացին վճարել. քանզի զօրացաւ քարն երիցուն ի վերայ քարի նոցա։

Ապա այլ պատերազմական գործի պատրաստեալ, զոր ինքեանք բաբան կոչէին, որ յոյժ ահագին էր, զոր ասէին թէ չորս հարիւր սպասաւորք էին նորա, որք զպարանան քարշէին, և վաթսուն լիտր քար եդեալ ի պարսատիկն՝ ի քաղաքն ձգէին. և առաջի նորա պարիսպ կանգնեցին ի բամբակի բեռանց և յայլ բազում կարասւոյ, զի մի՛ քար երիցուն հասցէ ի նա։ Եւ իբրև զայս այսպէս յարդարեցին, արձակեցին քար մի, որ դիպեալ ի պարիսպն ուժգնակի, փլոյց և խոռեաց զնա. զոր տեսեալ քաղաքին՝ յոյժ զդողի հարան, և առ Աստուած աղաղակէին մեծաւ հառաչմամբ. գալ յօգնականութիւն, իսկ անօրինացն լինէր մեծ ուրախութիւն։ Իսկ ի գալ երկրորդ աւուրն[2] Որտիմեզ՝ որ զօրուն իշխանն էր, առեալ զզօրս իւր եկեալ մարտ եդեալ կռուէր ընդ մերսն, քանզի այր քաջ էր. եկեալ խոռին կամէր հզօրապէս ի ներքս մտանել, և յանկարծակի զիւրովին երթեալ անկաւ։ Իսկ որ ի վերայ պարսպին էին, ձգեալ զճանկ երկաթի

1. Այլք. Որդեվմէց։
2. Այլ օր. դէպ քար երիցուն, կամ դէպ քարի երիցուն։

կալան զնա և քարշեալ ձգեցին ի նեղքոյ պարսպին. և զօրացն տեսեալ՝ զարձան լի սրտմտութեամբ ի բանակն. իսկ քաղաքին լինէր ուրախութիւն ոչ սակաւ։

Յայնժամ մի ոմն զօրաւոր ի զօրացն Հառմոյ պատրաստեալ հուր նետիւ և ձողիւ, արկեալ յաման ապակեղէն. և նետեալ ի վերայ ագնիւ եղիվարի, քաջաբեր և արի գոլով, վահանաւ միայն զլինկուանս ամրացուցեալ, և ելեալ ընդդուռն քաղաքին՝ մոտանէ ի բանակն այլազգեացն, Մանատաւոր ձայնելով զինքն՝ այնինքն լզլծաբեր. և երթեալ մինչև ի բարձրն՝ շուրջ անցեալ զնովա, և յանկարծակի ի վեր առեալ զչին եհեղ ի վերայ բարձրանային, և նոյնժամայն բորբոքեալ հրոյն՝ բոց ձիրանի ի դուրս ելանէր, և լինքն զառնայր փութապէս։ Զոր տեսեալ անօրինացն, ի հիացման եղեալ, հեծեալ յերիվարան, զհետ մտեալ և ոչ կարացին հասանել։ Եւ նորա եկեալ խաղաղութեամբ ետուտ ի քաղաքն, օգնականութեամբ Աստուծոյ ոչ ինչ ունելով վէրս յանձին։ Իսկ Սուլտանն լըրև եառ զերեալն, յաստիճան ձեծաւ հրամայեաց զպահապանն սրակոտոր առնել։

Տեսանեմ զԱստուծոյ մարդասիրական խնամսն, թէ որպէս մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա. տեսանեմ, որպէս զիտէ փոքր իրօք մեծամեծացն յաղթել. որպէս առ Մովսեսիւն Ովգայ՝ որոյ բարձրութիւնն էին կանգուն եր հսկայի կանգնով. կամ որպէս մանկամարդն Դաւիթ՝ Գողիաթու. կամ որպէս Սիսարայ սկայազինն այլազգեաց, ի ձեռն Յայելի՝ կնոջն Քաբերայ. կամ որպէս զՀոլեփեռնէսն՝ ի ձեռն այլոմ կնոջ։ Զայս ասացի, զի մի՛ վհատիցիմք յորժամ ի մէջ անհնարին փորձանաց անկանիցիմք։ Զի սովոր է Աստուած ներել առ վայր մի յայնպիսի վտանգաւորս նեղութիւնս, զի համբերօղքն արժանասցին պսակին փառաց, և անօրէնքն ընկալցին

վերեանց չարեաց պհասուցումն յարդարապատ պատաստանացն։ Զոր և ի հնոցին առ մանկունսն լեալ տեսանեմք, զանգի ներեաց Աստուած վինչև թագաւորն վեր սրտմտութեան զայրացմունսն ի լոյս էած զամենայն, և հնոցն պատրաստեցաւ, որպ բոցն ի քաւատան և լեռն կանգուն բարձրանայր. և նա առ աստիկ ամբարտաւանութեանն՝ ասէր, թէ Ո՛վ է Աստուած որ վրկէ զձեզ ի ձեռաց իմոց. տեա առ նմին և զմանկանցն սրտապինդ հաւատաս, թէ ընդ որպիսւմ գազանի կացեալ ի յատենի, առնէին պատասխանի հարձակապոյնս, որ յոյժ զամահանաց բռնաւորին էր։ Ոչ ինչ է, ասէ, վասն այդը տալ մեզ պատասխանի. և ապա զինչ։ Ցորժամ թագաւորի սպառնալիքն վճարեցաւ, և նոցա կապանօքն արկան ի հնոցն, յայնժամ եհաս ի թիկունս՝ որ արագն է յօգնականութիւն, և ոչ ամաչեցուցանէ զայնոսիկ՝ որ կարդան առ նա ճշմարտութեամբ։ Տես սաստիկ զԱստուծոյ իմաստիցն ըզխորան՝ յոր չհասանէ ոք. զի հուրն յերկուս բաժանեաց զբաղդէացիսն. զոր զտանէր կիզոյր. իսկ մանկանցն ցօղէր հրեշտակ, որ ոչ մեձնային ի նոսա, ոչ տրտմեցուցանէր՝ և ոչ նեղէր զնոսա. որ և զբարբարոսն ի զգաստութիւն էած, որ ի վերայ անպատուի պանչելեացն խոստովան եղեալ ասէր. Եկայք արտաքս ծառայքդ Աստուծոյ, զի և ես ընդ ձեզ օրհնեմ՝ որ օրհնեալն է յաւիտեանս։ Նոյնպէս և աստ ի ձեռն աննշան առնն՝ եցոյց մեծամեծ պանչելիս։ Արդ այս մեզ ի խրատ և ի վարդապետութիւն եղիցի։

Իսկ վասնն՝ որ քաղաքին իշխանն էր. հրամայեաց ասմկին ի վերայ պարսպին մեծաձայն աղաղակաւ անարգել և թշնամանել զՍուրսանն, որ յետ երկուց աւուրց չարժեալ բանակաւն գնաց ի տեղւոյն և երթեալ՝ հանդիպի քաղաքի միոջ, որ կոչի Արծկէ, որ է ի մէջ ծովուն Բզնունեաց, և ունի մօտ յինքն բերդ ամուր և անառիկ. և

քաղաքացիքն յայս ապաստան եղեալ ի ծովն և յամրոցն, յանհոգս կային. իսկ արքունարբու գա-
զանն ձանձաղ սեղի գտեալ ի ծովուն, եթէ ա-
ռաջնորդութեամբ ուրուք, և եթէ իւրեանց հնա-
րագիտութեամբն, մտին ի քաղաքն. և սուր ի
վերայ եղեալ կոտորեցին[1] զամենեսեան. և առեալ
զգեըրն և զկապուտ քաղաքին, ելին ի սեղանոյէն:
Եւ այս սրտին գիւր եղև Սուլտանին, և գնայ
մեծաւ արամութեամբ յաշխարհն իւր. քանզի
ոչ զոր ինչ կամէր՝ կարայ վճարել ինչ:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Կատարած[2] *բազաւորութեան Մոնոմախին:*

Գոր երջանիկ և աստուածայինն Սողոմոն, եթէ թագաւոր արդար կանգնէ զաշխարհս, իսկ անօրէնն կործանէ[3]: Զոր և իսկ աչօք մերովք տե-
սաք առ սմա եղեալ. քանզի թագաւորացդ օրէնն է աշխարհի խաղաղութիւն և շինութիւն հոգալ, որ-
պէս Աստուած յիւրմէ եղելոցն նախախնամէ ամենե-
ցուն, իսկ սա ոչ այնպէս. այլ միշտ ուտելեաց և
ըմպելեաց պարապեալ, զալըխս մեծացուցանէր.
և զգանձս, զոր ի հարկաց ամենայն աշխարհաց
ժողովէր, զոր պարտէր ի պէտս հեծելոց բաշխել
և բազմացուցանել հեծելազօրս ընդդէմ թշնա-
մեաց՝ որ զաշխարհս ի խաղաղութեան կարէին
պահել յաղթելով թշնամեացն, որպէս առնէր և-
րանելին վասիլ յիւսն ամ թագաւորեալ, ոչ զք
ի թշնամեաց համարձակեցաւ յաշխարհն նորա
մտանել. իսկ սա զգանձն զոր ժողովէր, ի բազից
ծախան վճարէր և ոչինչ ցաւէր նմա աշխարհի
աւերուածն. քանզի այնքան պառնիկ և բազատէր էր՝

1. Եբկոս օր. զաւեւցայն:
2. Երեք օր. կոտորած:
3. Այլ օր. զոր և այժմ իսկ:

մինչեւ կատանդնուպօլսոյ կանամբքն չյապեցաւ, այլ ի հեռաւոր աշխարհաց տայր ածել կանայս, և զօրն ամենայն նոքօք վարանէր։ Վասն որոյ հաճարձակեալ թշնամեացն որպէս զայլք քաղցեալք ոլք յորժամ գտանեն զհօտն առանց պահապանի՝ յանխնայ կոտորեն, նոյնպէս և ի սորա ժամանակս եղև յարնելից և յարևմտից առ հասարակ կոչանումն քրիստոնէից, զոր ի վերոյ փոքր ի շատէ նշանակեցաք։ Եւ սա այսպիսի գնացիւք վարեալ զկեանս իւր՝ վախճանեցաւ. որ թագաւորեաց ամս երեքտասան, ոչինչ բարի յիշատակաց արժանի եղեալ։

Իսկ Թէոդոսն որ էր դուստր թագաւորին Կոստանդեայ, կալաւ զթագաւորութիւնն իբրև զիւր սեպհական ժառանգութիւն հայրենի՝ որում ոչ զք կարացեք ի վերայ յառնել։ Այր որ առաքէ Սուլտանն տաճկաց՝ դեսպան, և զրէ առ նա հրովարտակ, որ ունէր օրինակ զայս. Եթէ կամ տուր զքաղաքս և զգաւառս ինձ, զոր նախնիքն քո տարեալ են ի տաճկաց, կամ տուր յամենայն աւուր հազար դահեկան։ Իսկ նորա տուեալ ձիս և չորիս սպիտակամազս, և բազում գանձս և հանդերձս ծիրանիս և առաքեաց նմա։ Իսկ նորա վեր ի վերոյ ընկալեալ՝ զատրօղ գանձին առ իւր արգել, ճանապարհ առնելով նովաւ յաշխարհն Բաբելացւոց. և էր Թուսկանիա մերոյ ամք հինգհարիւր չորս։

Եւ ի սոյն ամի եղեն Պարսից զօրքն յանուն Սուլտանայ, բայց ասեն թէ Ապուսուարայ էին, այն որ գԴաւին և զգանձակ ունէր, և էր վեսայ թագաւորին Հայոց Աշոտոյ, որ եղեալ էին յաշխարհն Հայոց։ Ցորոց հինէ՝ մարդաբնակ տեղքն վախուցեալ՝ ի քաղաքն Անի ժողովեցան, և ոչ ժամանեալ ամենեցուն ի ներքս մտանել, քանզի երեկոյացաւ ժամն և ածէն զդրունս քաղաքին, իսկ զօրքն Պարսից դէշերապնայ եղեալ, կալան զդուռն քաղաքին, և սուր ի վերայ եղեալ՝

անհնարին կատարուածս առնէին, որում ոչ պիտոյ օգնական. զորոյ առեալ զառ և զպերի, գնացին յաշխարհն Իւրեանց։

Իսկ ի կողմանս Տարօնոյ թէոդորոս որդի Ա-հարոնի, զոր Աւանն կոչէին ըստ Իւրեանց լեզուին, զպերն պակաս[1] ունելով, որ նա էր իշխան գաւառին. առ որ եկեալ գունդ մի ի թուրքացանէ՝ հնազանդեցան նմա, և կամեցան ըզմիաժուռթիւն ցուցանել. մնալ ի գաւառն խլաթայ և առեալ ասար բազում, ածին ի Տարօն։ Իսկ ժողովեալ զօրք ի Պարսից և ի Թուրքաստանէ յղեցին առ Թէոդորոսն՝ թէ կամ տուր զապատամբեալ ի մեզ, կամ թէ ոչ՝ զերկիրդ գերի առնեմք։ Որում ոչ առեալ յանձն, յետ որոյ եկեալ ճակատեցան ընդ միմեանս երկիցս և երիցս, և բազում արուեստիւնս ցուցեալ իշխանին, յետոյ կարեւէր խոցեալ՝ յետսակաս աւուրց վախճանեցաւ. որ յոյժ ապաշաւանաց արժանի էր նորա վախճանն մանուկ հասակաւ և գեղեցկաշուք կերպարանօք զդաւթի մարգարէին ունելով զնմանութիւն, և քաջութեամբ առաւելքան զբազումս, որ տարաժամ բարձաւ ի միջոյ.

Իսկ ի գալ ձմերանին, յաւուրս աստուածայայտնութեան տօնին՝ դիշերապնայ եղեալ զօրք անօրինացն, և ելեալ ի քաղաքապիւղն Հարքայ որ կոչի Մանկան գոս, և կալեալ զնոսա անհաւատքն, զեռ նոքա զդիշերական պաշտօնն կատարէին, աւուր ի վերայ եղեալ կատարեցին զամեաեան, և որ չուրջ զնովաւ գիւղք և ագարակք էին. և առեալ զգերի և զաւար, չոգան ի գեօղն Աբաժանի, քանզի ընդ այն իսկ անցանէին։ Եւ հանեալ ի վերայ պարիսպն զան և զգերին, յանկարծակի հասեալ պարիսն, զորս ի վերայ կային՝ զամենեսեան ընդ իւրեաւ ածեալ։

Ով քանի զան է պատմելիւնս և ողբոյ արժանի

1 Ուրիշ տպ. ունի պակասի։

ժանի. այլ թերևս ոչ մեզադիր լինելյն մեզ, թէ
մինչև ցե՞րբ զվշտաց և գնեղութեանց արկանես
առաջի մեզ զոյցս[1]։ Մարգարէքն քանի՛ ապա-
նական բանս մարգարէանային, որ յետ ժամա-
նակաց լինելոց էր. ժողովուրդն ընդ այն դժկա-
մակս լինէին. իսկ ես ոչ թէ ապառնալեաց եմ
քարոզ, այլ զեղեալ և զդէպս եղեալ իրս պատ-
մեմ. որպէս զի ամենեցուն՝ որք լսեցեն, չարժե-
ցից արտաստս թէ ո՛րքան գառն ժամանակի հան-
դիպեցաք. կարծական եղև մեզ այս կեանքս։ Ե-
թէ մեղք հարցն մերոց ընդ մեզ եղեն, որպէս
մարգարէն ողբալով զնուրցն ամբաստանէր, ապա
աւանդ է մեզ որ մեք զպարտիս հարցն մերոց վճա-
րեմք։ Եւ ո՞ր է այն Աստուած ընդ եզեկիելի
խօսելով ասէր. «Որդի՛ մարդոյ զի՞նչ է առակդ
այդ զոր ասեն ի մէջ Իսրայելի, թէ հարքն ա-
զին կերան, և որդւոցն առամունքն առին։ կեան-
դանի եմ ես, ասէ տէր, եթէ լինեցի առակդ
այդ ի մէջ Իսրայելի. զի ամենայն անձինք իմ
են, որպէս անձն հօր նոյնպէս և անձն որդւոյ»,
և որ ի կարդին. և ապատեաց զորդի ի պարտուց
հօր։ Եւ եթէ վասն և մերոց չարեաց եկին այս ա-
մենայն ի վերայ մեր, ապա ողորմելի եմք քան
զամենայն մարդիկ. աչխարհ ամենայն ի խաղա-
ղութեան բնակէ, և մեք դերիք և կալանաւորք,
սրակոտորք և տնաւերք, և յընչից կողոպտեալք։

Զորք ամենայն թագաւորութեան ունէր Հայք,
թո՛ղ[2] թէ զկնիւրապաղատեան իշխանութիւն, և զոր
ի Հոռոմոց։ Եւ հայրապետութիւն մեծ և նախան-
ձելի ամենայն ազգաց. և վարդապետք[3] ճշմար-
տախօսք, հանդոյն առաջին վարդապետացն՝ ի
խորս գիտութեան հասեալք. յորոց բանից ամե-
նայն վաղանդք հերձուածոցն կորակնեալք և
ընդ գետին մտեալք, ո՛չ կարէին ի վարագ հո-

1. Երկա՛ր օր. Ասեմ. մարգարէքն։ դատին իշխանութեանէ։
2. Երկ. ար. զի ի Կիւրապա- 3. Երկա՛ր օր. ձարտարապետս։

ոչ հաւատայելոց մոտանել. քանզի և զանապատնոչ ընդունէր զնոսա, որ ճանաչէ զնրան և ճանաչի յնրոյն, եւ եկեղեցիք մեր նրբև զնորահարան զարդարեալ ամենայն վայելչութեամբ առ ի հաճել զկամս անմահ փեսային. և նորածին մանկունք յանախատ արգանդէ մօրս մերոյ Սառայի նրբև զձագս աղաւնեաց երամայեալք կոկորդա-նր ձայնիւ զհրեշտակական երգէին զնրդս:

Արդ՝ եկ և սեա զչար և զառանց մխիթարութեան զխոխարէնն զոր ընկալաք: Ո՛ր թագաւորացն ասիոք, ահա ոչ երևի.ուր զօրացն բազմութեան որ նրբև զամպս խոտացեալ առաջի նոցա, զօրէն զարնանաբոյս ծաղկանց զունակ զունակ հանդերձիւք վայլէին. ահա ոչ են, և ոչ ևս երևին. ո՛ւր հայրապետական ասիոն մեծ և հրաշալին զոր երանելի այրն Աստուծոյ մեծն Գրիգորիս նրկեալ ի խորութիւն վիրապին՝ քրանալոր աշխատութեամբ զհնգետասան ամ փորձեաց, և ի վերայ առաքելական ասիոոյն եդ զաթոռ նր. այսօր սեանի թափուր, զատարկ ի բնակչաց, մերկ ի զարդուց, փշուով և տարդիսացիւք լցեալ, և ժառանգ ասիոոյն յօտար աշխարհ հեռացեալ նրբև զգերի և զկալանաւոր: վարդապետաց ձայնք և քարոզութիւնք լռեալք. և հերձուածողաց զաք, որ առ նոքօք նրբև ձամուտ մկունս այր անդր թաքչէին հալածեալք ի նոցա աստուածաբանական բանիցն և յուղղափառն խոստովանութենէն, այսօր նրբև առիւծունս հզօրեզապէս աներկիւղ ելանեն ի խշոխից բերանաբաց թէ զո՛ կլանիցեն յանձանց մոլոց: Զինչ ասացից և վասն եկեղեցւոյ, որ յառաջն այնպէս զարդարուն էր և վայելուչ, բազմածնունդ[1] դերեզմանիկ. որ և զմարգարէն[2] ի հիացումն շարժեաց. իսկ այսօր նաւի անշուք, անզարդ, մեր-

1. Ms օր. և երջանիկ:
2. Ms օր. ի զարհուրացուցիչ այլ օր. բարկացուցիչ:

կացեալ յամենայն գեղեցկութենէ իբրև զկին
մի այրի անուրկ, մերկացեալ ի զարդուց, ան-
կեալ խաւարոյ, պատառատուն հանդերձիւ նըս-
տեալ առանց մխիթարի. այնպէս և աստ տեսա-
նի. ջահ չկայաւք, ճրագունք անցեալք, խնկոց
բուրմունք և անուշահոտութիւնք ազատեալք, պակ
աէրասնական սեղանոյն փշրամ և մնխրամ ծած-
կեալ: Զատ ի ամենէ մանկունս է տեսանել, որ ի
դրանս տրա բնակիտ ի ձեռս առեալ զդաւթա-
կան երգս երգէին, այսօր ի դուրս դիւաբնակ
կաղապանացն՝ զոր մկկիթն կոչեն, անդր կաքա-
ւեն ուսանելով զնահմեռաւանդ զաստուածեայն: Նաև
կանայք պարկեշտք և ողջախոհք՝ որ զօրինաւոր
ամուսնութիւնն յարանց իւրեանց մեծ թախան-
ձանօք ընդունէին, այսօր յանառակ և յայլանդակ
խառնակութիւն սովորեալք են:

Արդ եթէ այս ամենայն զոր պատմեցաք, վասն
մեր չարեացն եհաս ի վերայ մեր, ձայն տուք
երկնի և որ ի նմա և որ ի վերայ նորա. ձայն
տուք երկրի և որ ի նմա կենդանիք. ձայն տուք
լերանց և բլրոց, ծառոց և անտառախիտ մայ-
րեաց, թող լան և ողբան զմեր կործանումն:
Զայս և մարգարէքն առնէին ի յուրախութիւնն.
լերանց և բլրոց խայտալ հրամայէին, և գետոց
ծափս հարկանել և ծովու զուարճանալ և մայրից
ցնծալ. քանզի որք ամենեքին համատոհմք են
մեր, յուրախութիւնս մեր ուրախակից մեզ լի-
նին, պարտին և ազգն հաղորդել. զոր օրինակ
և յառաջինն՝ խնամարհեցան ընդ մեզ յաւուր
խոնարհութեան և տառապանաց մերոց, ղի վասն
մեր լակ եղեն: Բայց և այս չէ մեզ օգուտ ի մխի-
թարութիւն, ղի զմեռեալ՝ թէպէտ բազում ժա-
մանակ լան և կոծեն և ի խաւարն փակին, չբե-
րէ ինչ նմա օգուտ. ղինչ եղև օգուտ հրէից՝
երեմիայի լացն, և Քրիստոսին՝ երեսատեմի
համ Ցուդային. սաւ ինձ. և ոչինչ. վասն որոյ զայս
պատճառի, պարտիմք յանձանց ուղղութենէ հաշ-

տեսուցանել զԱստուած. զի թէ այս յորդորել, և թշնամեայ սուրն պակասի ի սպառ, և զբաժառքն մեզ ի գերբինա փոխի, և առապարքն ի հարթ ճանապարհ. և տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ: Զի թէ Աստուած ի մեր կայ լինելի, ով կարէցէ կալ մեզ հակառակ. քանզի ինքն յօրէնս հրամայեաց, թէ «թշնամեայ քոց թշնամի եղէց, և պատերս քո սատակեցից». և դարձեալ, թէ «Ոչ թողից զքեզ և ոչ ընդվայր հարից». միայն թէ ընդ Աստուած խաղաղութիւն ունիցիմք, և առ նա սրտի մտօք կարդայեմք՝ զգործս բարիս ի միջի գրաւականն ունելով, չէք ինչ ի հակառակացն որ զմեզ տրըտմեցուցանել կարիցէ: Տէրունի է և այս զոր յեսայեայ գոռանեմք ի գերան, թէ «Մինչչև ւոչ եցէ քո կարդացեալ, ես լուայց քեզ. և մինչդեռ խօսեցիս, ասացից եթէ զի՞նչ խնդրես». որ ընդ առնայն[1] չերմագութ հարամբ անցանէ այս բան: իակ յանարժանից ձեռնթափ լինի ասելով. «Ոչ եղիցի անձն իմ ընդ նոսա». և դարձեալ, «Իցէ զի կարդացեք առ իս, և ես ոչ լուայց ձեզ. խնդրեսցեն զիս չարք, և ոչ գտցեն». և դարձեալ. «Յորժամ համբառնայցէք զձեռս ձեր ի վեր, դարձուցից զերեսս իմ ի ձէնջ. և եթէ յաճախիցէք յաղօթս, ոչ լուայց ձեզ». քանզի զի՞նչ հաղորդութիւն է լուսոյ ընդ խաւարի:

Երկիցս[2] եղբարք և ակնածեցուք յերկնաւոր կոչման պատգամացս. մի՛ լիցուք յանծանօթից նորա, զի մի՛ ասիցէ, թէ Ոչ ճանաչեմ զձեզ. այլ լիցուք ի բարեկամաց կարգի նորա, զի ասիցէ ցմեզ. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ զկեանն:

1. Յոր. մրուտ. ջերմագոյն հարուածովք:
2. Մի օր. երկնային կոչման:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Թագաւորութիւն Թէոդոսին որ յաթոռն[1] Աստուածածին։

Յետ մահուանն Մոնոմախին, մինչեւ առիւծաբար զաղանութեամբ մատակ առիւծն ի խշտխուր, այն որ յառաջ գուցաւ Դանիէլի ի տեառնութեան իւրում, և կոչեալ զվլխաւորս քաղաքին, և զմեծամեծս յիշխանացն, առէ ցնոսա. Թէ զի ի ձէնջ վատահանայ ելանել զօրօք յարևելս և[2] դադարեցուցանել[3] զդռան Պարսից, և նուաճել զաշխարհս ի խաղաղութիւն, յայնժամ թո՛ղ համարձակ գայ նաեւ Թագաւոր. Ասաւծոյ իրաւանց նա է արժանի Թագաւորութեան. իսկ թէ զի չառնու յանձն զասացեալս, տեղապահ ես բաւական եմ։ Զայս լուեալ իշխանացն, գնացին առանց պատասխանի տալոյ յիւրաքանչիւր[4] պալատս։

Իսկ Թագուհւոյն զՍուլտանն իբրև զբաղցեալ գազան՝ որոց առաւութեամբ յագեցուցեալ մինչզի մոռանալ նմա զ'ի վերայ մեր զյառնումն. այլ անդրէն ի Բաբելոն և որ զնովաւ կողմամբքն յուզէր զմարտն. քանզի յոյժ պատերազմասէր էր այրն։ Բայց որ մեր էին սահմանակից և դրացիք՝ խանձեալ, ոչ գադարեցին զամսաւն և զձմեռն յապականելոյ զաշխարհս Հայոց. քանզի զիտէք որոնէին, և ուր լէին զմարզաբնակ տեղեաց, զիշերապնաց եղեալ՝ յանկարծաւտ ի վերայ անկանէին, և նորանշան հարուածով անողորմաբար զամենեսեան առհասարակ սատակէին. և անհոգա-

1. Երկու օր. աստուածոչհի։ յայլ. ի միւսն գրեալ այն է տեղիս։ Եւ միւն և եթէ արբապետ էր ի պալատ։
2. Մի օր. դարձուցանել։
3. Այլ օր. զգուռզն։
4. Յամենայն օրինակս գրա-

ցեալ յերկինս՝ բազում աւուրս անդէն ի տեղւոջն, մինչև լիլ արկեալ տանցն, եթէ ուրուք կայր ինչ ի թաքստեան զամենն հանեալ, և բնաբարձ աւերմամբ քանդեալ զվայրն, առեալ զառ և զդերի՝ յաշխարհն իւրեանց դառնային։

Եւ քանզի աւան մի էր ի գաւառին Բասենոյ՝ մերձ առ ստորոտով լերինն որ կոչի Ծիրանիս, և անուն նորա Օկոմի, մարդաշատ և ընչաւէտ. յորոյ վերայ դիշերապնայ եղեալ անօրինացն յաւուր մեծի աստուածայայտնութեան տօնին, և քանզի ի սաստիկ առնամանեացն զաշխին[1] բըրատացեալ էին ձեռք և ոտք մարդապէմ գապանացն, որք յորժամ հասին մօտ ի չէնն, գտին խոտ բազում ի դարմանս անասնոց դիզեալք, որոմ հուր հարեալ, և ի հրատին բորբոքմանէ առհասարակ գաշտն ամենայն իբրև մի ջօրէիւ լուսաւորեցաւ. առ որ կացեալք չեռան ինքեանք և երիվարք իւրեանց։ Եւ ապա լարեալ զաղեղունան և մերկացուցեալ զղէնսն՝ յարձակեցան ի վերայ չինին, հեշտացեալք իբրև յամրայնի, և աւր ի վերայ եղեալ կոտորեցին առհասարակ զամենեսեան ոպիս իբրև երեսուն հազար, ոչ ծնալով ի բնակչաց տեղւոյն և ոչ մի, բայց թէ ի ճանապարհի ուրեք ոք կայր։ Եւ առեալ ի տեղւոջն աւուրս երիս, և բարձեալ զանց և իշուց և ձիոց զամբարս ցորենոյ և գմբեթս ընչից, և սակաւ ինչ ի պիտանեաց, զորս առեալ գերի, գնացին յաշխարհն իւրեանց։ Ալլ[2] զբազմապէմ չարիսն, զորս նոքա անդ գործեցին ընդ դրով ոմ կարիցէ արկանել. և այսպիսի ձեռնարկութեամբ ամայացաւ ի բնակչացն երկիրս ամենայն, ոչ ծնալով կենդանի՝ բայց եթէ յամրոց ուրեք։

Իսկ թագուհւոյն կալեալ զիշատութիւնն ամն երկուս, և հասեալ ի խորին ծերութիւնն, հիւանդացաւ զհիւանդութիւն, որով և մեռաւ

1. Երկու օր։ գրուագեալ։ 2. Երկու օր։ գրագոյժ։

լակ. որում եկեալ առաջի գլխաւորք քաղաքին՝ խնդրեն, թէ Մինչդեռ կենդանի ես, կայ՛ զոք թագաւոր, որպէս զի ճնասցէ առանց խռովու- թեան քաղաքս: Որում հաւանեալ թագուհւոյն, հրամայէ զոմն ածել ի գլխաւորաց քաղաքին Մե- խայէլ անուն, որ իւր հարանցն ժամանակա- լեալ էր ի պաշտօնէից պալատանն, այր հաստակա- խանարհեալ յալիս, և ընչաւէտ յոյժ, և կայու- եանէ զնա թագաւոր հաւանութեամբ քաղաքին. և ինքն զկնի երից աւուրց չոգաւ[1] զճանապարհ ամենայն երկրի, ուր ի միասին թագաւորք և տանկք ըստ դաւթական երդոյն: Իսկ իշխանք աշխարհաց մեծամեծք և փոքունք յորժամ լսեան զնորա թագաւորելն, եկին ամենեքինն առ ի հնա- զանդութիւն: Եւ զոր պարտ էր նմա ողբական բանիւք և պարգեաց առաւութեամբ զամենե- սեան ուրախ առնել, և ընդ ինքեան իշխանու- թեամբ ի հնազանդութիւն նուաճել. իսկ նա չը- մարդի գոլով՝ զՈւրբովամն ախտացեալ, զոմանս յիշխանաց պահէր՝ անարժան գոլ իշխանութեանն. իսկ ընդ մեծամեծան առենախօս եղեալ, ասէ. կամ ելէք ընդդէմ պարսից ի պատերազմ, և մի՛ տայք զերկիր ապականել. կամ թէ ոչ, զձեր հոգն հարկեցէք պարսից, և պահեցէք զաշ- խարհս ի խաղաղութեան: Որում ոչ հաւանեալ իշխանացն՝ ելին առանց պատասխանւոյ յերե- սաց թագաւորին, և միաբանութեամբ գաշն ա- րարեալ՝ անցին ընդ Ծովն, և ժողովեցան զօրք բազումք, որոց ոչ գոյր թիւ: Որոց առաջնորդք էին Կամիանան որ և թագաւորեցաւն իսկ և Կամենան. և ապստամբեալք ի թագաւորէն երկմտեալ չափ ոչ հնազանդել նորա թագաւո- րութեանն: Եւ այս եղև ի հինգհարիւր վեց թա- ւականի մերոյ, յորում չոտամ զիքսանի էր տան, վայ տարւոյն, վայ աշխարհաւեր խորհրդոյն,

1. Մի օր. զկնի որք ի միասին եւն. դաշ[ն]եալ։

յորում կրթանեալ ապականեցան բնաւից երկ-
իւ. քանզի պարձաւ յառաջին անպարտութիւնն
ըստ աշխարհապատում բանին. «Երկիր, ասէ,
էր ամայի և անպատրաստ. վասն դի մարդ չէր
որ պտղէր զերկիր», Զի զոր օրինակ գեղեցիկ
գեմք առն՝ ի ծաղկի հասակի սիրուն և յանկալի
տեսողացն ցուցանի, նոյնպէս յորժամ զարդարիչ
հոգին մահուամբ բաժանի ի նմանէ, յառաջին
պայծառ և գեղեցիկ զարդուցն ահարկելի և ան-
ուք ցուցանի տեսողացն, նաև գումին ընդ նմա
հատանի. ըստ այնմ, թէ «Մոռացեալ եղէ ես որ-
պէս մեռեալ ի սրտէ». ըստ նմին օրինակի[1] զեր-
կիր է տեսանել. զի յորժամ մարդաբնակ չինու-
թեամբ հարստանայ, յայնժամ երկրագործք ա-
ռատութեամբ[2] սերմամբ զանդաստանս ընուն.
որք յորժամ բուսանին, կանաչագեղ տեսլեամբ
զվայրան վայելչացուցանեն, և բարձրաբերձ աճ-
մամբ ի վեր ընձիւղին. և յորժամ զհասկիցն
զկերպարանս ի գագաթունան երևեցուցանեն,
յայնժամ թանձրախիտ բարձրութեամբն ամպա-
ձև տեսողացն ցուցանի, և ի քաղցրաշունչ օդոյն՝
ճոճի, ճեմի զօրէն ծովային ալեաց. այսպէս և
հօտք անդէից արօտականաց ի հովիտս դալարա-
բեր բուսոց առ ցուրտ ալբերակամբք խայտան
խաղան, և երկիր իբրև զպայեակ՝ գեղեցիկ դի-
մօք զարդարի նոքօք, ըստ այնմ, եթէ «ցնծա-
ցեն դաշտք, և ամենայն որ է ինոսա»։

Իսկ այժմ զնորին հակառակն տեսանեմք. եր-
կիր աւերակ, թափուր ի բնակչաց. քաղաքք կոր-
ծանեալք, և անդաստանք խոպանացեալք և վշա-
բերք, ահագին և զարհուրելի անցաւորացն ցու-
ցանի. նաև քաղցրաձայն հաւուց սարսք, որք
մարդասէր բարոյիւք ընտանի գոլով մերոյին ա-
զին, որ քաղցրանուագ եղանակօք զվայրան հըն-
չեցուցանեն, և յառաւօտինան ճառագայթիւք

1. Մի օր. երևի ցուցանի։ 2. Մի օր. սերմանի։

և բարձրաձայն[1] կարկաչիւք ջերմակրպութեան ի դանդաղանաց իբրև խթանու զարթուցեալ, ի բարձանչիւր արուեստից պատրաստաբար յարդարէին. բայց այժմ չէնք աւերակք և ամայիք և անմարդիք, և նոցա ոչ գոյր տեղի բնակութեան. զի ուր տառեղունքն բոյն կառուցանեն, և ուր ակարք ի թռչնոց ի նոսա ապաւինին բազմանին ձայնք. և կամ ուր ծիծառն զիւր վանիկն յարդարէ՝ աներկիւղ նուագանել զառ ի յինքենէ ձնեալն: Արդ այս առանձնաւորս տեղւոյ կայցէ բանս. մեք ի գլխոյն սկիզբն արասցուք զժուարալուծ և չար պատմութեանն:

Արդ յորժամ յերկուս բաժանեցաւ առն ցուցանց, և գառապանն երկաթի՝ գառապան՝ եղեգնեայ չախչախ եղև, զոր Ասորեստանեայն զեղխատացւոյ թագաւորութիւնն նախատեալով՝ այսպէս անուանէր. և կաթսայն որ Երեմիայի յեռանդն ցուցայ՝ որ ի հիւսիսոյ ի հարաւ ձգէր յայնժամ զցնցուղս եռանդեանն, այժմ ի հարաւոյ ի հիւսիսի ահագին եռանդեամբ, և կիզեալ ապականեաց զազգս քրիստոնէից: Քանզի ըստ տէրունի հրամանին՝ թագաւորութիւն բաժանեալ ոչ կարէ կալ, այլ կործանեալ է, արդարև եղև իսկ. քանզի յորժամ Պարսիկք գիտացին զառյա մարտ և զհակառակութիւնս առ միմեանս, համարձակապէս ելին ի վերայ մեր անդադար երթևեկս առնելով[2], տարաբնդ զաշխարհսն կործանումն:

Արդ ի սկսանել տարւոյն, զորոյ զյիշատակն վայել արարաք, և նոքա իբրև զպայլս գիշախանձս՝ որք հանդիպին հօտի՝ որոյ ոչ գոյէ հովիւ, զի ոչ թէ իւրեանց կերոցն միայն չատանան կուսրել[3], այլ զամենայն չանան: Նոյնպէս և ի պարսից եկեալ զօրքն՝ ոչ թէ աւարաւ յագենային, այլ անյագ քաղց մերոյ սատակմանն ունէին. զի

1. Երկաթ օր. կարկաչանօք. մրմունջ, տարաբաղդ յանգեալ:
այլ օր. կարկանչիւք:
2. Մի օր. տարեաւր յանգեալ. զանձեւայն չանուն:
3. Յերկ. օր. պակասի, այլ

զոր աչօք տեսանէին, անհնար էր նմա ի ձեռաց նոցա պրծանիլ, մեծ բարեպարծութիւն հաշուեւ լով պայն։

Արդ ի լինել մարտին Հռոմոց, որպէս Լիպարտն խնդանէ անուն, որում տուեալ էին ի պարգեւ տեղիս բնակութեան մեծ ասանն Երիզայ ի գաւառին Հաշտենից, և որ շուրջ պնուաւ պատերբք, սա իբրև լսաւ պայն՝ թէ թագաւորութիւն յերկուս բաժանեալ է, դնաց և խաբանօք էառ զամուրն Եղանց բերդ կոչեցեալ, և արբեալ պայն ընդ իւրով ձեռամբ՝ դառնայ անդրէն ի գաւառն Աղորի, և յամուրն որ կոչի Հաւաճիչ. և բարեկամաբար ել քաղաքն ընդ առաջ նորա. և գաւառն որ ունէր զհոգս արեւելից՝ որ յայնժամ անդ հանդիպեցաւ, զոր իբրև եառնա՝ վաղվաղակի ունել հրամայեաց. և առեալ ի նմանէ դանձ անչափ, և ձիս և ջորիս և զամենայն զոր ինչ և նա յարեւելից ժողովեալ էր, և զինքն եդ ի յեղնուան ի բանտ. և ինքն փոյթ ընդ փոյթ չոգաւ ի վերոյ ամուր քաղաքին կարնոյ։ Եւ առաջամ մի ջանայր խաբանօք, ասելով թէ ի թագաւորէն հրաման ունիմ, իմ է քաղաքդ, բայեք զբուն, զի մերոյ։ Եւ իբրև այնու ոչ կարաց հնազանդեցուցանել, ապա մարտ եդեալ, պատեբաղմաւ կամէր առնել քաղաքին. իսկ որ քաղաքին էշխանն էր, վաղվաղակի ձանուցանէր էշխաներն որ նաեր յայնի, և ունէր զպատիւ մագիստրատութեան. որ իբրև լսաւ, զմի ի գլխաւորացն հանդերձ զօրաւ առաքեաց ի վերայնորա։ Իսկ նա իբրև ձաննաւ զպյն, ասպատակաւ առ գերկիրն և գարձաւ ի տեղի իւր. և առաքեաց ի պարսիկս բերել զօրս յօգնականութիւն իւր. այս եղև սկիզբն անհնարին չարեաց որ անդ ընդ մեզ։

Զոր իբրև լսան անօրինաց ժողովքն զհրաւէրն, ձայն տուեալ միմեանց, առժամայն ի մի վայր եկեալ, փութապէս առ նա հասանէին. իսկ նա ի-

բրև եաես զբազմութիւն զօրացն, զահի հարաւ. և քանզի ոչ դայր հակառակ ոք, քանզի էշխանն այն՝ յորոյ պատճառս նոքա եկին, յորժամ զիւշինն առ զնոցա զալոյն, մնեալ ի մեծ ամուրն, ամրանայ։ Յայնժամ եկեալ զօրքն ասեն. մեզ ճանապարհ ցոյց աւարի[1], զմեզ դառարկ մի՛ դարձուցաներ. իսկ նա անճարեալ, ասէ նոցա առաջնորդ լինելոյն, որք եկեալ զէշերտպնաց եղեալ ընդ անապատս վայրս, հասին և վերայ դաւառին խաղտեաց. և յանհոգս կալեալ զնոսա, ըստ իւրեանց արհնաբերս բարուցն, որոց պատահեցան՝[2] զարան զամենայն սրակատար արարին մինչև ի խրթի անտառն Ձանելթոյ, և առեալ անչափ առ և գերի, գարձան մեծաւ յաղթութեամբ. և եկեալ առ չաբեաց առաջնորդն՝ մեծաւոր պարգևօք չնորհակալս մատուցին նմա վասն ճանապարհի յաղթութեանն որ պատահեաց նոցա. և ապա զնացին յաշխարհն իւրեանց։ Եւ քանզի տեսին զերկիրն անտէրունչ և առանց պահապանի, վասն այսորիկ հուպ ընդ հուպ գարձ արարեալ ելին ի նոյն՝ չաբին արբանեակք. և լինել ի գաւառն Մանանաղ, բաժանեցան յերկուս։ Մի բաժինն չոգաւ ի յԵկեղեաց, և անկեալ զէշերտն ի վերայ քաղաքին որ ի նմա, և զոր ի նմա գտին անպատրաստ և առանց զգուշանալոյ. զոյդ զաղեաւսեր և զոսկեմատեան չարեացն չեմ բաւական ընդ գրով արկանել. զի ի լուանալ առաւօտուն՝ լալագին էր տեսանել տեսութիւն լի խռովութեամբ, որ և ըզքարինս անգամ և զանշունչ արարածս բաւական էր յոյզս հառաչանաց շարժել. զի ոյր ուրուք ի տեսողացն ոչ բեկանէր սիրտն, և ոչ զգուռն հարկանէր անձն, և ոչ խաւարամած միգաւ մթանայր լուսարանք երեսացն. զհրապարակս լի գիակամբք տեսանել, և զտունս և զընդարձակ սրահս և զբազմատեղեան չարեացն չեմ բաւական ընդ գրով արկանել. զի ի լուանալ առաւօտուն՝ լալագին էր տեսանել տեսութիւն լի խռովութեամբ, որ և ըզքարինս անգամ և զանշունչ արարածս բաւական էր յոյզս հառաչանաց շարժել. զի ոյր ուրուք ի տեսողացն ոչ բեկանէր սիրտն, և ոչ զգուռն հարկանէր անձն, և ոչ խաւարամած միգաւ մթանայր լուսարանք երեսացն. զհրապարակս լի գիակամբք տեսանել, և զտունս և զընդարձակ սրահս և զբազմատեղեան

1. Երկ. օր. աւրանի։ 2. Երկ. օր. զօրսն։

ևայն սահմանք քաղաքին ներկևալ էր արևամբ կո-
տրելոյն. ուր և պրպտեմն պետ ի հոգիս էր առ-
անել, հատեալս ի ձայնէ պժուարապես չնչելով,
և պայլս անողորմաբար չարաչար վիրաւորեալս. ըզ-
կևսոյն զխորոմեան հեղեալ և պետրդն հանեալ և
ի բերանն եդեալ, էր պի կենդանւոյն լսկ ատել
բանապատէին: Ով քո, Աստուած, յայնժամ նև-
րոպեանդ. ով մերոյ չարեացս առաւելութեան.
պի այս երեքատասան ամ է որ պայապիսի անհան-
դուրժական կերս կրեն ազգ քրիստոնէից, և չգի-
չաւ արամատութիւն բարկութեան տեառն. այլ տա-
կաւին ձեռն իւր բարձրացեալ է՝ ի բաժակաւ
անապակ պինոյ արբուցանել՝ արբուցումն չար:
Ոչ ևս ի ներումն և յողորմութիւն, այլ ի հա-
տուցումն առելոց. այսքիւք պաշարեալ զքա-
պքն և որ շուրջ պնովաւ գիւղք և ագարակք,
մինչև չմնալ կենդանւոյ ուրուք ի մարդկանէ, բայց
եթէ յամուրս ուրեք: Իսկ անօրինացն լցեալք և
յապեցեալք ատրան, հուր հարեալ քաղաքին,
առեալ զպերն և զկապուտ գառանն, գարձան
անդրէն: Այսքիկ վշտամբեր պատմութիւնք գո,
ով քաղաք, ոչ ևս քաղաք ապատանի, այլ խոր-
խորատ կորստեան ի քեզ բնակողացն, ի բազ-
մապիկ չարեացն սակաւ ինչ նշանակեալք:

Եւ եկեալ անօրինացն, հասեալք ի գառան
կարնոյ մերձ ի գիւղն որ կոչի Բլուրս, և քան-
զի բնակիչք տեղւոյն չկրկապատեալ պարսպաւ ըզ-
բլուրն՝ ի վերայ հոգոյ եղեն զհիմունս նորա, ըստ
սերունդական առակին, վասն որոյ ի գալ անօրի-
նացն զօրէն յորդեռանդն հեղեղի, ի բախեն ըզ-
նա՝ ոչ կարացեալ վայրկեան մի կալ ընդդէմ, այլ
վաղվաղակի կործանեցաւ, և եղև կործանումն նո-
ցա աշխարհալուր և անմուռաց մինչև ի կատա-
րած յաւիտենից: Արդ զոր նոքա յոյս վրկանաց
և տեղի ապաւինի կարծէին, եղև նոցա գուբ ա-
պականութեան, և զանդի որ յոյս կոյս գառոյն
Եփրատայ էին գեօղք և կրօնատանք, ամենեքեան

անդ էին հաւաքեալք, այլ և յԱրծինն առանէ բա-
ղումք, յորոց վերայ հասեալ թշնամեացն՝ առ-
ժամայն առակեցին զամուրս նորա. եւ մնեալ ի
ներքս՝ ի փայլուն սուսերացն և ի ձայնէ լարից
աղեղանցն, զղոզի հարեալ ամենեցուն յերկիւղն՝
իբրև չղթայիւք կապեալ եղեն: Եւ քանզի ոչ
գոյր իշխան և առաջնորդ, որ ահիւ և իրաւու-
մանօք զնոսա յոգի զօրութեան վառէր ընդդէմ
թշնամեացն, և նահատակս քաջս յորդորելով՝ որ-
պէս օրէն է ամենայն պատերազմողաց. վասն այ-
նորիկ անտերունչք գոլով, ի տեղենէ միայն լքան-
լուան, խռովեցան, սասանեցան, և ամենայն ի-
մաստութիւն նոցա ընկալաւ. և սկսան ի միմեանց
գողանալ զանձինս. ոմանք ի գալ գիշերոյն ընդ
պարիսպն իջեալ՝ փախստական եղեն, եւ այլք կա-
մօք անձնատուր եղեալ. իսկ որք ի ներքս ճեա-
ցեալ, զպատերազմի հոգս թողեալ, խորափիտս
փորեալ, ընդ հողով ծածկէին: Յորոց վերայ հա-
մարձակեալ անօրէնացն՝ սկսան կոտորել զնոսա,
ոչ պատերազմի օրինակաւ, այլ իբրև զոչխարս
արդելեալս ի բակի. զոմանս բռնն հարեալ և
բերեալ առաջի, սուսերաւ զգլուխն հատանէին:
Կրկին մահուամբ բառնային ի կենաց. չոգալով սու-
սերին ի վերայ՝ որ քան զմահ դառնագոյն է, և
մահու վճռաւ. և զոմանս ի գիմի հարեալ սուր ի
ձեռին ունելով, և ի պատահելն գազանաբար ի
վերայ[1] յարձակեալ՝ հարեալ սուսերաւն զերծան,
առժամայն սատակէին. իսկ զմանձրամարմինսն
և զհարստահոգսն յերկիր ի գուճս արարեալ, և
պարզեալ զձեռսն ի ցից վարելոյ՝ ի գետինն
պնդէին, և կորզեալ զմորթն եղնդամբքն հանդերձ
յայսկոյս և յայնկոյս ընդ բազուկ և ընդ թիկունս
մինչև ի ծայրս ձեռինն երկրորդի բռնաբար քար-
շեալ և հանեալ, լար աղեղանցն առնէին: Ո՜հ.
քանի դառն է պատմութիւնս:

1. Երկու օր. հաւասալ:

Իսկ զերկնայինն և զկրօնաւորայն ո՛ր լսելիք տանին զնուրանչան չարիան՝ զոր նոքա կրեցին. զորոց ի կրծելն ի վեր քերթեալ զմորթս՝ տա- րեալ երեսաքն հանդերձ զգլխովքս չէրչէին, և այն- պիսի դառն տանջանօք տանջեալ, յետոյ սպա սպանանէին. որ զի՞ քան զայս զի՞նչ այլ ոք դառն և անհնարին տանջանս իմանայցէ, որ և ի սրտոյ վկայութիւնս չերևի ուրեք եղեալ:

Արդ այսպիսօրէն գործով հաւին սպառեցին զամենեսեան ի կենաց, մինչև խիլ արկեալ, և ըզ- կենդանւոյն թաղեալս աչեաւքն չարաչար խոյս- տելով սատակէին. որ և տանջելոյն վայրկեանք հնչէին առ հասարակ արձագանգք լերանցն: Եւ յորժամ վճարեցին զամենեսեան ի կենաց, սպա պանկե- լոցն զամենեցուն վկուշան ձակեալ և զլեզուն հա- նեալ՝ ի յամենս ժողովէին, զերի կանանցն զհետ իւրեանց եւուն տանել: Այսպէս եղև վարձան կրծանական բանտին. այսպէս մատնեալք ի ձեռս արանց չարաց և անողորմից. և ո՛չ եղև մեզ այդե- լութիւն ի տեառնէ, վասն զի ոչ լուաք նմա մինչ ի խաղաղութեան էաք. նա կոչէր զմեզ աղերսա- կան ձայնիւ ի ձեռն մարգարէիցն. «Եկայք, ա- ռ, լսարո՛ւք ինձ, և կեցցեն ի բարութեան անձինք ձեր, և եթէ ախորժելով լսիցէք ինձ՝ զբարու- թիւնս երկրի կերիցէք»: Մեք ապախս արարաք զբանս նորա. վասն այնորիկ և նա ոչ լուաւ մեզ ի ժամանակի նեղութեան, այլ դարձոյց զերեսս իւր ի մէնջ. և մատնեալ եղաք ի ձեռս թշնա- մեաց մերոց, և առելիք մեր նեղեցին զմեզ, և արբեցաւ նետ նոցա յարեանց մերոց, և սուր նոցա եկեր զմիս անկելոց վիրաւորաց՝ արանցն պատերազմողաց մերոց. և դնացին այսու յաղ- թութեամբ յաշխարհն իւրեանց: Իսկ զմիւս հա- մարոյ անկելոցն և զերեսացն՝ եօթն հազար աս- յին, և կրօնաւորս վաթսուն,

ԳԼՈՒԽ ԺԹ.

Վասն աշերաւնաց երկրին Միջագետաց և որ ինչ ի նմա քաղաքք և անչափ կոտորածին։

Այն ըր յառաջն յիշատակ արարաք՝ թէ յորժամ ինքն ի սահմանս Մանանազոյ բաժանեցան երկուս, առաջինն զայս գործեաց ըր գրեցին[1] ձեռամբ արագամէտ ընթացուք ընդ Հանձէթ և ընդ Խորձանն, ոչ խառնելով յայլ կամ յահեակ, այլ արագս նետս որ ի ձեռաց աղեղնաւորին ելանէ, ուժգին ձգմամբ երթեալ նպատակին հանդիպի. նոյնպէս և նորա, ոչ առուլ զուն աչաց և նինվ[2] արուեստաց, զինքերակը նաց եղեալ, յանկարծակի յեղակարծութեամբ ժամուբրբև զկարկուտ քարակոյտն՝ հեղան ի վերայ բնակչաց քաղաքին Հարաւոյ։ Եւ զանգի անդադար քարն վայրս ունէր քաղաքն, վասն այնորիկ ձուլվային ամենայն նամանեալ բնակչացն՝ ձուլս առեալ յետ յառաջ, բայց ելս երացն ոչ գտանէին։ Ասէ գործոցն որ յայնժամ անդր գործեցան։ Յոյց վերայ առ եղեալ անօրինացն՝ կատարեցին զմայր առ մանկամբ և զորդի առաջի հօր. և առ ժամայն եղև քաղաքն բարեչէն՝ գուբ արեան։ Եւ գանգի և առաւիկ խուճապէն, և յանկարծահաս օրհասէն մուացեալ եղև աչր սերելեաց և գուբ արեան, իւրաքանչիւր զբ հնարէր հայթայթանս գտանել՝ զի թերևս կարիցէ ապրեցուցանել զինքն և զեհետնորդսբրբք բարկութենէն. վասն որոյ փախուցանէին եղեալ և յայգիան՝ որ չուրջ զքաղաքաւն էին, յայնս անկեալ ընդ արեւախիտ որթովքն թաքչէին. զոր ծանուցեալ անօրինաց, խոյզ ար

1. Յայլս թուի ձի արագ։ 2. Երեք օր. ևիրհ։

կեալ, աշէխուք խոյեալ զամենեսեան առաւակեցին. որոց արեամբքն ներկան ողկոյզք խաղողոյն. որք յեառ սինելքորք որք ճնացեալ էին, զմեռեալս իւրեանց պատանէին ընդ որթովքն, զնոսա ծածկէին ընդ հոտով. բայց զայդոսիկ լաղճէին կլթել կամ ի խաղողոյն ճաշակել, ասելով թէ մարդոյ արիւնք են[1]. իսկ անօրինացն պարապեալ ի կատարուածէն, դարձան ի քաղաքն, և խիլ արկեալ տանցն՝ եթէ որ գիւր[2] ընչուկն թագուցեալ էր ուրեք, և կամ ի դարանս, մեծաւ հնարագիտութեամբ արտաքս պեղէին. և ապա հուր հարեալ քաղաքին, կիպեալ ապականեցին, և առեալ զառ և զդերի՝ ելին ի տեղւոջէն. նոյնպէս և որ շուրջ գնովաւ գիւղք և տունք՝ զամենեսեան ապականեալ սրով և հրով և դերութեամբ, մինչև ոչ ձիոյ կենդանւոյ ուրուք՝ որ բանայր զբերանն և ճիկ հանէր։

ԳԼՈՒԽ Ի.

Թագաւորութիւն Կումիանոսի։

Կոմիանոս, քանզի առաւաձեռն էր և գանձիւք հարուստ, բազում զօրս ժողովեաց իւր։ Թագաւորն իւրն իբրև եառ թէ պատերազմութիւնք նմա ի դէպ գան[3] և ելանեն, յաղերս անկեալ՝ ակաւ դեսպան առաքել. պարգևս խոստանայր և զկիւրապաղատին իշխանութիւնն յարևելս՝ տալ նմա, միայն թէ ի խաղաղութիւն դառնաս, որ քրիստոնէից արեանն խնդիր առնեմք. այլ նա ոչ հաւատաց և ոչ առ յանձն։ Ապա ի սպառիլ դեսպանացն, որ թագաւորին էին մտերիմք՝ յանապատէ յերատոմի յաղթութեամբ հնազանդեցուցանել զնա։

1. Երկ. օր. յաւելուն, ի յոռոգել։ 3. Երկ. օր. կամ։
2. Ալ օր. զկիշոցն. միւսն, զկիշոցն։

Եւ հանդէս արարեալ բազում զօրաց՝ եկին ի վերայ նորա, և հասեալք առ Միմեանս՝ ճակատեցան ի պատերազմ. ուր բազում արեանհեղութիւնք եղեն, զորոց ասեն եթէ այնպիսի կոտորած ի մի տեղի ի Հռոմն չէ ոք տեսեալ. յորում տեղւոջ և բազումք ի դվխաւորացն խակ անկան, և այս յերկոցունց կողմանցն. բայց յաղթեաց զօրն Կոմիանոսին: Եւ քանզի պատրիարգն ի կողմն Կոմիանոսին էր, որ զբազումս ի դվխաւորաց քաղաքին միաբանեաց ընդ ինքեանս, և տարեալ ի ներքս զԿոմիանոս, թագաւորեցուցին. և զՄիխայիլն աբեզայ արարեալ, ի կղզի անցուցին. բայց ասեն թէ ինքն յօժարութեամբ չոգաւ: Այս ամենայն յաշխարհաւեր տարւոջն գործեցաւ:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Կործանուհւմն Մելտինոյ շահատտան քաղաքի:

ԳԱԻԱՋԱՆ տանջանաց և ոչ խրատու՝ առ ի ձեռն Աստուած զԹուրքաստան և զտունն Պարսից,[1] և նոքօք գատեաց զմեզ ըստ իրաւի իւրոց գատաստանացն. զի խրատու գաւազանն՝ հայրական է, իսկ տանջանացն՝ գատաւորի, որպէս Գաւիթ գտանջանս մեզաւորաց ասէ. «Բազում տանջանք են մեզաւորաց. և խրատք քո ուսուցէ զիս». ամին համաձայն և Պօղոս Եբրայեցւոցն գրէ. «Զի թէ ի խրատու կարգի կայք, ասէ, իբրև յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած»:

Արդ Քրիստոս ի կենարար իւրում աւետարանութեանն, իւրում երկնաւոր հօրն տարեալ մերձ կացոյց զմեզ նմա յընտանութիւն, և պատուիրեաց ամենայնիւ նմա նմանօղ լինել, և բարոյիցն

1. Մի օր. յաւելու և ակիւթացւոց:

քաղցրութեամբ զպղպականութիւն պահել հատատուն. բայց մեք ապատամբեցաք ի մեր քաղցր և ի բարի հօրէն, և յընտանութենէն օտարացաք. վասն այնորիկ ի ժամանակի նեղութեան և չարչարանաց մերոց՝ անտես արար զմեզ, և մատնեալք եղաք ի ձեռն ազգի օտարի. և զօրացան ի վերայ մեր թշնամիք մեր, և առեալք մեր[1] ապականեցին զմեզ. և խոնարհ եղեն մինչև ի հող անձինք մեր, և յերկիր մաձան որովայնք մեր: Եւ որպէս առ Մովսեսէ ասեն հարուածեալ զնոյն պատպանան առնլեալ զնեգիպտոս ասէր Աստուած, թէ «Այս է զօրութիւն իմ մեծ». այժմ ամենայն մեզ հանդիպեցաւ: Նոցա չուրն յարիւն փոխեցաւ, մեր գետք և չրաշեղջք և գրեթէ բովանդակ հող երկրիս՝ յարիւնն ներկաւ յաբեանց մերոց. ի նոցա մարմինս խաղաւարտ եւ ոչ[2], մերս բովանդակ մարմին սրակոտոր եղեալ, անդամ անդամ յօշեցաւ. ի նոսա չանճանճն և մժեղն, որ զարհրական դէմս երեսացն իմոցդ հարեալ կուրացուցանէր. իսկ ի մեզ սեաւքն յարձակմունքն, որ ևս զառնագոյն վիրաւորեցին. նոցա գերիս աւուրս լոյն ի խաւար խոխեցաւ, իսկ մեզ չինչ իսկ լոյն, զի լուսոյն իսկ ընդունարանն անկեալ մահուամբ, և ոչ ևս յաւելու տեսանել զրարութիւն տեառն ի կեանսիւր. ի նոցա տունս գժուարահայեաց ժխժանկն տղեալ մտանէր, մերս տունք և եկեղեցիք, որ սարսափումն գոյ ինձ առել, ապականագործ ախտիւք այլ և գժուարաւ՝ հոտեալ ապականեցան[3]. ի նոցա անդրանիկն զընդոյ մահաբեր հրեշտակն, մերս բովանդակ տունն բնակչօք սպառեալ սատակեցան: Ծոմն միայն էր պակաս ի մէնջ. բայց թէ կշռես լաւ գործոյն, և զայն ևս տեսանես ի մեզ եղեալ. զանգի՞ր անդունդք անհնարինք[4]

1. Երեք օր. յաւիշտակեցին:
2. Մի օր. խաղաւարտ գորս:
3. Մի օր. այպանեցան:
4. Մի օր. յաւելու առաջ ըզ-պարսկաստան:

քան զԹուրքաստան կամ զեղերս երկրի խորա-
պոյն է, յորս մեր գերիքն հեռացեալ կորեան ի-
բրև ի կարմիր ծովուն, որ արեամբ նոցին գե-
րեացն ներկեալ էր։ ի նոցանէ զարդ ոսկւոյ և
հանդերձից խնդրեցին Իսրայէլացիքն ի վարձ՝
ընդ որոց ծառայեցին նոցա. զմեզ ի բնաւից
կապուտ կողոպուտ արարին, և մեք նոցա չեմք
ինչ մեղուցեալ։ Ո՛հ, ասէ և վայ ի վերայ անմը-
խիթար կործանմանն։ Եղիպատացոցն երկդիմի
էր պատուհասին իրաւունքն. մի՝ վասն դառն
ծառայութեան, որով նոքա զԻսրայէլ նեղեցին,
որոց ի դառ եկեալ Աստուած ասէր. և երկրորդ՝
զի ծառայեցին արարածոց, և ոչ արարչին որ է
օրհնեալ յաւիտեանս. մեք խոստովանիմք լեզու ա-
նիմք, թէպէտ և բարի գործոց թափուր եմք, և
գնոցա կիրս կրեմք, քանիցն ողորմելի եմք և ողոց
արժանի։ Ով աէր և արարիչ և Աստուած, ըն-
դէ՞ր մերժեցեր զմեզ ի սպառ, և արարեր զմեզ
կոխան հեթանոսաց, ծաղր և այպն կառակառաց
թշնամեաց մերոց։ Զարթիր և զարթո՛ զզօրու-
թիւնս քո, և եկ ի կեցուցանել զմեզ. Աստուած
զօրութեանց դարձի՛ր առ մեզ, և հառո՛ զբա-
ցեաց մերոց եօթնապատիկ ի ծոց նոցա։

Արդ այլ քաղաքաց և գաւառաց աւերանաց
ժամանակն ի պակաս ասելս յանդէր, ի տան
կամ ևս աւելի կամ պակաս. իսկ քաղաքս այս՝
զորմէ մեր զճառս արկեալ է, սա մինչդեռ ի շի-
նութեան էր՝ երկնչ երեմեան զոլով յաստիս ուժի
քաջութեան, ըստ Մովսէսու, զերդ և փափուկ
զոլով. որով վաճառականքն փառաւորք երկրի, և
օգնօղք սորա՝ թագաւորք ազգաց, որք ի գահոյս
փղոսկրեայս հանդչէին, և միշտ զպարգեալ զինեն
ըմպէին և [1] անոյշ իւղով օծանէին։ Եւ քանզի ա-
մենայն չարեաց սկիզբն ասի առնու, որպէս և
Մովսէս զԻսրայէլ ամբաստան լինի, «Գիրացաւ,

1. Երեք օր. առաջին։

ասէ, առաւարցաւ և առնքացաւ, եթող զտէր Աստուած զարարչն իւր ». նաև Սողոմայեցիքն այսպիսի կենաց խանձեալք՝ անկան յանհնարին չարիսն, որպէս եզեկիէլ իսկ յայտ առնէ ի հայի լեալթենէ և ի յղծութենէ կենաց՝ զմայրեալս պնաս. նաև առաջին մարդն ի դրախտին բարիսն մին օր անարատ չկարաց վայելել։ Եւ զի այսոքիկ են բնութեանս մերոյ սահման, յաղթառանդն արանձամբ և մեզապիր լինիմք Աստուծոյ, և ի հարառանդն՝ ամբարտաւանիմք, և իբրև զանմահս՝ զայնարհէս բուռն հարկանեմք. վասն այնորիկ փոխ առ փոխ վտիտիմամբ ուսուցանէ զմեզ ի չափու ունել զանձինս, և քան զմեր սահմանն աւելի չամբառնալ, զի մի՛ մեծապոյնս անկանիցիմք։ Քան զհող անարդ և խոնարհ այլ ոչինչ որ իմաց. և մեր ակիզբն ի նմանէ է, և զարձն անդրէն ի նոյն. և որ բնութեանս մերոյ ստեղծիչն է, չկամի թէ որ կորիցէ, վասն այնորիկ չմոռաւ արձակառուն զոք. որքան և աւելի լինի խրատուս՝ քաղցրութեամբ և հայրաբար խրատէ. և յորժամ անբուր խրատուն լինիցիմք, սիրական իշխանութեամբն առնէ. զկէսս ի մեզաւորաց առ դառի, զի անդ թեթևագոյն առնիցէ զառանձնան. և զկէսն հանդերձելոցն պահէ. և են որ առ առանձին և անդ, որպէս Սողոմայեցիքն. և են՝ որ առ միոյն, որպէս Ղազարոսն. և են՝ որ անդ միոյն, որպէս մեծառուն։ Այլ այս առաքեալ զկայ առեալ բանս. մեք ի կարգ պատմութեանս դարձցուք։

Արդ վշտաբեր տարուցն յաշունն հասանելոյ, վինչդեռ Հռոմք զմիապետութեան պսակաւն էին[1] պատանդեալ, ի մահանալ արեգ ամենեան, դարձեալ այլ զօր ել ի Պարսից, թէ[2] յառաջնոցն և թէ նոր՝ ոչ գիտեմ. և ընդ անապատ տեղիս այն-

1. Մի օր. պատանդեալ պա- տանդեալ։

2 Մի օր. յառաջագոյն։

պէս զգուշութեամբ չոգաւ, որ չկարաց ոք իմանալ՝ մինչև եհաս ի դաւառն որ կոչի Կամախ. և ապա անդ բաժանեալ յերկուս, կէսն չոգաւ մինչև ի Կոմոնիա, և ըստ իւրեանց սովորութեանն առեալ զերկիրն յաւարի. զոր մեք ի դարձին գտանէին ապա խնացաք։ Իսկ կէսն՝ ուշ եղեալ Մելիտինոյ, հասին ի վերայ նորա գիշերաւ. և քանզի գունդ մի հեծելազօր ի Հոռոմոց կայր պահապան քաղաքին, ի հասանել հինէն, յանկարծակի գրոհ տուեալ արտաքս ելին. և ի պատահելն իւրեանց՝ բազում կոտորած առնէին յերկոցունց կողմանց. և ի լինել պատերազմին, քաղաքն՝ որքան ելանել կարաց, նա զերծաւ. և [1] մնացեալ արքն որ մնացին, այն գնեա վախճանականին չոգան. իսկ զոր ի քաղաքին ըմբռնեցին, զամենեսեան սրակոտոր արարին, կացեալք ի քաղաքին աւուրս երկոտասան, և ի հինանէ բրեալ ապականեցին զնա և զպատսակերտս նորա չուրջանակի։ Եւ այս եղև ամբարտաւանութեան նոցա հատուցումն յանկաշառ և յարդարադատ[2] տեառնէ, որ հատուցանէ իւրաքանչիւր գործոյն ըստ գործոց իւրոց։

Բայց գաւառք յԵկեղեաց ի վայր, ընդ որ գիշերաւ անցին, յորժամ գիտացին զեղեալ չարիս Մելիտինոյ, ժողովեցան բազում զօրք ազեղնաւորացն և կալան զկիրճս ճանապարհին։ Իսկ անօրինացն՝ քանզի այլ ճանապարհ անտեղեակ էին, և զլերինն թանձրամած ձիւն ծածկեաց, նոքա անճարացեալ հինգ ամիս զձմերոցն ի գլուխ մինչև ի նաւասարդի ամիս՝ ի տեղին գտագարեցին, և զերկիրն ի յուսոյ կենաց բարձին. և զանհնարին չարիսն՝ զոր անգ գործեցին, թողին յիշատակ ազգաց յազգս. զի զտղայսն և զայլ ապաժամեանն նշաւակ եղեալ, աչեխք և նեռիք խաղալով, չարաչար խոցոտելով՝ սատակէին, և ոչ

1. Յամենայն օրինակս Վրի- 2. Երեք օր. դատաստանիւ։
պակաւ մարտի կարգն։

կաթէր ի բնութիւն նոցա զօրէ ողորմութեան, թողուլ ասել զոր ի գրոց ծնողացն առեալ պատանի գՔրիստոս հարկանէին. իսկ գերեզմանք կանգնէին նանցն և որք ի սենեկի անեալ էին աղջկունք, զնոցա խայտառականս գինչ պիտոյ է մեզ և ընդ գրով արկանել. սեամանբ գչափ չարեացն յորժամ Աստուած ի ձեռաց թողու, թէ քանի՞ անհնարին է։

Եւ վասն զի պակասեաց կերակուր մարդոյ և անասնոյ, նոքա ի բանութենէ կարեացն հարկեալ, ելին ընդ Յորդանան ի վեր. և քանզի ի նոցա երկիւղէ ճանապարհ.ք հասեալ էր, և ձիւն թանձրութեամբ զեռ ունէր գերկիրն, նոքա[1] կրկին առնէին գընթացսն. յառաջ գձի և գկոյրն երամակ արարեալ՝ գառաջորդ վարէին, և ճանապարհ բանային, և ապա գգերն և գաղխն յետոյ առնէին. և այնու ընթացիւք եկին մինչև ի գլուխ գետոյն ի գետն որ կոչի[2] Մորբանա։ Եւ նոքա՝ քանզի բերդ ունէր գետն, ժողովեալ էին ամենայն բնակիչք տեղւոյն։ Իսկ Պարսիկն յորժամ եհաս անդ, իջևանս արար, քանզի կարծեաց՝ թէ հեծեալ կայ ի բերդին. կուռ հարեալ[3] ձայն՝ պատրաստութիւն արար պատերազմի։ Եւ երթեալ, որ նոցա գլխաւոր էր՝ բերդին առաջի, սկսաւ բանս ինչ լսել առ ի բերդին իշխանն էր. բազում չարութեանք ծածկեալ էր գձիւնն. յորոց վերայ նստեալ առպար առակ ունելով, և մեծամիտ ամբարտաւանութեամբ գժոխալուր բանս բարբառէր. և որ ի յամրոցին իշխանն էր՝ գիպող ժամու ճնացեալ, ի թիւրիլ առպարին, և նա գիւղէն հարեալ նետիւ՝ առ ժամայն սատակեաց։ Եւ քանզի զօր ի հառնոյ գայր ի յետոյ, որք առժամայն վտակ հնչեցուցին, զոր անօրինացն լսեալ, փախստական եղեն. իսկ որ ի բերդին էին, ելեալ գդերն և զաւար որքան կարացին՝ ի

1. Մի օր. կոխան։
2. Մի օր. Մորմարխեան։
3. Երկար օր. ձեան։

ներքս տարան. բայց Հռոմն չէր եկեալ յառաջ։ Իսկ Պարսիկն յորժամ եառնս եղէն չկր այլ ըօր, դարձ արարեալ ի վերայ՝ և յաւարառացն ո֊ րոյ հանդիպեցաւ՝ զնոսա կառարեաց, և զճա֊ ցեալսն առ և դարձաւ. և երթեալ մերձ ի սահ֊ մանն Եղնտոսին, եկն և նոքա և մարտ եղեալ Թափեցին բազում զերիս, և լցան ատրաւ, զոր առեալ մտին ի բերդն։ Իսկ արիւնարբու զաղա֊ նացն պարտաւորեալ[1] ի չիկս եղեալ, և ի մոտանել նոցա ի սահմանս Տարօնոյ, լչին զօրք ի լեռնէն Սիմն կոչեցեալ, զոր մարդկան սովորութիւն[2] Սա֊ նատնք առեն ըստ անուան նախնոյն իւրեանց. և ի զիմի հարեալ, յաղթեցին և կառարեցին զա֊ մենեսեան. և զառ և զգերի Թափեալ, զարձան սրախաւթեամբ փառաւորեալ զԱստուած։

Ի սոյն ամի այրեցին զգեղեցիկ ապարանս տէրը Կարապետին, զոր Հրահատ սկն ի գործակալացն մեծին Գրիգորի ըզսոյ վաստակայ՝ մեծաւ չանիւ հինեալ էր, վին, Երկրին տէր էին. զժամատունն որ առաջի տէրը Կարապետին, զոր գեղեցկայար֊ մար պատրաստելեամբ յորդորեաց ի վառս և ի պատիւ մեծի վկային և Կարապետին Քրիս֊ տոսի. Նաև զայլ շինուածսն և զիրայատակեալ հա֊ զեցին, զոր տէրը Գրիգոր կոչեն, եւ էր Թուա֊ կանիս մերոյ ամք հինգ հարիւր եօթն յորժամ այս այսպէս եղև։

1. Ած օր. ի շիփս եղեալ. 2. Ած օր. անուանովք, և և մեռս շիփս եղեալ։ մեռն զանուանովք։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Վասն չար աղանդին Թոնդրակեցւոց որ երևեցաւ ի գաւառն Հարքայ և զրազոշոն խռովեաց։

Յակոբոս եպիսկոպոս ոմն որ ունէր զվերակացութիւն եկեղեցեաց տանն Հարքայ, սա ի սկզբան իւրոյ իշխանութեանն առաքինական կերպարանս յանձին յուցանէր. զրաղպած, պահեցօղ, բարկապնաց. և ընտրեաց իւր քահանայս, որ յար ընդ ինքեան չըլլէին, խաշտրապղեաս և անպատճոյճս, հասեալս ի հեշտալի կերակրոյ, և միշտ[1] սղմոսական երգոցն պարապէին։ Եւ այսու կերպարանօք ի զարմանս չարժեաց զհետաւորս և զմերձաւորս, և ամենայն ոք ցանկայր զնա տեսանել. և որք յայժ վիսացեալք էին ամբարտաւանութեամբ վասն իշխանութեան, այնքան եաւն ի հնազանդութիւն նմա զանձինս, որ թէ և զհոգիս հանել հրամայէր՝ չէր ոք որ ընդդիմանայր, և կամ իշխէր բանալ զբերանն և ճիկ հանել։ Բայց կեղծաւորութիւն էր այն, և ոչ ճշմարտութիւն. քանզի պտուղն է ծառոյն ծանուցիչ՝ որպէս ի տեսանէ իսկ լուաք։ Նաև Աստքեալ նմին համաձայն գրեալ, ասէ, թէ «Եւ սատանայ իսկ կերպարանի ի հրեշտակ լուսոյ. զինչ թէ և պաշտօնեայք նորա կերպարանին ի ձև առաքելոյն Քրիստոսի։ Զի զոր օրինակ զմահացու դեղն յընտանի կերակուրն խառնեն, և որք առնուն՝ իբրև զկերակուր ճաշակեն, և ի մահացու դեղոյն ըմբռնին. այսպէս և կարծընկէյք կերովք թաքուցանեն զկարծն, զի և կերոյն խաբեալ՝ ձուկն

1. Ա՛ի օր. սաղմոսասացոչքեան. այլ օր. սաղմոսաստեանս...
և այլ կերպարանօք.

ի կարճի ըմբռնեցի, նմանպէս և անօրէնութեան մչակքն. քանզի իւրեանց կորստեան վիհն չհամարձակին յայտնի ցուցանել ումեք. վասն զի և ոչ իակ հաւանէր այնմ[1] լմէ և կարի ի մուտ անկած էր, խորատուզիլ կամօք ի խորխորատ, յորմէ չիք հնար ելանել. վասն այնորիկ մերով բարեպաշտ կրօնիւք կերպարանին աւ ի պարզամիտն խաբելոյ, և քաղցրական բանիւք պատրեն զմիտս անմեղացն. քանզի բանք նոցա իբրև զքաղցկեղ ճարակին. զի որպէս ախտն այն դժուարին է աւ ի բժշկել, այսպէս և ի նոցանէ ըմբռնեալքն հազիւ կարեն կալ յակատանի:

Վասն նոցա իակ պատուիրէ տէր մեր ի կենարար իւրում աւետարանութեանն. «Զգո՛յշ լերուք ի սուտ մարգարէիցն որ գան աւ ձեզ ի հանդերձս գառնենս, և ի ներքոյ են գայլք յափշտակողք». նաև Առաքեալն զնոյն ուսուցանէ փիլիպպեսոցն, խրատեալ ի տէրունական հրամանացն. «Զգո՛յշ լերուք ի շանս անտի, զգո՛յշ լերուք ի չար մշակաց անտի»: Քանզի յարտաքին թշնամեացն զգուշանալ դիւրին է. բայց ի ցեղակցութենէ պատերազմացն դժուարին է ապրիլ, որպէս Հաբելի և Յովսեփայ դիպեցան իրքն. արդ ոտքս թէ յայլմէկէ ցեղից էին, յորմէ և էին, մեզ զգուշանալ դիւրաւ էր. բայց որպէս զրէ երանելին Յովհաննէս, թէ «Աւ ի մէնջ ելին, այլ ոչ էին ամենեքեան նոքա ի մէնջ». և այժմ դիտուն լինել դժուարին է: Համալեզուք և համացեղք, ի մէյ յականէ բղխեալք զաղբր ջուր և դառն. թէպէտ սուրբն Յակոբ յանհնարինս ասաց զայս, բայց սակայն աւ մեզ եղև այս. ի զաղբր ականէս յայտանի՝ զոր զերծուտ առակնորդն մեր հնդեասանամեայ զրանալիր աշխատութեամբ ի չեալ ի խորս երկրի, և ի խորութենէ փորուածոյ բղխեցոյց մեզ ազբիւր յորդախաղաց ուղխիւք,

1. Մի օր. իբրև:

ըստ եղեկիէլի տեսողութեանն՝ ականակիտ և յասակ, յոր հերձուածողական ժանգաբուղխ առաքն ոչ կարացին մուտ առնել։ Քանզի պատուար ճշմարտութեանն ի վերայ վիմի հաստատ հաստատապէս ամրացեալ էր, մինչև ի ժամանակս վերջինս. զոր և ինքն իսկ Լուսաւորիչն մեր մարգարէական հոգւովջն տեսեալ, զի գառինքն գայլք և. ղեն և արեան ճապաղիս հանէին. և այս եղև ի բազմանալ անօրէնութեան մարդկան ի վերայ երկրի, և ի ննջել բարի տանուտեառն որ ցորենոյն էր սերմանօղ. ապա թշնամւոյն ճարակ դտեալ, ցանեաց որոմն ի մէջ ցորենոյն ըստ աւետարանական առակին։ Խառնեցաւ և դառնութեան մըրուն ընդ կենեզուտ ջրոյն որ ի տանէ տեառն աղբիւրանայր. բայց կանուխ յայտնեցաւ վարդապետաց եկեղեցւոյ, որք զորոմն ջնասակար արմատըն խլեցին ի յանդէ հաստատոյս մերոյ, և զմրուրն դառնութեան քամեալ ի բաց պարզեցին՝ առողջացուցանելով զլուրան աղիւն ճշմարտութեան, ըստ սրբոյն Եղիսէի կանխայարդար յարմարման։ Եւ այսքիկ այսքան. բայց ժամ է ի գլուխ ճառին դարձուցանել զբանս, որպէս զի հաւատարիմ լիցի մեզ ասացեալս։

Արդ անդրանիկ արբանեակն և համաշունչ հօրն ամենայն չարեաց՝ յորժամ յասախս յուժի զոբացաւ կեղծաւորական բարի համբաւն՝ զոր համբաւեցին զնմանէ անմիտ մարդիկ, սկսաւ այնուհետև ի նպատակ հաւատոյն մերոյ նետաձիգ լինել, որոյ սլաքքն մխեալ էին կայծակամբք կապնուոյ. քանզի յոյժ խօսնակ էր այրն, և ճարտարապետութեամբ կախարդէր զբազմաց լսելիս. և կարծէր այնու հնարմբ տապալել զեկեղեցւոյ տուրբ. և ոչ ած ի յիշումն պետրոնական հրամանին և պանվրէպ խոստումնն առ Պետրոս, թէ «Դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իս, և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսՈ. Հաստիվերտցի

ցեն»։ Ո՛չ հաւատայ այսմ, այլ[1] առանձնական բանս իբրև զմարդոյ ուրուք լսաւ. վասն որոյ ի պայքար մտեալ, կարծէր սափրել զվտառս եկեղեցւոյ, որպէս պառնիկ կինն այն ի հնուն՝ զհերան Սամփսոնի, զի մատնեացէ այլազգեացն զանպարտեալն անձն. այսինքն օգտապայ ճշմարտութեանն զեկեղեցի սուրբ, զոր գնեաց պատուական արեամբն իւրով տէր մեր Յիսուս Քրիստոս, և պատկեալ վատազարդեաց ամենայատկի խաչիւն, կանգնելով ի նմա սեղան խորհրդական յօրինակ երեմական կենաց ծառոյն՝ որոյ պտուղն անմահացուցիչ՝ ստուգապէս զմարմին կենարարին ծանեալ, ըստ իւրում անաւտ հրամանին, թէ «Որ ուտէ զմարմին իմ, զմահ մի՛ տեսցէ յաւիտեան»։ Արդ տես դու գնորա մեքենաւոր խորամանկութիւնն, թէ որպէս օձաձև խարդախանօք հնարէր հեղուլ զապականիչ թոյնն յառողջն հաւատով։

Զառաջինն՝ ընտրութիւն ակաւ առնել ի մէջ քահանայից ըստ արժանաւորութեան, և անարժանից ասաց լռել. և իբրև այսու հաճոյ թուեցաւ բազմաց, ապա ի վերայ սրբին և այլ միւս եւս յաւել. քանզի արժանաւորացն հրամայէր ի տարւոջն երիս միայն մատուցանել պատարագս, և զի ի նիկիական կանոնն գրեալ է, թէպետ և յոյժ մեղաւոր լցէ, պարտ է զխոտովանութիւնն ընդունել, և սէրտնական մարմնոյ և արեանն հաղորդեցուցանել, և պատարագ և ամենայն քրիստոնէական կարգաց արժանացուցանել. զայս նա բնաւ և յականջալուրս[2] ոչ ընկալաւ։ Այլ այսպէս ուսուցանէր, թէ որ ինքն իւրով անձամբն՝ որով մեղաւն և նովիմբ չապաշխարեաց, նմա ոչ յիշատակք օգնեն և ոչ պատարագք. և իբր համարտոքն ի հենդն արկեալ ձիծաղէին, և պատնաւնն բերեալ առաջի կացուցանէին, և այսպէս ասէին. Ա՛յ առաւօտեալ չորքոտանի, թո՛ղ թէ նա

1. Մի օր. առանցական։ 2. Երկ. օր. չուենին ոչ։

զիւր ժամանակն մեզս արար և մեռաւ, զոր զի՞նչ մեզաւ որ ընդ նմա մեռանիս։ Եւ առ այս և յերկուս բաժանեցան ժողովուրդք, յոմանց ընկալեալ եղև այս, և յոմանց ոչ. և իբրև ամենայն մարդ ի ծուփս և ի տարակուսանս անկեալ կայր, և խնդրէին զելս իրացն իմանալ. նաև որք ի ժամանակին յանապատս և ի քարանձաւս առանձնական ճգամբք միշտ զՀաճոյն Աստուծոյ կատարէին, մեծաւ հառաչմամբ և արտասուալից պաղատանօք խնդրէին այցելութիւն ի բարերար տեառնէն։ Այլ և երկիցս ժողով եղև բազում հարց և հայրապետաց և քահանայից և խառնիճաղանճ բազմութեանց՝ որոց ոչ գոյր թիւ. բայց զի իշխանք գաւառին իբրև ամենեքեան ի նորա կեղծաւորական կերպարանաց իբրև չղծայիւ կապեալ էին, խոստանային պատերազմի օրինակաւ մեռանել յառաջ՝ քան թէ զնա ի ձեռս ժողովոյն տալ։ Եւ նա ներսեաբար ի տան նստեալ մեծաւ[1] խրախուսանօք ի ձեռն պատգամաց՝ առնէր ժողովոյն պատասխանի, յուսացեալ յիշխանացն օգնականութիւն և ոչ յԱստուած. ոչ ածեալ զմտաւ զդատաստան երկն, թէ «Բարի է յուսալ ի տէր, քան յուսալ յիշխանս». կարծէր վաշուէրն՝ մարդկան օգնականութեամբ յաղթել ճշմարտութեանն։ Այլ Աստուած՝ որ ոչ թողու զդատաստան մեղաւորացն համարձակել ի վիճակս արդարոցն, զի մի՛ ի չարութիւն արդարքն զձեռս իւրեանց ձգեսցեն. որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ, և աղօթից նոցա լսէ. որ առնէ ի մրրիկս հանդարտութիւն, և ածէ յերաշտութեան անձրև, և զայն՝ միով արդարոյ աղօթիւք, նա յայց ել մեզ և արար վրկութիւն ժողովրդեան իւրոյ, որ գիտէ ըստ խորին խնամոյ իւրոյ ի հեռուստ հիմն արկանել մեծամեծ իրաց, և աստ անտեսանց որքան արդեօք էր օգտակարագոյն. և եղև այսպէս։

1. Մի օր. խրոխտաձօք։

Կրօնաւոր ոմն անուն Եսայի ի կարին գաւառէ՝ ի բարեպաշտ տոհմէ, որ վասն բարի համբաւոյն երթեալ յարեալ էր ի նա, յորժամ այսպիսի յայգք և խնդիրք պարիսեան ի վերայ նորա, նա ուշադրութեամբ ուշ եդեալ՝ դէտակն կալաւ ի վերայ. քանզի յոյժ խմաստուն էր այրն, և յոյժ մտերմութիւն ցուցեալ առ նմա՝ մի ի հաւատացեալ նորա ցուցանիւր. և տեսեալ և տեղեկացեալ նորա մծղնեայ կրօնիցն, անյապաղ երթեալ պատմեաց սուրբ հայրապետին Սարգսի: Որոյ լուեալ, և ի վերայ հասեալ գործոյն, կոչէ առ ինքն քաղցրական բանիւք զիշխուատական անձն, և լաւ արժանւոյն հատոյց նմա. քանզի ի քահանայական կարգէն լուծեալ, և աղուեսադրոշմ կերպարանօք խարան յերեսս նորա եդեալ, քարոզն առ նմին աղաղակէր, թէ Որ ի սրբոյ Լուսաւորչին հաւատոյ սողոսկեալ յանօրէն Թոնդրակեցոյ՝ ի մարդադէմ գազանաց վարսն մտեալ միաբանի, դատ և իրաւունս զայս կրեսցէ: Եւ հրամայէ ի բանտ արկեալ զամենաիշխուատ անձն, քանզի կամէր թէ զղջանայ թերևս, և խոստովանի ի բաց կալ ի պիղծ աղանդոյն. զի յոյժ ողորմէր կորուսեալ անձինն:

Այլ քանզի լաւ երեմիայի բանիցն՝ ոչ հուրն զայրեն մոռանալ կարէ, և ոչ հնդիկն զանութիւնն, և ոչ ինձ զխայտութիւնն, այսպէս և ոչ չարն զիւր չարանալն. քանզի ի գիշերի հասեալ զբանտն և փախստական եղեալ, անցանէ յաշխարհն Յունաց՝ և հասանէ ի Թագաւորանիստ քաղաքն Կոստանդնուպոլիս. և չարախօս լինի զհաւատոյս մերոյ, և խնդրէ մկրտիլ ըստ նոցա կարգացն: Իսկ նոքա ըստ իւրեանց խմաստութեանն տեղեկացեալ, և ի վերայ հասեալ գործոյն՝ ոչ առնուն յանձն. այլ ասեն, թէ Զոր Հայոց[1] խոտեալ և անարգեալ վասն հաւատոյ՝ և մեք չընդունիմք: Եւ իբրև չյա-

1. Մի օր. հատեալ. և միւս. ատեալ:

ջողեցաւ նմա այս, ելեալ գայ անցանէ ի գաւառն Ապահունեաց ի բնակարան սատանայի, յաստուածուրաց ժողովն և ի գազանաց գառագիղն, որ կոչի Թոնդրակա. և անդ առժամանակ մի զանխըլաբար որջացեալ. բայց ասեն՝ թէ և նոքա չընկալան զնա վասն առաւել պղծութեանն. վասն որոյ ելեալ ի լեառն Խլաթայ, և անդ յիւրայոցն գտեալ յագարակս և ի բացագոյն տեղիս, առ նոսա դադարէ. և անցուցեալ անդ զաւուրս իւր, երթեալ չարապէս մեռանի ի քաղաքն որ կոչի Մուհարկին։ Ոչ երթեալ ըստ գրոց կանոնի և ոչ համաձայնեալ քրիստոնէից, ի բաց թողլի է. վասն որոյ մեռաւ իբրև զէշ, և թաղեցաւ իբրև զգէշ, չար յիշատակ թողեալ զկնի իւր. զի ամենայն որ լսիցէ զպատմութիւնս զայս, անէծս արձակեսցէ զհետ նորա։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Թէ որպէս և ի Մանանաղոյ սահմանեան բորբոքեցաւ հրդեհ մոլորութիանն, ասելի է։

Կոնծիկ ոմն չնանուն աբեղայ որ բնակէր մօտ ի բերդաքաղաքն որ կոչի Շիրի, որ դեռ ևս այսօր ագարակին զնորայն անուն կոչեն. սա հնադոյն գոլով աւուրբք, ունէր յինքեան զպղծութեան խմորն. քանզի ուսեալ էր ի չնաբարոյ աբեղայէ ումեմնէ՝ որ համբաւէր զինքենէ՝ թէ յԱղուանից է. բայց նա անդրանիկ էր սատանայի, և չտեսանէր խորհրդոց նորա, ուստի ծուխ հնոցի գեհենեան մշտաբորբոք ընդ բերան նորա ելանէր, յորմէ բազումք գեղ առեալ սատակեցան։ Արդ այս կոնծիկս ժիր մշակ գոլով սատանայի՝ որսացաւ զկին ոմն, որումն Հրանոյշ կոչիւր. որ էր ի գլխաւոր և յընտիր ազգէ և տէր ագարակի և սահ-

մանակից նորա. և իբրև լցաւ ի նորա մահա-
չունչ թիւնից՝ ոչ չատացաւ իւրով կորաեամբն
այլ զբազումս սատարս իւրոց խաբից յարդա-
րեաց։ Եւ նաև առաջին զերկու կանայս, որ էին
նորա տոհմակից. որոց անուանքն կոչին այսպիկ,
միւսին Ախնի և միւսումն Կամարայ, որ էր ար-
դարև կամարար սատանայի, և երկոքեան սրբա քորք
հարազատք. սրբա պոռնկական մոլեգին ախտիւն,
որպէս օրէնէ նոցին փարախին, և կախարդական
արուեստիւ՝ վարդապետք եղեն սատանայի, յորս
զօրացաւ հայրն ամենայն չարեաց. որք «Սրեցին
որպէս սուսեր զլեզուս իւրեանց, ըստ սպզմնա-
կան երդոյն, և լարեցին զաղեղունս իւրեանց
յիւրս դառնութեան»՝ նետաձիգ լինել յուղիղն
սրտիւք. որք հարին և կարեվէր սատակմամբ վի-
րաւորեցին զբազում անմեղ ոգիս։ Եւ քանզի ի
հայրենի ժառանգութենէ ունէին գնօղս երկուս,
զնոսա կազդուր և հանգրուանս պատրաստական
արարին վիշապ օձին կամակորի, յորս բունեալ
սատակապէս եհեղ զմաղձն իւր. և նորա մատուա-
կեալ, շուրջ զինքեամբք բնակողացն արբուցին ի
կորուստ. վասն որին այսպիսկ գրեաց Մովսէս,
«Սրամտութիւն վիշապաց է գինի նոցա, սրամը-
տութիւն իժից՝ անհնարին առ ի բժշկութիւն»։

Իշխան ոմն Վրվէս անուն՝ սոցին չամուկ կա-
նանցս եղբայր կամարար եղեալ, սա յառաջ գո-
լով առողջ ի հաւատս, յառաջադէմ էր ի հանդէս
բարեպաշտութեան, մինչ զի կրօնաստան չինեաց
յիւրում ժառանգութեանն՝ ճգնաւոր եղբարս ժո-
ղովեալ ի նմա. և ընդարձակ սահմանօք՝ անկա-
րօտ պահէր զկեանս նոցա որոց առաջնորդն
Մնդրեաս անուն ճանաչի յոյժ անուանի ի կրօ-
նաւորական մրցմունս։ Ա՛ռ սոսա գայր իշխանս
այս յամենայն ամի ի պահս քառասնորդացն, և
հանդիսակից լինէր նոցա մինչև յաւուրս մեծի
պասեքին. և բազում այլ գործս բարեաց ցուցա-
նէր ի սոցա սպասաւորութիւն. նաև յաղքատաս-

նութիւնս և ի քահանայից հնազանդութիւնս՝ քան զբարեսէր յառաջադէմ ցուցանիւր։ Զսա կարծեալ չարին ի ձեռն կանանց այսոցիկ, որք ապականագործ ախտիւ պոռնկեցան ընդ նմա անխարապէս, ոչ ածեալ զմտաւ զարեան մերձաւորութիւնն. քանզի այսոքիկ են կաղապք կրօնեան նոցա. սոյն այս է և չորրորդ դուսար սրոմնեան տզրկին. վասն որոյ պատուիրէ աստուածային առաքեալն, «Մի՛, ասէ, ի ցաւս յանկութեան, որպէս և այլ հեթանոսք, որ ոչ ճանաչեն զԱստուած»։ Տեսանե՞ս զի հեթանոսական է ախտն այն. եւ՛ս որպիսի՛ հանդէս առնէ վասն նորա աստուածային երկանիկն Սողոմոն. «Որդեակ, ասէ, պահեա զբեզ ի խառնակութենէ օտար կանանց, զի զարդարական բանիւք հաւանեցուցանէ ճիալ առ ինքեանս. քանզի մեղր կաթեցուցանեն շրթունք կնոջ պոռնկի, որ ժամանակ մի քաղցրացուցանէ զբիսս հաւանելոցն, և յետոյ դառնագոյն գտանի քան զլեղի. քանզի առեալ, տանի զհոմանիս իւր իբրև զշուն առնեալ, և իբրև զդուարակ ի զենուածն, և իբրև այծեամն խոցեալ նետիւ զբերդակոցին. և ոչ կարէ բուժիլ ի նմանէ մինչև հատուցանէ զնա մահու հանդերձ ի դըժոխս, քանզի թափք դժոխոց է տուն նորա»։

Այսոքիւք թակարդեալ ողբալին այն վրվէս, մերկացաւ զպարկեշտութիւն, անկաւ ի հաւատոց, եղև թշնամի Աստուծոյ և սրբոց նորա. եթող զհէրն՝ որ սուրբ աւազանաւն ծնաւ զնա, մոռացաւ զԱստուած՝ որ մարմնով և արեամբ իւրով կերակրեաց զնա։ Ելեալ ի տանէ, անկեալ ի պատուոյ, մոռացաւ զսխան աստուածեղէն, հեռացաւ ի ճգնաւորական կարգացն հաղորդութենէ. և որ երբեմ կրօնաւորաց ժողովարան էր տեղին՝ զոր մեծամեծ ծախիւք և աշխատութեամբ շինեալ էր, ու՛ր զաւք սաղմոսասացաց և պարք պաշտօնէից քաղցրաձայն երգովք ընդ վերին

զօրան միաձայնութեամբ զԱստուած օրհնէին, այսօր լռեալ են ձայնքն, յաւեր յանմարդի է տեղին։ Եւ յետ այսորիկ զի՞նչ. երթեալ թշուառականն միաբանեցաւ ընդ չարագէս կանայսն, և զգարական՝ որ իւրեանց բնական տեղիք էին, զոր յաստղ սակաւ մի յիշեցաք, որոյ անուանքն կոչին մուսին Կաշէ և մուսուին Ագիւսոյ, զբնակիչս տեղացն զամենեսեան ընդ ինքեանս միաբանեցին. և ապա դիւական կատաղութեամբն մոլեալ, զկեղեցիսն՝ որ յիւրեանց օձաբնակ տեղիսն ի վաղնջուց չինեալ էին, զայն ի խոպան գարձուցին։ Եւ յանդաստանացն՝ ուր և դիպօղ ժամ հանդիպէր նոցա, զփրկութեան մերոյ գնչանն և զտէրունական յաղթութեան զգէնն՝ որով ընկալաւ մահու յաղթութիւնն և բարձան առ ի վէնջ առաջք կամակոր թշնամւոյն, յոր երանելին Պօղոս զարարածովքս զանց արարեալ ի նորին զօրութիւնն պարծէր, «Մի լիցի ինձ, ասէ՝ պարծիլ, բայց միայն ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», նոքա վրէժխնդիր լեալ հօրն իւրեանց սատանայի, խորտակէին անամօթաբար։ Բայց որովհետև ըզխաչն յիշեցի, ածից ի պատմութիւնս և այլ պատճառս չելեաց զրոյցս, որ ամենեցուն սարսափուծի բերէ լսողաց։

Ի հատուածս լերինն Պարան որ այժմ կոչի Գայլախազուտ, առաջին հարցն ասեն ինչ էր զոր[1] Բազմաղբիւր կոչեն. ուր զԱստուածային նշանն բազմապատիկ վայելչութեամբ կանգնեալ էին, որ և զանուն գեղջն ի նոյն փոխեալ՝ խաչատուանեն մինչև յայսօր։ Յաւուր մեծի պենտեկոստէին ի գիշերին եկեալ՝ որ նոր կիւրակէն կոչի, համարար մշակքն սատանայի, մրճով հարեալ զիմագ Աստուածընկալ նշանին՝ մանրեալ յերկիր ընկեցին, և ինքեանք զանխլաբար յօճաբնակ որջս իւրեանց երթեալ մտանէին. ընդ որ հիացան երկինք ի

1. Ցօր. մխաւմ. Բազում աղբիւրք։

վերատա, և երկիր առհասարակ զարհուրեալ զգո-
ղի հարկանէր. զայն արարուած ողբաց արու-
սեակն, և սպաց երեկօրեայն լուրճնի։ Արդ լսա
սովրական կարգայ ի հաւախօսի ժամուն յարու-
ցեալ երիցուն՝ եկն առաջի խաչին, զմեծի կիւ-
րակէին պաշտօնն կատարել. և տեսեալ զպրանչե-
լի տեսութիւնն՝ ձեռն զօձեօք արկեալ պատառէր
զհանդերձն, և բարձրաձայն կանչիւք զբնակիչս
տեղւոյն ընդոստ առժամայն ի նորա տեսիլն հա-
րաբէր. որոց տեսեալ[1] զմեծամեծաց զարմանան,
զկական բարձեալ բախէին զկուրծս և զառնա-
յին. և էր ամենեցուն յանժամ արանց և կանանց,
ծերոց և տղայոց մինաձայն մի ողբ հառաչանաց։
Եւ մինչեւ նոքա յայս տագնապի կային, յան-
կարծակի ձագեաց ի նոսա գիտութիւն՝ ըստ
Աստուծոյ անճառ խնամոտութեանն. ի գիշերին՝
յորում այն գործեցաւ, յանկարծակի ձիւն անկեալ,
զերեսս երկրի[2] ապիտակացուցանէր, որ զհետ
անօրինացն կալեալ՝ տարեալ ի նոցա կաղապան կա-
ցուցանէին։ Եւ առժամայն ազդ արարեալ երջա-
նիկ հայրապետին Սամուելի. որոյ լուեալ բազում
ժողովով անդր հասանէր. և զգաւառի եպիսկո-
պոսն և զերիցուսն և զհարան առ ինքն հաւա-
քեալ, երթեալ նոքօք՝ զանօրինացն[3] զկաղապան
կիզեալ ապականեաց, նզովելով զինչս և զտուա-
ցուածս նոցա, որպէս Յեսու յառաջինան զերի-
քովքն, զի մի ոք իշխեսցէ առնուլ ինչ. և վեց
ի նոցանէն՝ զորս վարդապետս առէին լինել չար
և պիղծ կրօնիցն, զնոսին ձերբակալ արարեալ,
գայ[4] ժողովով ի քաղաքապետն որ կոչի Ջերմայ.
և[5] ազուէս խարանօք զդէմս նոցա դրոշմել հրա-
մայէ, զի եղիցի այն նոցա նշան յաւիտենից՝
յայտնի և ճանաչելի ամենեցուն. զի մի՛ ոք ապի-

1. Մի օր. ի վեծամեծաց զարհուրացան. յայլսն մ. ի վեծա-
մեծաց զարհուրուցան։
2. Մի օր. սպիտակացոյց։
3. Երկ. օր. կաղապանսն։
4. Երեք օր. ժողովն։
5. Երկու օր. աղուեսախա-
րանօք։

տաբար հալորդեացի ընդ նոսա, այլ երբև ըզչար գազան հալածական լիցին յամենայն մարդկանէ։ Յետ այնորիկ օրհնեալ զժողովուրդն՝ որ աշխատակից նմա եղեն, արձակէ ի խաղաղութիւն։

Իսկ ի գալ ամարայնոյն առաքի ի թագաւորէն պատուոր երանց աշխարհին, որում անուն էր Եղիա. որոյ հասեալ ի գաւառն Եկեղեացոց, ընդառաջ երթայ նմա ամենայն վրվէս. և ամբաստան լինի զմեծարդի հայրապետէն Յովսեփէ, և զայլ եպիսկոպոսացն որ ընդ նմա էին, եթէ զիմ տունն յատարի տարան, և զգեօղն աւերեալ հըրդեհ արարին։ Եւ բազում գանձուց և ընչից պարտս ի վերայ նոցա կացուցանէր։ Զոր երբև լուաւ գաւառն՝ առաւել ևս ի բարկութիւն երդեալ, առաքէ զինուորս բերել առեալ եպիսկոպոսունս առաջի իւր. իսկ ի գալ զինուորացն, դրէ գրուխ եպիսկոպոսացն հրովարտակս առ վիճակաւորս եկեղեցւոյ, առ երիցունս և առ անտարաւորս, զի առանց երկար ինչ զմբաւս ածելոյ առ նա ժողովեսցին։ Եւ ի հասանել համբաւոյն, որպէս լժէ յԱատուծոյ տեսչութենէն ազդ լինի առ ամենեսեան. առանց յապաղանաց բազմութիւն մարդկան ի մի վայր ժողովեցան, ոչ միայն քահանայիցն, այլ առաւել աշխարհականաց՝ զոր ոչ ունիմ զհամարոյ նոցա ցչափ ընդ գրով արկանել. և երթեալ ժողովոյն բազմութեամբ մինչև յեզր գեաղն Եփրատայ, ուր Մանանազն ի նմա խառնի։ Եւ լինի յայնմ ժամու եկ անձրևի. և ի յորդութենէ անձրևին զարթեաւ Եփրատէս գայր լի գարիւ և գարիւ. իսկ զինուորքն բերեալ նաւ՝ վտիտացուցանէին անցուցանել զձերունի եպիսկոպոսն զՄամուէլ և զնորին եղբօրորդին զԹէոդորոս յայնկոյս յատանն որ կոչի Կոմէր, քանզի և գաւառն անդ էր. բայց ժողովուրդն բուռն հարեալ զեպիսկոպոսացն, ոչ եւտն ի ձեռս զինուորացն. իսկ նոքա ասեն. Նախ գոսա անցուցանեմք, և ապա զժողովուրդ. և այսու բանիւ

հատանեցուցեալ զնոսա, առեալ զեպիսկոպատունեան հանդերձ նաւովն անցուցին յայնկոյս. եւ դարբեցուցեալ զնաւն, եդ ի բանակ զեպիսկոպատունեան. զոր լսեցեալ ժողովոյն զկորամանկութիւն նոցա, զի ոչ դարձուցին զնաւն ի նոսա՝ որպէս խոստացան, բարձր ձայնիւք և յորդորական բարբառով զմիմեանս քաջալերէին, մեռանել անցանել ի կուրսն, քան թէ յառաջնորդէն հաւատոյ[1] լուսանաց բան լսել. եւ զանզի երեկոյացեալ էր ժամն, և արեգակն զյինցուզս ճառագայթից ինքն ծրարեալ ի մայրն դառնայր՝ համարձակութիւն առեալ երկնաճառ արփւոյն, յայնժամ դասք քահանայիցն յառաջ մատուցեալ, ո՛չ խորհրդով խաչին զկուրսն բաժանէին, այլ զնոյն ինքն զտէրունական զյարութեան նշանն ունելով ի ձեռս՝ և բարձեալ ի վերայ ուսոց, քաջապինդ հաւատովք հարկանէին զբարձրակոհակ կոյտ կուրցն, յորմէ որպէս խաւերախ ձի ի սանձից ճմլեալ սեղմ տայր անցն ժողովրդեանն. ոչ ոք ճնասեալ յայնքան բազմութենէն և ոչ վիրաւորեալ անցին, զպահպանական զերգն ընդոյայզն ամենայն Աստուծոյ նուագէին, առաջնորդ պարու իրեանց ունելով զանարատն Մարիա, որ է եկեղեցի սուրբ, ունելով զիմբուկն ի ձեռին, այնինքն զհաւատոյ ճշմարտութիւն, ոչ անձայն և անարուեստ ի հերձուածողական ի զէճ ախտից եղեալ, այլ ջերմեռանդութեամբ ըստ Հոգւոյն սրբոյ ցանկալ գոլով և ի հնչողական երգն պատրաստական, որք բախեալ դաւթական կնճռատոյն՝ հնչեցուցանէին յամենեցունց լսելիս. «Օրհնեցեալ գոլ, որ ածանչելիս արար», և որ զհետ սորա անկցին բանք. և այսու բարձրաձայնութեամբ հանէին զիւրեարս ամենայն ի գլուխ յաղթութիւն Աստուծոյ:

Իսկ դասուարքն յորժամ լուան զաստուածային

1. Երկ. օր. *ևախտառանեաց*:

անտեսութիւնն և զհրաշս սքանչելեացն, ծանեալ՝ թէ այցելութիւն առնէ մերոյ ազգիս տէր. ի սուրիկ հիացմանէ ի զոլման եղեալ՝ յաղօթս ապաւինի և զԱստուած յօգնականութիւն կարդայ, զի Մի տգիտաբար, ասէ, խոտորեցայց յիրաւանց քոց տէր: Եւ ի լուանալ աւուրն, քանզի միաշաբաթի էր, երթեալ յեպիսկոպոսարանն որ Փրբիան կոչի, և զիրացի դատաստանն եղեալ՝ ի դատ և յիրաւունս կացուցանէ զդլխաւորս ժողովոյն, և հրամայեն անարժանին և պարտաւորելոյն վըրվեռայ գալ ի հանդէս իրաւանց: Եւ քանզի է կենդանի ինչ, զոր սեպհեան կոչեն, զորմէ ասեն թէ զամենայն գոյն փոխէ, զի յորարդացն ապրեսցի. նոյնպէս և նա ի զօրանալ ճշմարտութեանն՝ եթե եթէ ոչ կարէ զդէմ ունել, քանզի ի ձաղել լուսոյն՝ սպառի խաւարն, և ի յայտնել ճշմարտութեանն՝ կորնչի ստութիւնն. և ապա զինչ առնէ, և որպիսի՛ հնարս իմանայ. Հառամ խաւտանայ լինել, և լինի յորդեգիրս եպիսկոպոսին՝ որոյ անուն Եպիսատատ յորջորջիւր՝ կաշառով դողացեալ զմիտս նորա: Որոյ եկեալ առաջի աւեանին՝ աղերսիւ լանդրէ զնա իւր ի չնորհս, և դատաւորն զնոյն կամի. քանզի եղբայր անօրինին իշխանական պատուով և քաջասիրտ արութեամբ յընտրելոց և ի ձանօթից թագաւորին էր, յորմէ յոյժ ակնածէր դատաւորն. ուստի և տայ զնա յեպիսկոպոսն յատանդ, որպէս և խնդրեաց: Իսկ զայլան զորս և զամն ի նորին ընկերացն՝ մեծամեծ հարուածովք և զանխ տանջեալ, հալածական արարին աւերելով զտունս նոցա. և ժողովն օրհնեաց զդատաւորն, և արձակեցան խաղաղութեամբ:

Բայց դատաստանքն Աստուծոյ կանխեալ ի վերայ նորա, որ թէպէտ ի պատուհասէ զերծաւ, այլ ի ձեռաց ամենապիսին ոչ կարաց ապրիլ. քանզի յանկարծակի վառեցաւ մորմին նորա տապով՝ որպէս զհերովդէին, և մատունք ձեռաց նո. րա չորացեալ՝ ոչ կարէին առ կերակուր նպաս.

առաւրել մարմնոյն. այլև կերակուր զոր ճաշակէր առաւսպանօք, մուտ կերակրոյն վակեալ էր, զներքոյթուլթեան աղբոյն վերադարձուլթեամբ վճարէր մինչև յօր մահուն իւրոյ. յետոյ և մարմինն իւր դողուլթեամբ ապականեցաւ. բայց նա ոչ եկն ի դժնաւն, և ոչ յիշեաց զիւր զառաչին բարեպաշտուլթենն. այլ նովին դիւական ագանդովն վարեցաւ՝ մինչև բարձաւ ի կենաց. և տանջանք մարմնոյն միշտ յուշ առնէին զյիշատակ զեհենին յոր տանջելոց էր:

Բայց վնոցա մնդնէ զգործն անպատշաճ համարեցաք ընդ գրով արկանել, քանզի կարի աղաւեղի է. և զի ոչ ամենայն ոք պնդակազմ է[1] լսելեաք բազմոց մեղացն յիշատակ՝ ի խաղտանս ձգէ զլսոցն, և ի կատարուածն գործոյն խակ ածէ. վասն այսորիկ և ես խոյս եառ յայնմանէ: Այլ որ յայտնի է ի նոսա, և մեզ ասելի է՝ այսոքիկ են: Զեկեղեցի և զեկեղեցւոյ կարգաւորուլթիւն բնաւ ոչ ընդունէին. ոչ զմկրտուլթիւնն, և ոչ զմեռ և զաւրսափեալն խորհուրդ պատարագին. և ոչ զխաչ և ոչ զկարգաւորուլթիւն պահոց: Այլ մեք ճշմարիտ հաւատացեալքս սրբոյ Երրորդուլթեանն՝ պինդ կալցուք զխոստովանուլթիւն անշարժ յուսոյն, զոր ուսաք ի տուրբ հարցն. և ի նոցա աստուածաբուղխ ժողովոյն ի բաց դարձուցուք զերեսս, անէծս ի վերայ նոցա առաքելով:

ԳԼՈՒԽ ԻԴ.

Վասն[2] *տիեզերահռչակ քաղաքին Անւոյ խողխողմանն արով:*

Եւ արդ ընդ բազում հնեթեթանօք և ընդ ցնորիւք անկան ազգ մարդկան, յաղագս ցոփուԹեան և անխոնարհելի մտաց՝ ապաստան եղեն ի

1. Երկ. որ. չսեղովք.

2. Մխ որ. տիեզերականն:

գործս իւրեանց. հակայս կորովիս և բարձրահասակս, անդիմահարս և անմատնելիս՝ առաւծորդիս իւրեանց անուանեցին. և ամենք աշխարհակալութեամբ՝ անմատոյց ունելով զբարձրութիւն, ոչ կամեցան ճաշակել ի բաժակէ[1] բարութեան տեառն, որպէս այն առակին չինաւանդն անմատութեան՝ բազմաշխատն և զիւրակործանն, այսպէս և բնակիչքն երկրիս, յորպէս ամբարհաստութեան աշխարհակացն՝ ոչ համարեցան զինքեանն ընդ այլ ցեղս բանանացիան, թէ սիրէ նոցա ալ տեառն կամ սուր ամենակալին մերձեցի առ նոսա. Զի սէր է որ չինէ և քակէ, տայ զամուրս ի գործուն և զբարձր աշխարհակս ի կործանումն. զի և աշխարհն որ էր ի անարան Հիրանանու, զոր չինեաց Դաւիթ, և ամրացոյց սուսերաւ և վահանաւ հակառակ Դամասկոսի, ոչ եղև խափան և դիմահար Եղերայ, որ յարեաւ սատան Սողոմոնի. զի արբուքիւնն է ամրութիւն, և պարիսպ ընաիր գործք առուաձպաշտութեան:

Եւ արդ զարձեալ անդրէն ի կարգն ըստ յառաջագրելոցդ. մի՛ սակաւ կամ փոքր համարիլ մեզ՝ որք ոչ զղջանան կամ ապաշխարեն, կամ ձգեն զմերձակայ և զսահմանակցացն զպատահանն՝ որ ըստ յանցանացն հանդիպի. այլ նաճեալ յատակս մայրուին, և զժնկին յատակ ձիթենուին. զի ոչ եթէ ամենեքեան արժանի են մահու, ըստ տեառն հրամանին, յորոց աշխարհն և վերայ անկաւ, այլ մերձակայիցն և յայլոց մերձաց ըմբռնումն, և հեռաւորացն խրատն և զգուշութիւն: Զի ոչ եթէ վաղ լիս գործեցաւ, կամ բազում ժամանակ ընդ մէջ անցեալ ապաւորեալ պանցս աղէտիցն որ ընդ Աւրան եղև. վասն զի ոչ սակաւք էին որ աչք տեսին, և ոչ խելացք կասկածացան. զի բազում աշխարհ և քաղաք այն էին որ ապրեցան յայնմ հինէ. այլ առաքեա-

1. Ալ օր. բաղկոպտեան

ցան ի վիտս իւրեանց, և ամրութեամբն ապատամբեցան ոչ ի մարդկանէ՝ այլ Աստուծոյ, որ տայ զբարձր աշտարակս ի կոխումն և զքաղաքս ամուրս ի հոպարելութիւն. ոչ խմացան և ոչ առին ի միտ զահ սեառն և զպատնեշիս որ ի նմանէ. և զմրուր բարկութեան և զբրտմաութեան՝ որ ի նմանէ խոնարհի յարբուն մեղաւորաց, սպառեալ համարեցան. մանաւանդ ամուրն Անի և որ շուրջ զնովաւ գտեալք իւր՝ առաւել յամբարտաւանութիւնկրթեալ՝ ընդդէմ երկնից կայթս հարկանէին. մինչև չարժեաց Աստուած զթագաւորն Պարսից[1] վոխանակ ինքեան՝ սեառնել զէ՞նչ գործի ի նմա։ Եղև գործ պատերազմի յերկիրս Հայոց ընդարձակեցուցանել զբնակութիւնս իւրեանց, և տիրել ի վերայ սահմանի այլոց թագաւորութեան. և էր թուականիս մերոյ ամք հինգհարիւր երեքտասան։

Արդ եկեալ հասանէր թագաւորն բազում բիւրուք և անթիւ սպառազինօք. մտեալ յաշխարհս մեր՝ ահ և երկիւղ հասուցանէր հեռաւորաց և մերձաւորաց. կոխէր, տապալէր զաշխարհս բազում, մինչև եհաս ի քաղաք՝ որ զմեզ իւր ի կատարումն լրիւ իւրով ունէր։ Կանգնեաց զխորանն իւր ընդդէմ քաղաքին Անւոյ, և տարաձեաց զբանակս ընդ լայնութիւն երկրին. ջանայր, հնարէր՝ զի զգուռն երկաթի և զնիգս պղնձի ի բաց խլեսցէ, որ կայր ընդդէմ թագաւորութեանն իւրոյ. և անյոյս լեալ յաղագս ամրութեանն՝ թէպէտ և զմարտն աստակացուցանէր՝ կամէր չուել։ Եւ զայն ոչ դիտացեալ թէ էարկ տէր ի մէջ պատհապանաց և իշխանացն երկպառակութիւն և անմիաբանութիւն, ամբոխումն և բաժանումն. և անդէն թողեալ զգործ պատերազմին՝ ի փախուստ դարձան, և խուճապեալք յերկիւղէն՝ ոչ ոք յազգային կամ ի կարևոր բարեկամանն հայեցաւ,

1. Երկ. օր. պատոյ։

այլ իրաքանչիւր որ ահիւ ըմբռնեալ՝ եւ տեսեալ պայս սպառազէն զօրացն՝ որ արտաքոյ մարտնչէին, հանդէպ ինքեանց ի վերոյ պարսպին ճանապարհ առնէին, և իբրև գկռտակումն ալեաց ծովու ի ծոց քաղաքին հեղուին, և զպարսկական աւերն ի գործ արկեալ, ոչ ումեք լռնայէին՝ իակ բազմութիւն արանց և կանանց յապարանս թագաւորացն գիմեալ՝ իբր թէ կարեցեն ապրիլ, և այլքն ճողոպրեալ յամուրն որ[1] Նիրքի բերդ կոչի՝ իակ որ ի մէջ քաղաքին ամրացեալ էին, իբրև գի-տացին թշնամիքն թէ անպատրաստք են, և ոչ գոյ ի նոսա այր պատերազմող կամ կերակուր և ըմպելի, վաղվաղակի շուրջ պատեալ և շուրջ տապ-նապի հասուցանէին, մինչև յակամայ արտաքո հանին։

Մնաց էր տեսանել զվիշտս և զտագնապս իբրա-քանչիւր հասակի. զի ի գրկաց մերց յափշտա-կեալ լինէին մանկունք՝ անողորմաբար գբարի հա-րեալ, և մարքն արեամբ և արտասուօք զմանկունս իբրեանց թանային. գկայր և գորդի մի սուր խողխողէր. զի ձերք և երիտասարդք, քահանայք և սարկաւագունք զմի արոյ ճաշակ մահու ընկա-լան. զի լցաւ քաղաքն լի ձայրիւ և ձայրիւ, և ճանապարհ էր մարմին սպանելոցն. զի ի բազ-մութենէ կոտորելոցն և յանթուելի գիականցն՝ վտակն մեծ, որ անցանէ առ քաղաքաւն, ներ-կանէր արեամբ. և գազանք վայրի և ընտանի՝ եղեն գերեզման գիականցն. վասն զի ոչ գոյր որ թաղէր և հարկաւոր հողովն ձածկէր գխողխո-ղեալսն։ Այլ և ի[2] ճարպոյ անհրաւութեան ի նմա գորձելոցն տուչութեաւ բարձրացէն և գեղեցկա-յարմար ապարանքն, և եղև ամենայն բնակու-թիւնն իբրև հոտալուր. և վաշխն և նեղութիւնն որ ի նմա՝ խափանեցաւ։

Այս է բաժին անհրաւ քաղաքաց, որ չինեն

1. Մի օր. Նիրք։ 2. Երկ օր. ի ձանձապարհաց։

վինքեանս արեամբ օտարոց, և ի քրտանց անանկաց վարձամանան, և ի վաշխէ և յանէրատութենանց զառնս իւրեանց ամրացուցանեն. և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առաջադրեաց և տնանկս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ի գործոց աղուեղութեան ոչ խորշին, այլ միայն արբեալ լինին ի ցանկութենանցն որ զնոսա ըմբռնեալ ունի. եւ արդ զինչ լինի նոցա ի հասանել բարկութեան տեառն. սպասէն և պակասին որպէս մոմ յերեսաց հրոյ, և թէ թագաւոր էցէ և եթէ իշխան, որպէս ծանեալք ի[1] գրելոցս. Բայց թագաւորն Պարսից բազում գաւառաց տիրեալ, և անթիւ աւարաւ գարձաւ յաշխարհն իւր[2].

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս թագաւորին Յոռնաց, որ ի թագաւորէն Պարսից ձերբակալ եղև։

Եւ արդ ոչ է պարտ անհաս և անձեռնարկելի երից պատմօղ լինել, կամ ընդ գրով արկանել, զորոց ոչ այլոց աշխատութիւն տեսեալ է մեզ, և ոչ յումեքէ պահանջեցաւ ի մէնջ, և ոչ մեք կարօղ եմք ձեռն արկանել. վասն այնորիկ բազում ինչ հարկաւոր պատմութենանց որ ընդ սոքօք են՝ անտես արարաք, այլոց թողուլ ճարտարաց և հասուտ մտաց, զի թերևս պահանջեսցէ ոք ի նոցանէ. և այսու նախանձ արկից կարօղացն. բայց տուգանք ոչ սակաւ համարեցաք՝ զանց առնել

1. Երկ օր. ի գրել զայս։
2. Յերեք օր. ասատանօր միաշար զնի յաւելուածս ի յետնոց. Երկրորդ Դարձի թուականի ՇՀԳ. երրորդ Գեորգի թուականի ՈԺ. ի ՈՉԷ Թագաւորի հառ զԱնի և զաւելեալն տիեզերս։

զերկուց թագաւորացն զհանդէս պատերազմի,
այլ փոքր բանիւ զմեծամեծ իրս վճարեացուք։

Բայց թագաւորն Դխուժէն որ էր վաթանեցոլ
ի մեծէն կոստանդիանոսէ՝ ըստ համարոյ թա-
գաւորացն, փոքր ինչ աւելի կամ նուազ, իբրև
եաես զի թագաւորն Պարսից ոչ սակաւ աշխարհ
հատուած արար ի յիւրմէ թագաւորութենէն,
և զկողմնակալան Յունաց վախճանակն արար, և
ինքն մեծաւ ատրաւ և զերութեամբ դարձաւ
յաշխարհ իւր. ապա և թագաւորն Յունաց զկնի
տան ամաց գործ պատերազմի յանձն առնու
ըստ նախանձու և արիական բնութեանն. զի մի
անարի և վատ երևեսցի, և զկնի ինքեան վատ
յիշատակ թողցէ. խրոխտալով և մեծաւ յուսով
իբրև ի վերայ ցամաքի ընդ ծով անցանէր, և
զեռելով յաշխարհն Ասորեստանի, անհուն
բազմութիւն յինքն կուտէր։ Զի զեռ ունէր զլայն
և զընդարձակ թագաւորութեան զսահմանն, ի
հովտացն փիւնիկեացւոց՝ ուր է մեծն Անտիոք,
մինչև յամուրն վան, և զամենայն երկիրն Ասո-
նեաց յանդիման Հերայ։ Իբրև եաես զայնքան
բազմութիւն զօրացն ի մի վայր ժողովեալ, ամ-
բարտաւանեալ հպարտացաւ ի միտս իւր չյաղ-
թել յերկրացն թագաւորաց. և ոչ զբան մար-
գարէին ածէր զմտաւ, թէ ոչ բազմութիւն զօրացն
կարէցեն ապրեցուցանել զթագաւորն, և ո՛չ զին-
կայ՝ զօրութիւն իւր. այլ ակ և բազուկ ամենա-
կալին։

Աւրդ խորհուրդ լին անվայելուչ ի միտ ար-
կանէր, և բազում զօրս ի ձեռն սպարապետացն
ընդ այլ ճանապարհ արձակէր. և ինքն բազում
ամբոխիւ յարևելս ճանապարհ կալեալ գայր, հա-
սանէր ի մեծ քաղաքն Թէոդուպոլիս. և անդ
գայրուձի կազմէր։ Զարհուրեալ են մեղք, և զօր-
զեղբութիւն և զխմաստութիւն մերկացուցանէ ի
գործելեացդ. բայց առաւել ևս ամբարտաւանու-
թիւնն, որով վարին իշխանք և թագաւորք, և ո՛չ

հատանին յերշատակաւ առաջին ամբարտաւանից եղծելոցն. զի նոյն ախտս այս չարութեան՝ ապականիչ է ամենեցուն որ կրեն զա. զի ոչ եթէ այլ ոք զինամակաց է ամբարտաւանին, այլ Աստուած է հակառակ՝ ըստ առակողին: Վասն որոյ ոչ եաթ թոյլ զօրացն հանդիսաւ առնուլ մինչև պայծեն ժողովեսցին և նա այլ բազմութիւնքն, և զերեսաւ յորդորեսցին և քաջութիւն և յարութիւն և լինելն մեծ բանակ՝ թշնամեացն տակալի. այլ իւրովքն կամեցաւ զզօրս պատերազմին յաջողել. վաղվաղակի ուր թագաւորն Պարսից բանակեալ էր, անդր հասանէր առ սահմանօքն Մանազկերտ գաւառի. և անդ զիւր արքայական խորանն հարկանէր յանդիման Պարսից գնդին, և շուրջ զիւրեաւ ամրացուսցանէր, և օր պատերազմի սահմանէր:

Բայց թագաւորն Պարսից խորամանկութեամբ առ երկիւղի պատերազմելն լնդրէր. զի մի՛ յրուեալ զօրացն եկեալ՝ զթագաւորն ամրացուսցեն, և անմարտելի նմա ճակատն լինիցի: Լաւ համարէր երկու մասին քան թէ երիցն դէմ կալ. շատ տագնապի յարուցանէր, մինչև անդէն ակամայ յունական ճակատն կազմէր ընդդէմ կազմ ճակատաւն Պարսից: Եւ իբրև խրոխտալով առ իրեարս յարձակէին, և պատերազմական հանդիսիւ ընդ միմեանս բախէին, և դեռևս ոչ եւրևէր և ոչ միոյ գնդի պարտութիւն. անդէն վաղվաղակի մեծ գոռնդ մի՝ առ որս չէք ի նոսա առաւծապաշտութիւն, ապստամբեալ ի թագաւորէն Յունաց՝ ի կողմ թշնամեացն յաւելուին: Վասն որոյ բազում բեկումն զօրացն եղև. և յայնմ հետէ յապաղանօք և ոչ քաջութեամբ ի գան մաուէին, և զՊարսիկան զրգռեալ՝ ժիր և անմարտելիս կազմէին: Բայց թագաւորն Յունաց անպատճառ և անտեղեակ՝ ի ցասմամբ կայր ընդ զօրս Հայոց և ընդ ազգն, և ընդ ակամբ հայէր ի նոսա. բայց երբեմն ոտս միամտութեամբ զա-

տերտղին և զբաղ արանցն զնահատակութիւնն, որ ոչ զանգիտէին ի կորովի աղեղնաւորացն պարսից, այլ արութեամբ ընդդէմ կային հանդիման, և ոչ զմիկնան դարձուցանէին. մէտքեաւ բազումք ի սիրոյ թագաւորին բաժանեցան, սակայն միամտութեամբ նոքա զմահ յանձն առին. զի և զկնի մահու՝ միամտութեամբ քաջութեան վայելուչ յիշատակ թողցի. ապա սէրս անդէպս ցուցանէր, և պարզևս անձեռնարկելիս խոստանայր։

Մնդ ի վեր հայեցեալ թագաւորն՝ յորում բազմեան էր, և նկատեալ հայէր առ ախոյանն. և տեսեալ յիւրոց զօրացն խուճապեալ և ի փախուստ դարձեալ, անդ և անդր վազվզակն զբազպատակն և զինուորն ձև զգեցեալ, և իբրև զփայլակն հասանէր ի ճակատ մարտին. և ի քաջ արանցն պարսից բազումս զխաթեալ կացուցանէր, և չտապ տագնապն զօրացն առնէր։ Այլ պան ոչ իմանայր թէ զօրավար զօրացն տեառն ոչ էր ընդ նմա, որ Յեսուայ երևեցաւ և տայր պայազիտութիւնն. և ոչ ել սէր ընդ զօրս մեր զինու և վահանաւ, և ոչ եհան սուր ընդդէմ թշնամեացն և արգել. և ոչ սէր զօրութեանց ընդ մէջ իւր ածաւ, և ոչ եղջիւր փրկութեան և յուսոյ եղև մեզ սէր։ Այլ յինքն ամիսոփեալ զզօրութիւն իւր ի մէնջ, և մատնեաց զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց և ի նախատինս զբացեաց մերոց. և իբրև զոչխար ի զենումն եաս. աղեղունք մեր փշրեցան, և զէնք մեր խորտակեցան. զօրականք մեր սկարացան և լքան. զի երբարձ սէր զզօրութիւն իւր և զսիրտ քաջութեան ի զօրականաց և յիշխանաց մերոց. առ զտուսեր և զկարողութիւն ի նոցանէ՝ և եաս թշնամեացն, յաղագս անպատշաճ վարուց նոցա։

Արդ զայն աշխարհակալ և զմեծ ախտասոյ սէր, իբրև զատրուկ մի անարի մեզացն՝ ձերբակալատարեալ, առաջի թագաւորին պարսից կացուցանէին. այլ Աստուած՝ որ հարկանէ և բժշկէ, որոյ

անբաւ է քաղցրութիւն մարդասիրութեանն, և ոչ ի սպառ ի վայր հարկանէ զոր իրաւէն, այլ սակաւ փորձութեամբ ներէ՝ զի գիտասցուք մեք զմեր տկարութիւնս, խնայեաց և մեծարեաց զիւրոյ պատուանդանի. ածոյց զաթոռոյ զաէրն, և արկ ի սիրտ գաղանամիտ թագաւորին Պարսից զաէր և զինամ իւրն ի վերայ եղբօր սիրելոյ. բազում դիւրութեամբ և խնամով արձակեաց զնա։

Եւ արդ զոր Աստուած պատեալ ի ձեռանէ այլազգւոյն կորզեալ եհան, որ իւրքն էին՝ ներգութեամբ և խոյտառականօք խաւարեցուցին ըզլուսաւորեան նորա և սպանին, և անջնջելի արիւն ի վերայ այնմ թագաւորութեանն հեղին։ Յայնմ հետէ բարձաւ զօրութիւն յիշխանաց և ի զինուորաց, և ոչ տուաւ յաղթութիւն այնմ թագաւորութեան. և իշխանք ներգութեամբ և մախանօք առ իրեարս կային, և զպատուաստանաց իրաւունս բարձին. միայն զաշխարհն աւերէին և ոչ փրկութիւն գործէին։ Մինչև բարկացեալ սրտմտութեամբ աէր՝ հրաւիրեաց զպզտս բազումս ի վրէժխնդրութիւն ինքեանց, ի Լուսնալերանց և ի մեծէ գետն որ անցանէ ի հիւսիսակողմն Հնդկաց, այլելեզու և չար ազգաց գալ հեղուլ իբրև զջուրս բազումս ի վերայ աշխարհաց մերոց, արկանել զհիմունս իւրեանց առ եզերբ ծովուն Ովկիանոս, և կանգնել զաթոռս իւրեանց յանդիման քաղաքին մեծի. և ընդ զամենայն աշխարհս առաքեամբ և դիակամբք, և բառնալ զկարգս և զկրօնս քրիստոնէութեան։

Բայց իբրև եառնս թագաւորն Պարսից Ալփասլան զայնքան յաղթութիւն՝ որ ի ձեռն իւր եղև, և զայդպակ երից պատերազմացն, զի զառաջինն թէպէտ անառ ծնաց Մանազկերտ՝ սակայն բազում աշխարհս սրով և գերութեամբ տապալեաց. և երկարեալ զձեռն խոզխոզմամբ սրոյ և հրակիզութեամբ ամենայն և անողոք արար. վասն այսորիկ աներկիւղ և խրոխտ մտօք գայ ընդ առաջ

թագաւորին Յունաց։ Եւ ուխտ եդեալ ի մեզ, եթէ ի բուռն արկանի՝ սիրով և պատուով արձակեմ զնա յիւր թագաւորութիւնն. և երդմամբք դաշինք հաստատեալ, զի խաղաղութիւն եղիցի ընդ Պարսից թագաւորութիւնս և ընդ Յունաց։ Բայց երբեմն եղև բարձր ի գլուխ և յայտ պատերազմիս, և զոր ինչ կամէրն՝ եղև և ի գլուխ եհաս. և յորմէ դղեայրն և պարհուրէրն՝ կապանօք առեալ էր յոտին կացուցեալ կայր երբեմն ի մէջ ի ծառայից իւրոց. յայնժամ ապա յիշեաց զդաշինն զոր եդ ընդ Աստուծոյ, և յարուցեալ նաւոյց գնա ընդ ամէն իւրմէ. և երբեմն զբարեկամ հաւատարիմ մեծարեաց գնա, և ուխտ եա ընդ նմա, թէ յայտ հետէ մի՛ եղիցի ընդ իս և ընդ քեզ խռովութիւն. այլ խաղաղութեամբ զթագաւորութիւն քո ունիցիս, և մեք զպարսկական տէրութիւնս. բայց զոր առի պատերազմաւ՝ ինձ լիցի, և այլ մի՛ արշաւեսցուք յաշխարհս ձեր. և արձակեաց գնա մեծաւ պատուով։ Յկնի այսր երբեմն եառնս եթէ դաւաճանութեամբ յիւրոց նախարարացն ըմբռնեալ եղև, և յաչխն զրկեցին, և ոչ եհաս ի թագաւորութիւնն, այլ չարչարանօք մեռաւ, լի եղև խռովութեամբ և յայտմամբ. կամէր զերծուցանել հաւատացանել, և անդէն ժամանեաց նմա մահ, և ել յաշխարհէս զկնի ամենայն երկրածնաց, ուր ի միասին են թագաւորք և տնանկք։

ԲԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՆՈՑՆ ԳՐՈՑՍ

Կարեւոր համարեցայ առ սիրելի եղբարս մեր զրով յիշեցուցանել վասն զխաուԹեան ծանուցեալ էրաց, որպէս սկիզբն եղև բանիցս ճառել զԱստուծոյ նախատխուԹիւնն, զանբաուԹիւնն՝

1. Մի օր. կաուեցաւ։

ակաւ բանիւք. Թէ որպէս արտաքոյ և աշխարհահայեաց գեղեցիկ և լուսաւոր տարրն՝ զի մինչդեռ էր կատարեալապէս լուսով, և[1] զմիջակն ունէր ճանապարհն ընթացս, երապընթաց շարժմամբ ընդ ճանապարհն ճեպէր և կիսապունդն անասուեր, զերկիր ընդ ինքեամբ ունելով, բազմաժամանակեայ մեղաց նուաճել լայնատարած պատմուճան, արկեալ զնա ինքեան. և այնպէս Թանձր պարսպել շուրջ զնովաւ, որ զանհնարին վայելուչն ճառագայթիցն արգել. և որ ոչ է ական համարձակ սեանելի՝ նուաստագոյն քան զասեղս երևեալ, միայն բոլորն երևէր. Որ ցուցանէր ինքեամբ օրինակաւ՝ զանասուեր և լուսաւոր կարգս եկեղեցւոյ խաւարաւ փակեալ. և զպայծառաւթիւն ոչուց և զճառագայթս ճանապարհի առաքինութեան, անսեանելի և աղօտիկին եղեալ: Զի յայնմ հետէ՝ զոր յառաջագոյն ասացի, յորում էր Թուական Հայոց չորեքհարիւր ութսուն և երկու, մինչև ցայժմ ուխտ սրբութեան և կարգ եկեղեցեաց քայքայեալ ապականեցան. և ոչ համբաւ խաղաղութեան կամ սեռից[2] բարեաց լսեաք. և ոչ մի արձան յաղթութեան կանգնեցաւ, և ոչ Թագաւորաց և ոչ իշխանաց: Եւ ոչ այլ միայն, նաև ոչ մարդկային կրօնաւորքն զդիմի հարկանել պատերազմսն էին. այլ սկսաք ցեալ և անզօր եղեալ, անժուժկալ և կամակոր՝ ընդ ձեռամբ Թշնամեացն արկեալք, խառնուԹեամբ և բարկութեամբ լի և պատարուն եղեւ երկիր. զի[3] ոմն առ ոմին եղև ճշմարիտ մարդարէութիւն խաւարուն նորա. զի յայնմ հետէ յարձակեցան Թշնամիք ի վերայ մեր, և զգեցան մեզ հանդերձ ոպոյ և արտութեան, և բարձաւ ուրախութիւն յաշխարհէ:

Այլ էրբ այնպիսի ապէք տարակուսանաց և

1. Երկու օր. զմիջակաւն:
2. Երկու օր. բարոյբեաւն:
3. Մի օր. և որպէս գիտում առ ոմին:

աշխարհահեծ երկունք տարածեցաւ ի վերայ ա-
մենայն երկրի, և ել հուր հարաւային և եկէկ
ղամբռա բարձուն, և զաշտարակ անմատոյց
իբրև զմոմ հալեալ սպառեաց, պակասեալ նուա-
կեցան թագաւորք և իշխանք, և յոյս ակնկալու-
թեան սպասման բարձաւ ի մէնջ։ Ալ տա-
բածեցաւ առհասարակ ի վերայ մեր բարկութեան
սրտմտութեան տեառն. զի քակեցան տունք ա-
դօթից, և օձեալ խղով սրբութեան քարինք՝ հին
սպառանից այլազգեաց արկան. և պաշտօն սրբու-
թեան բարձաւ ի միջոյ, և եղաք յայտն և ի նա-
խատինս հեթանոսաց. և մաշեցաք և կորացաք, և
յերկիր կացեան մէջք մեր. և եղաք իբրև զոակերս
ցամաքեալս, յորում ոչ գոյր յոյս չնչոյ կամ կեն-
դանութեան. և յանցանք հարց մերոց ի մեզ
լցեալ կատարեցաւ, խնդրել ի մէնջ զպարտիս
վրիժուց նախնեաց մերոց. եօթնապատիկ հա-
տուցումն ի ծոց մեր ընկալաք. վասն զի անուն
քրիստոնէութեան ի նախատինք և յայտն կատա-
կանաց համարեալ լինէր։ Զի երաւունք և գա-
տաստան բարձաւ ի մէնջ, և արտաստաց և հա-
ռաչանաց մերոց տեղի ոչ գոյր. զի բարեպաշտու-
թիւն նոցա յայն էր՝ զրկելն և կողոպտելն և սպա-
նանելն զմեզ։ Զար թուէր նոցա հարկաւոր գործան
որ զխայտառակութիւնս մեր ծածկէր, այլ յոր-
ժամ տեսանէին զմեզ մերկս և ծանակս՝ այնու
առաւել ուրախանային. զի ի բազում վշտացն՝
որ պատահէր մեզ, երիվթացեալս և խուսացեալս
իբրև առուեր շրջեաք ի վերայ երկրի գողալով և
զարհուրելով. կերակուր մեր անգօր, և ըմպելի
գառն յերկիւղէ և ի սպառնալեաց տերանց մե-
րոց. վասն զի ոչ համարէին թէ գոյ մեր Աս-
տուած յերկինս, և կամ պօղիք մեր և պատ-
ուանք աւ նա հասցեն։ Զի կամեցաւ տէր այն-
պիսի խոչտանկանօք ակել զմեզ, և հալածել և չար-
չարել, և զամենայն հասակ արկանել ընդ տան-
ջանօք. արտաքսել և մերժել զմեզ յերեսաց իւրոց

որպէս պատժապարտս և յանցաւորս. ցրուել և հեռացուցանել զմեզ ընդ ազգս օտարս, թէ թե- րևս կարասցէ զատամբակ և զանհնազանդ միտս մեր և զխաեերսին, արկանել զմեզ ի ներքոյ խրատու զատապանին իւրոյ իբրև զիծորայել յաւուրսն եղիայի, և զՕամարիա յաւուրսն եղիսէի։ Վասն զի զոյր առ նոսա մանն յուսոյ, զթագաւորացն և զիշխանացն վերակացութիւնն, և որ զան զա- տեանն վերադոյն՝ զնորհալից և զուրախարար բան մարգարէիցն, որ այսու զօրանային, և ընդ- դէմ կարէին կալ նեղութեան փորձութեանցն, զոր ընդունէին ի տեսանէ/իսկ մերս ձանրադոյն 1/1ւ/48 և առաւելադոյն է քան զամենեսեան, անթագաւոր և անիշխան, անտերունչ և անվերակացու՝ ի բաց հոգւոյ և ըստ մարմնոյ, և ոչ գոյ մի տեղի ապա- տանի զտանել մեզ. այլ նուաղեալ և հնազանդեալ եմք ի ներքոյ թագաւորութեան հեթանոսաց կալ, և զաստիկ հարուած զատապանի նոցա օր ըստ օրէ ընդունել. զի որով ոչ ձառայեցաք տեառն՝ ձառայեսցուք այլազգեաց, և որով քամահեցաք զերկիւղ տեառն, երկիւղիւ տուգանապետութ օր ըստ օրէ. և վասն զի զպաշտօն տեառն պղեր- դութեամբ մատուցաք, պաշտեսցուք և ապաստա- րեսցուք ստոյգ ի տուէ և ի գիշերի։ Զի ոչ եթէ ըստ յանցանաց մերոց խրատեաց զմեզ, այլ գը- թութեամբ և ողորմութեամբ արկ զմեզ ի բով խրատու յաղագս զգաստացուցանելոյ զմեզ և պի- տանիս առնելոյ։

Զի եթէ գիցես զմեզս մեր ի կշիռս, ձանրա- գոյն է քան զկրատ մեր՝ զոր ընկալաք ի քէն, և թեթևագոյն պատուհասք քան զպարտիս մեր. զամենայն զբօսանս տանջանաց աւրկ ի վերայ մեր, այլ յերեսաց քոց մի մերժեր, տէր. և զամենայն ալիս փորձութեան յարո՛ ի վերայ մեր, այլ ի սիրոյ քո մի՛ մերժեսցես զմեզ տէր։ Լաւ է ան- կանել ի ձեռս քո և ընդունել ի քէն խրատ և պատուհաս, քան թէ ի բաց կալ ի քէն ան-

իրատաբար. լաւ է մերձենալ ի քեզ չարչարանօք և նեղութեամբ, քան թէ հեռանալ ի քէն և կալ անզօրբութեամբ և դիւրութեամբ. շատ է մեզ այս՝ զի անուն սուրբ քո կոչեցեալ է ի վերայ մեր, համարելով զմեզ քեզ ի ժառանգութիւն, ատանալ զմեզ քեզ ժողովուրդ նորոյ ուխտիս պատուական արեամբ։ Արդ մի՛ թողուր զմեզ ի ձեռանէ քումմէ վասն արարչական կամաց քոց, զի մի՛ ի սպառ չարչարիցիմք ի հեթանոսաց յաւելեաց քոց. զի այս ամենայն և առաւելագոյն քան զդիր մատենիս եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։

6/12/48

Եւ արդ չատ համարեցաք զամենայն ձփանս աւելեկութեան գրել, որ եղև յաւուրս մեր. և մատնաւրս բաժանել, որ ինչ հանդիպեալ յանցնիւր տեղեաց, աշխարհաց և քաղաքաց, զոր ինչ կրեցաք ի հեթանոսաց։ Զի ոչ մի օր, կամ միոյ ժամանակի հանդիպեցաք անզօրբութեան կամ դիւրութեան. այլ ամենայն ժամանակ աւուրց մերոց լի եղև խռովութեամբ և նեղութեամբ. և օր ըստ օրէ յաւելոյր ևս ի չարչարանս և ի տառապանս։ Եւ ոչ զք ի նոցանէ բարեմիտ եղև առ մեզ, թէպէտ և բազում ամօք բնակեցան առ մեզ. ոչ արգելաւ սրտմտութիւնն նոցա որպէս լժի, և ոչ եղև յադուժն ազահութեան նոցա իբրև հրոյ. զի ամենայն խորհուրդք նոցա որ վասն մեր, ի չարութեան են, և բանք նոցա լի նենգութեամբ։ վասն զի ամենայն առաւօտս նորադոյն սկիզբն չարեաց առնէին. զի այն էր խորհուրդ նոցա ամենեցուն՝ մաշել և սպառել զմեզ իբրև զննացեալ ձորձա, և բառնալ զյիշատակս մեր ի միջոյ իւրեանց, զի բնաւ մի՛ հայեսցին և տեսցեն զմեզ կենդանիս. այլ եղիցին զերեզմանք մեր անհետ ի նեղբոյ ոսկից նոցա։

Վասն այնորիկ կարօտացաք հին ժամանակաց պատմութեան, զի ըստ պատշաճի և յարմարական բանիւք իւրեանց դրոշմեացեն զայս գիր

մասանն, ընդրկայից և զանցելոց զհանդիպումն
անախտապէս և մի հաւաքելով որ ինչ եղեն, թողլով
զկնի իւրեանց յիշատակս երացն՝ որ եղեն, որպէս
ցուցանէ առաջնոցն պատմագրութիւնն: Իսկ որ
առ յայսմ մասանէս գրեցան՝ ոչ լիով, այլ միայն
զակնթռիչն երացն որ եղև և անց ընդ մեզ, զի ոչ
զկատարումն երացն կարացաք բովանդակ զնուա-
ձել կամ գրել. բայց զայս ամենայն յապաղս
այնուրիկ եղաք, զի ընթերցիկք և դիտասիկք, եթէ
մեզքն եղև այս ամենայնի պատճառ որ անց ընդ
մեզ. զի հայեցեալ ընդ մեզ՝ զարհուրեսիկք երկնչել
յերեսաց տեառն. և զողալ յահէ զօրութեան նորա.
կանխել յառաջագոյն՝ խոստովանութեամբ և ա-
պաշխարութեամբ՝ վաղ ժամանել զան զչարժել
պատուհասին, և ընդդէմ կալ:

ՅԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբաա 78.
Աբխազեմ 42.
Ագաթ 47.
Ավխազեան Թագաւոր Պարսից 133.
Ախանի 118.
Ահարոն որ և Աւան 70. 87.
Աղխազոյ ագարակ 120.
Աղուանք 117.
Աղօրի աշխարհ 10. 97.
Ամիրա 33.
Անանխա 54.
Անանխաս 38.
Անդրէաս կրօնաւոր 118.
Անդրոնիկէ 23.
Անի 14. 47. 51. 52. 53. 72. 86. 97. 125. 127. 133.
Անտիոք 36. 130.
Անտիոքացիք 31.
Աշոտ 12. 13. 14. 44. 47.
Աշոտ Թագաւոր Հայոց 86.
Ապահունիք 39. 75. 117.
Ապուսուար 53. 86.
Առիմ 54.
Ասխա 52. 53.
Ասորեստանեայք 96.
Ասորիք 32. 70.
Աստւրան 78. 79.
Աստ որդի Սէնեքերիմայ 72.
Արածանի 87.
Արծն, Արծին 53. 64. 69. 74. 100. 126.
Արծակ 37.
Արծկէ 84.
Արծրունիք 27. 37.
Արձէշ կամ Արձիշ 30. 53. 74.
Արշակունիք 53. 57.
Աւան որ և Ահարոն 87.
Աւանիկ, անտառ 80.
Ախոյ 23. 25. 28. 52.
Ախորձք 10. 12. 14. 16. 25. 75.
Բաբելացիք 27.
Բաբելոն և Բաբելոնի 21. 75. 92.
Բաբերդ 78.
Բագարատ Թագաւոր Ախխազոյ 10. 12. 52.
Բագրատունի 12.
Բագրեւանդ 10.
Բազմաղբիւր որ և Գայլախաչ- ջուա 120.
Բազաամ 81.
Բաղակ 81.
Բարսեղ 36.
Բասէն և Բասեան 15. 16. 20. 22. 54. 57. 69. 80. 86. 93.
Բերկրի. 37. 74.
Բշնունիք 84.
Բիւթանացիք 130.
Բլուրս 99.
Բուլղարք 11. 36. 70. 71.
Բչին 52.
Գագիկ 12. 13. 47. 51. 52.
Գագիկ որդի Աբասայ 78.
Գալիլեացիք 56.
Գայլախաչուա 120.
Գանձակ 86.
Գեղբու 63
Գէորգ Թագաւոր Ախխազոյ 12. 14. 24. 26.
Գէորգի 14. 15. 16. 24 26 29.
Գողիաթ 83.
Գուրգեն 10. 12. 24.
Գրիգոր որդի Վասակայ 51. 70. 110.
Գրիգոր վարդապետ 13.
Գրիգորիոս լուսաւորիչ 88.
Գամսակուս 126.
Դանիէլ մարգ 35. 92.
Դաւիթ գունայի 52.
Դաւիթ մայրգ 9. 28. 42. 44. 63. 70. 83. 87. 104. 126.

Դաւթի որդի Սենեքերիմայ 52.
Դաւթի Կիւրոպաղատա 9. 23.
Դաւթի որ և Սենեքերիմ 21.
Դեմետրիկոս 36. 40.
Դերքան 77.
Դիոդէն կայսր 130.
Դօս 80.
Դոսին 52. 53. 86.
Երայեցիք 44. 104.
Եգիպտացիք 69. 106.
Եգիպտոս 27. 105.
Եդէր 126.
Եզեկիա 70.
Եզեկիէլ 15. 39. 70. 88. 107. 113.
Եկեղեայց, գաւառ 9. 39. 70. 77. 98. 108. 122.
Եզանոյ բերդ 97.
Եկեսացի Լիսան 122.
Եղեսա մարզ 63. 69. 81. 137.
Եղեսէ մարզ 113. 137.
Եղնուա 97. 110.
Եպիսկոպոսաց Եպիսկոպոս 124.
Եսայի կրօնաւոր 116.
Եսայի, նա և նաս մարզ 10 44. 46. 60. 64. 66. 69. 76. 91.
Երեմիա մարզ 17. 50. 57. 63. 76. 89. 96. 106. 116.
Երիկա 97.
Երիքով 50. 121. 126.
Երուսաղէմ 38. 39. 50. 64. 66. 67. 90.
Եսեբէ 39.
Եփրաեմ և Եփրաեմ գեղ 99. 122.
Զաքարիա Եպիսկոպոս 24.
Զոյլ 31.
Ըռաս 16.
Ըռուզք 10.
Թաղուլ 78.
Թեսալոնիկեցիք 36.
Թէսալոնիկէ 36. 37.
Թէոդոս 86
Թէոդոս 41.
Թէոդոս Թագաւոր 92.
Թէոդոս Եպիսկոպոսէն Կաթողիկոսին Սամուէլի 122.
Թէոդոսոս որդի Սհարոնի 87.
Թէոդուպօլիս 15. 130.
Թէոդուրա 39. 40.
Թոնդրակեցիք 111. 116.
Թոնդրակս 117.
Թուրքաստան 37. 54. 87. 104. 106.
Իսրայէլ և Իսրայէլացիք 25. 37. 43. 45. 56. 57. 63. 70. 88. 106.
Իվանէ որդի Լիպարտին 97.
Լիբանան 126.
Լիպարիս 70. 71. 97.
Լուսաւորիչ 13. 50. 51. 73. 113. 116.
Լուսնակերպիք 133.
Խալխիս 71.
Խաղիք 16. 57. 58. 78. 98.
Խաղոյ Աւետ 23. 54.
Խաչ, գիւղ 120.
Խաչիկ Կաթողիկոս 54. 72.
Խլաթ 87. 117.
Խլաթայ լեառն 117.
Խորձան և Խորձային 102. 109.
Խորձէն 57. 76. 102. 109.
Խրիմ, անտառ 98.
Խարիկ 37. 38.
Ծիրանիս, լեառն 93.
Ծորոխ գետ 78.
Կաթողիկէ 34.
Կամախ 108.
Կամարայ 118.
Կամենաս 53. 69.
Կաշէ. ապարակ 120.
Կապադովկիա 110.
Կարին 15. 23. 53. 55. 57. 80. 97. 99. 116.
Կարս 73.
Կաւասիկաս 37.
Կեսար 39. 41.
Կիւրակոս 46.
Կոմէր 122.
Կողնիա 108.
Կոմիանոս Իշխան 29. 103.
Կոմիանոս կայսր 29. 94. 103.
Կոմենաս կայսր 94.
Կոստանդ որ և Պոնտոմախ 41.
Կոստանդիանոս 29. 30. 31. 130.
Կոստանդին 28. 29. 44. 46. 86.
Կոստանդնուպօլիս 11. 21. 25. 28. 30. 32. 36. 54. 72. 86. 116.

Կռվիտա 75.
Կաւնծիկ աբեղայ 117.
Հաբէլ 9. 112:
Հալա 31.
Հայք 9. 12. 19. 26. 34. 38. 44. 46. 47. 48. 50. 53. 54. 57. 70. 72. 73. 76. 78. 86. 88. 92. 116. 127. 131. 135.
Հանձէթ 76. 102.
Հաշտենք 47. 57. 97.
Հալք 10. 39. 87. 111.
Հաւաճիչ 10. 97.
Հէր, գաւառ Հայոց 26. 130.
Հերման. լեառն 63.
Հերովպէս 124.
Հնդիկ 133.
Հոպեփեռնէս 83.
Հռոմոս 19.
Հռոմք և Հռոմայ 9. 11. 12. 14. 16. 19. 20. 21. 22. 25. 30. 31. 33. 34. 35. 37. 47. 48. 69. 73. 78. 83. 88. 94. 97. 104. 107. 108. 109. 110. 124.
Հռասխմ 10.
Հռովմայեցիք 43.
Հրանոյշ 110. 117.
Հրեայք 43. 70. 90.
Ղազարոս 107.
Ձանէթ անուանք 75. 98.
Մակեաս քեղդ 21.
Մանասկերտ 10. 74. 80. 131. 133.
Մանանապէ 39. 98. 61. 102. 117.
Մանէակ 33. 41. 117. 122. 124.
Մանկան գոմ 87.
Մանուասեր 83.
Մարխամ 123.
Մելսինէ 51. 104. 108. 194.
Միսայէլ, կայսր 35. 46. 104.
Միսայէլ, կայսր այլ 94.
Միջագետք 102.
Մնոմախ, կայսր 41. 85. 92.
Մովաբ 106.
Մովաբացիք 25.
Մովսէս Խորենացի 27. 43. 63. 65. 83. 105. 106. 118.
Մորթանս 109.
Մուհարկեն 117.
Յակոբ, առաքեալ 112.
Յակոբոս, Եպիսկոպոս 111.
Յայէլ 83.
Յապաբէլ 63. 65.
Յենովք վարդապետ 13.
Յեսու 121. 132.
Յոբ 17.
Յոյնք 21. 44. 49. 51. 52. 86. 96. 116. 129. 130. 131. 134.
Յովհաննէս, առաքեալ
Յովհաննէս, եպիսկ. Աշխատայ 13. 44. 47.
Յովհաննէս մկրտիչ 31.
Յովհաննէս վարդապետ Կոչեցեալ 13. 19.
Յովսէփ, նահապետ 57. 112.
Յեսէփ, վարդապետ 13. 112.
Յովրամ 25.
Յուդայ 90.
Յուդայ, մաճառի 50.
Նաւտվէթ 64.
Նեառն 38.
Նէրսէի քեղդ 128.
Նիկիայիք 28.
Նիկատոմ 30.
Նինուէացիք 58
Շահիկ 14.
Շիրակ 47.
Շիրի 117.
Ոզիա 83.
Ոսկիանոս 133.
Որսիլմեզ 82.
Ուխտք կամ Ուխտիք 11. 12. 16.
Ուռհա 33.
Պալհաւ 47.
Պախրա, լեառն 120.
Պաղակացիս, ծովակ 16.
Պառեկիմանոս 30.
Պարխար 75.
Պարսիկք, և Պարսք 14. 21. 24. 26. 29. 37. 38. 49. 57 58. 67. 78, 85. 86. 87. 92. 94. 96. 97. 104. 107. 109. 110. 127. 129. 130. 131. 132. 133. 134.
Պետրոս, առաքեալ 50. 113.
Պետրոս, Կաթուղիկոս 15. 18. 19. 51. 52. 53. 72.

Պիհառոնացիք 65.
Պիսատոս 56.
Պոնտոս 18. 20.
Պողոս, առաքեալ 43. 104. 120.
Ջերմայ 121.
Ոչառնիք 130.
Ոսբոսամ 94.
Ոսմանոս, կայսր 30. 31. 33. 34. 36.
Աալմա 33.
Աղբարա 22. 24. 25.
Աամարիա 137.
Աամուէլ, կաթողիկոս 121. 122.
Աամուէլ, վարդապետ 13.
Աամուտոս 33. 52.
Աամփոն 33. 52. 114.
Անաստունք, լեառն տես Սիմն
Աառա 88.
Աարգիս 47. 51.
Աարգիս, կաթողիկոս 12. 13. 15. 19. 116.
Աարգիս, վարդապետ 13.
Աաւուղ 43. 47. 70.
Աեաւ լեառն 31. 91.
Աեաւ քար 54.
Աեբատոիա 22.
Աեբատուպօլիս 72.
Աելով 10.
Աենեքերիմ 52. 72.
Աեւանայ կղզի 13.
Աեքարացիք 64.
Աիմն, լեառն 75. 110.
Աիմոն Նեբքինի 30.
Աիոն 66.
Աիսակ 57.
Աիսար 83.
Աքսում որ և Յովհաննէս 12. 13. 14.
Աքսումայ քերդ 61.
Ամբակում լեառն 54. 63.
Ամոմ 67.
Ամոմացիք, Ամոմայեցիք 107.
Ամոմն խմաստուն 28. 85. 119. 126.
Ամուր Գրիգոր, եկեղեցի
Ամուր Կարապետ
Ամրամաւ 47.
Ամբր 57.
Ամեփաննոս Տարօնեցի 13.
Վահրամ 3. 47. 51. 53.
Վաղարշակերտ և Վաղարշակերտ 15. 24.
Վաղարշաւան 54.
Վան 130.
Վանանդ 16. 78.
Վասակ 51. 110.
Վասիլ Իշխան 84.
Վասիլ, կայսր 9. 12. 21. 26. 29. 30. 84. 85.
Վասպուրական 29. 37. 54. 70.
Վարդ Ամիկարան 21. 25.
Վիրք 14. 21. 27. 30. 49. 71.
Վռվէս 118. 119. 122. 124.
Տաբէլ 10.
Տայան 69.
Տայք 9. 10. 12. 16. 20. 57. 78.
Տարենաւա 72. 73.
Տարօն և Տարօն 13. 57. 87. 110.
Տիրան 13.
Տուարտծոյ ստափ
Փարաւան 55.
Փերա 22. 23. 83.
Փոկաս 20. 21.
Փորակ 16.
Փռանկք 78.
Քաբէր 83.
Քերփամէ 81.
Օկոմի 16. 93.
Օրմանեան 36.